

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻԳՐԱՅԻՈՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հանա Կաբեղեովա, Արմեն Մազմանյան, Արա Երեմյան

2007 թ.

*Սույն փաստաթղթում արտահայտված կարծիքները, մեկնաբանություններն ու
եզրակացությունները հեղինակներինն են, և պարտադիր չէ, որ դրանք համընկնեն ԵԱՀԿ-ի կամ
ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի կարծիքներին:*

ՆԱԽԱԲԱՆ.....	4
ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ.....	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	10
I. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....	12
1. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ.....	12
1.1 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ.....	12
1.2 ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ.....	19
2. ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.....	23
2.2 ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ՄԿԶՐՈՒՆՔՆԵՐ.....	25
3. ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼԸ ԵՎ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ.....	29
3.2 ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ.....	35
4. ԵԼՔԸ.....	39
5. ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐ.....	43
6. ՀԱՇՎԱՌՈՒՄ.....	47
7. ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ.....	48
8. ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄ.....	52
II. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱ.....	56
9. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ.....	56
10. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ.....	56
11. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ.....	57
11.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....	58
12. ԱՐՏԱԳՆԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ.....	60
12.1 «ԱՐՏԱԳՆԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ.....	62
12.2 «ԱՐՏԱԳՆԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՆԵՐԿԱՅԻՄ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.....	65
13. ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ.....	65
13.1 ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐԸ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....	67
14. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ.....	68
III. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....	72
15. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.....	72
15.1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏ.....	72

15.2. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԵԽԻԱՅԻ	
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....	73
IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	76
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	77
ՀԱՎԵԼՎԱԾ 1	81

ՆԱԽԱԲԱՆ

1990-ականների սկզբից, երբ Խորհրդային Միության և նրա տնտեսության փլուզումը, ինչպես նաև սահմանների պատշաճ հսկողության բացակայությունը Հայաստանի բնակչության քառասուն արտագաղթի պատճառ դարձան, միգրացիոն վերահսկողությունը եղել և մնում է Հայաստանի նորանկախ հանրապետության գերակա խնդիրներից մեկը: Հումանիտար ծանր վիճակով պայմանավորված արտագաղթն, ի վերջո, վեր է ածվել հիմնականում տնտեսական միգրացիայի և հասել այնպիսի ծավալների, որ արտասահմանում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների դրամական փոխանցումները Հայաստան կարևոր դեր են խաղում հանրապետության տնտեսական կյանքում և զարգացման մեջ:

Մեր օրերում, երբ երկիրը վերականգնվում է, անհրաժեշտ է մշակել այնպիսի քաղաքականություն, որը չի արգելում աշխատուժի շարժը և, միևնույն ժամանակ, ցանկացողներին ընձեռում է հայրենիք վերադառնալու հնարավորություն: Այս խնդիրներն արդյունավետ լուծելու համար անհրաժեշտ է վերլուծել ներկայիս իրականությունն ու զարգացման միտումները, և այդ վերլուծությունը պետք է հիմնված լինի ընդհանրապես միգրացիայի և մասնավորապես՝ տնտեսական կամ աշխատանքային միգրացիայի վերահսկողության հետ կապված իրավիճակի խորը և մանրամասն ըմբռնման վրա:

Սույն հետազոտության խնդիրն է մեկ անգամ ևս գնահատել միգրացիային առնչվող օրենսդրությունը Հայաստանում՝ վերլուծելով և մատնանշելով այդ ոլորտում բացերը և առաջարկելով օրենսդրությունը կատարելագործելու այնպիսի եղանակներ, որոնք արդեն փորձարկվել են այլ երկրներում և որոնցից հնարավոր է դասեր քաղել:

2006 թվականի սկզբին հրապարակվել են 2002-2005 թվականներին Հայաստանից աշխատանքային միգրացիայի ուսումնասիրության արդյունքները¹: Սույն հետազոտությունում իրականացվել է իրավիճակի վերլուծություն և ներկայացվել են առաջարկություններ միգրացիայի և աշխատանքային միգրացիոն գործընթացների արդյունավետ վերահսկողության, ինչպես նաև անկանոն միգրացիայի դեմ պայքարի վերաբերյալ: Այն օգտակար կարող է լինել ոչ միայն աշխատանքային միգրացիայի վերաբերյալ ներդաշնակ քաղաքականություն և ռազմավարություն մշակողներին, այլ նաև գիտնականներին, միջազգային կազմակերպություններին, ՀԿ-ներին և պոտենցիալ միգրանտներին՝ իրողությունը ճիշտ գնահատելու և համապատասխան խնդիրների հնարավոր լուծումներ գտնելու առումով:

¹ Այդ հետազոտությունը կատարել էր "Առաջատար սոցիալական տեխնոլոգիաներ" հասարակական կազմակերպությունը՝ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ: Աշխատությունում, մասնավորապես, ուսումնասիրվել էին գործազրկությունը, տնային տնտեսությունների եկամուտները, վերջին տարիներին աշխատանքային միգրացիայի ծավալները, ուղղություններն ու միտումները, պատճառները և հետևանքները Հայաստանի համար:

ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Սույն ուսումնասիրության նպատակն է ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում միջազգային միգրացիայի խնդիրներին վերաբերող ինստիտուցիոնալ և իրավական դաշտը կատարելագործելու հնարավոր ուղիները՝ հատուկ ուշադրություն դարձնելով աշխատանքային միգրացիային: Սույն աշխատությունը հիմնված է ՀՀ կառավարության գերակա խնդիրների վրա, որոնք մատնանշված են 2004 թ. "Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգում"²: Վերլուծությունն անդրադառնում է երեք հիմնական խնդիրների՝

ա/ Հայաստանից և դեպի Հայաստան միգրացիոն հոսքերի վերահսկողություն և սահմանների հսկողության ներդաշնակեցում միջազգային չափանիշներին,

բ/ աշխատանքային միգրացիա,

գ/ տվյալների հավաքում, պաշտպանվածություն և մոնիտորինգ:

Զեկույցում ներկայացված է նաև տարբեր երկրների, մասնավորապես Չեխիայի Հանրապետության, փորձը, որտեղ վերջին տարիներին միգրացիոն ռեժիմը ենթարկվել է բարեփոխումների:

Միջազգային միգրացիայի և պետական սահմանների վերահսկողություն:

Միջազգային միգրացիան կարգավորող հայաստանյան օրենսդրությունը մեկ առանձին իրավական ակտում չի ամփոփված: Միգրացիայի տարբեր ասպեկտներ կարգավորվում են մի շարք օրենքներով և կառավարության որոշումներով: Այդ օրենքներից ամենակարևորը, թերևս, "Օտարերկրացիների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքն է³, որը կարգավորում է օտարերկրացիների՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու և բնակվելու, Հայաստանի

² Տես՝ <http://www.dmr.am/ORENSD%7E1/kargavormanhajetc.HTM>

³ Տես՝ ՀՀՊՏ 24.01.07./6(530) Հոդ.109: "Օտարերկրացիների մասին" ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 25-ին, ՀՀ նախագահի կողմից ստորագրվել է 2007 թվականի հունվարի 16-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի փետրվարի 3-ից: "Օտարերկրացիների մասին" ՀՀ օրենքն ուժի մեջ մտելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվել «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 1994 թվականի հունիսի 17-ի ՀՕ-110 օրենքը: Տես՝ ՀՀԳԽՏ 1994/12 և փոփոխությունները՝ ՀՀՊՏ 31.10.01./33(165) Հոդ.802, ՀՕ-231:

Հանրապետության տարածքով տարանցիկ երթևեկելու, Հայաստանի Հանրապետությունից ելքի, ինչպես նաև օտարերկրացիների հետ կապված այլ հարաբերություններ:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են օտարերկրացիների աշխատանքային իրավահարաբերությունների առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում: Մակայն, ՀՀ քաղաքացիների աշխատանքը արտասահմանում և դրա հետ կապված միգրացիայի խնդիրը ներկայումս գործող իրավական ակտերից և ոչ մեկում համակողմանիորեն և ուղղակիորեն արձարժված չեն, թեև այդ մասին որոշ, հաճախ անուղղակի նշումներ կարելի է գտնել Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքում⁴ և «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում⁵:

Սույն աշխատությունում քննարկվում է այն հարցը, թե բավարար է, արդյոք, միգրացիային վերաբերող համակարգում ժողովրդավարական վերահսկողության չափը և չի՞ կարող, արդյոք, գործող համակարգում թափանցիկության պակասը իշխանության չարաշահման պատճառ դառնալ:

Միջազգային միգրացիայի տարբեր ասպեկտներով զբաղվում են մի շարք պետական մարմիններ, սակայն այդ մարմինների պարտականությունները երբեմն համընկնում են:

Հետազոտության արդյունքում առաջարկվում է վարչական համակարգի կառուցվածքի երկու հնարավոր տարբերակ, որոնք հիմնված են Եվրամիության անդամ երկրների փորձի վրա: Առաջին տարբերակ. ստեղծել հատուկ պետական մարմին, որը պատասխանատու կլինի միջազգային միգրացիայի ոլորտում բոլոր գործողությունների համակարգման համար: Երկրորդ տարբերակ. մանրամասն և հստակ տարանջատել միջազգային միգրացիայի ոլորտում գործող բոլոր մարմինների պարտականությունները և մշակել ստանդարտացված, թափանցիկ ընթացակարգեր⁶:

Ինչ վերաբերում է երկիր մուտք գործելու և երկրում կացության ռեժիմներին, ապա նշվում է, որ սահմանապահների կարգավիճակի հստակեցումը կարևոր է պետական սահմանի արդյունավետ պաշտպանության համար: Շատ երկրներում սահմանապահ ծառայությունը ապառազմականացված և լիովին քաղաքացիական է, իսկ մի շարք այլ երկրներում, ինչպես և Հայաստանում, սահմանների պաշտպանությունը դրված է զինված ուժերի կամ ազգային անվտանգության ծառայությունների վրա: Մինչդեռ, սահմանապահների ապառազմականացումը կամ քաղաքացիականացումը խրախուսվում է միջազգային հանրության կողմից՝

⁴ Տես՝ ՀՀՊՏ 21.12.04./69(368) Հոդ.1385

⁵ Տես՝ ՀՀՊՏ 07.12.05./75(447) Հոդ.1427: «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ է մտել 2006թ. հունվարի 1-ից:

⁶ Սույն ուսումնասիրության մեջ մանրամասն ներկայացված է, թե ինչպես է երկրորդ տարբերակը ներդրվել Չեխիայի Հանրապետությունում:

համաձայն միջազգային լավագույն չափանիշների: «Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի» (այսուհետ՝ ICMPD⁷) համաձայն, անվտանգության սահմանումը աստիճանաբար հեռանում է անվտանգության ռազմականացված սահմանումներից և մոտենում անձի անվտանգության գաղափարին: Որպես ռազմական համակարգեր ստեղծված սահմանների պաշտպանության համակարգերը հսկայական վերափոխության են ենթարկվում: Շատ երկրներում խորհրդային տեսք ունեցող սահմանային գոտիներն արդեն ապամոնտաժվել են, իսկ համակարգերը ապառազմականացվում են: Այդ փորձն առաջարկվում է քննարկել և գնահատել ու արդյունքում ձգտել ամբողջությամբ ապառազմականացնել սահմանապահ ծառայությունը:

Ցանկալի է նաև, որ սահմանապահները հատուկ վերապատրաստում անցնեն միգրացիային առնչվող հարցերով: Այդպիսի դասընթացները պետք է կազմակերպվեն վերապատրաստման կարիքներն ու առկա կարողությունները գնահատելուց հետո:

Հեղինակների կարծիքով խրախուսելի չէ երկրից մեկնող ՀՀ քաղաքացիներից այսպես կոչված «ելքի վիզա» պահանջելը: Անձնագիրը և ինքնությունը հաստատող ազգային քարտը մեկ փաստաթղթի մեջ համատեղելու հայաստանյան պրակտիկան չի համապատասխանում ճամփորդական փաստաթղթերի համար սահմանված միջազգային պահանջներին: Այդ պրակտիկան կարող է սահմանափակել մարդկանց ազատ տեղաշարժի իրավունքը:

Հեղինակները մանրամասն անդրադառնում են «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի այն դրույթներին, որոնցում արձարժվում է օտարերկրյա քաղաքացիների հաշվառման խնդիրը և ներկայացված է, թե ով պետք է հաշվառվի և որ պետական մարմնում:

Աշխատանքային միգրացիա

Հայաստանում օտարերկրացիների աշխատանքային միգրացիան կարգավորող «Օտարերկրացիների մասին» օրենքն ապահովում է ներդաշնակ քաղաքականություն վարելու հնարավորություն: Կարգավորված չէ, սակայն, ՀՀ քաղաքացիների արտագնա աշխատանքը: Այդ կարգավորմանը կարող է նպաստել «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագիծը որպես օրենք ընդունելը:

«Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագիծը նախատեսում է արտասահմանում աշխատանքի տեղավորման ծրագրում մասնավոր ընկերությունների ներգրավում՝ լիցենզավորման միջոցով:

⁷ Տես՝ ICMPD, «Սահմանների վերահսկողությունը նոր եվրոպական միջավայրում (2001 թ.): ICMPD-ն կազմակերպություն է, որը զբաղվում է մի շարք երկրներում սահմանների կառավարման և միգրացիային առնչվող այլ խնդիրներով:

Հեղինակները պաշտպանում են այնպիսի ընթացակարգերի սահմանումը, որոնք աշխատանքի տեղավորման մասնավոր ընկերություններին հնարավորություն կընձեռեն հենց սկզբից մասնակցելու նման ծրագրին: Դրան հասնելու համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում:

Անհրաժեշտ է մտածել արտասահմանից ուղարկվող դրամական փոխանցումներին վերաբերող համապարփակ քաղաքականություն մշակելու մասին՝ առավելագույնի հասցնելով միգրացիայի օգուտները: Այդ քաղաքականությունը պետք է ներառի ֆինանսական կազմակերպություններին և միգրանտներին ներկայացվող պահանջների կարգավորումը և այդ պահանջների պատշաճ կիրառման համար անհրաժեշտ կարողությունների ընդլայնման միջոցառումներ, ինչպես նաև դրամական փոխանցումների ֆորմալացումը:

Ընդհանուր առմամբ, աշխատանքային միգրացիայի մասով զեկույցը Հայաստանի պատկան մարմիններին առաջարկում է քննարկել «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագիծը և այդ նախագիծով նախատեսված կառուցակարգերի ստեղծումը:

Տվյալների պաշտպանություն

Տվյալների հավաքագրումն ու մոնիտորինգը սերտորեն կապված են միջազգային միգրացիայի վերահսկողության հետ, քանի որ դրանք ճիշտ քաղաքականություն մշակելու անհրաժեշտ նախապայմաններ են: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով սահմանվել են միգրացիային վերաբերող տվյալների պաշտպանության այնպիսի կառուցակարգեր, ինչպիսիք պահանջում է «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքը⁸, թեև ակնհայտ է, որ դրանք պետք է մանրամասնվեն կառավարության համապատասխան կարգերում: Դա կկանոնակարգի անհատական տվյալների՝ ոստիկանությունում վարվող բազայի տվյալներից այլ պատկան մարմինների օգտվելու իրավասությունը: Թերևս ճիշտ կլիներ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում նախատեսել այդ դրույթը:

ՀՀ կառավարությանն առաջարկվում է քննության առնել «Անհատական տվյալների ավտոմատացված մշակման հարցում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի⁹ ստորագրման և վավերացման հարցը:

Անհատական տվյալների պաշտպանությունը ներկայումս տվյալների միջպետական փոխանակման նախապայմանն է: Այդ խնդիրը հատկապես կարևոր է աշխատանքային միգրանտների, մուտքի արտոնագրի վերաբերյալ քաղաքականության, ապօրինի միգրանտների կամ վտարված անձանց մասին տվյալների փոխանակման հարցերում: Տվյալների պաշտպանության մասին

⁸ Տե՛ս՝ ՀՀՊՏ 14.11.02./49(224) Հոդ.1149, ՀՕ-422-Ն , ՀՀՊՏ 28.06.06./33(488) Հոդ.708 ՀՕ-95-Ն

⁹ Տե՛ս՝ <http://conventions.coe.int/Treaty/rus/Treaties/Html/108.htm> Конвенция о защите частных лиц в отношении автоматизированной обработки данных личного характера, СДСЕ № : 108

իրավական դաշտի թերի լինելը կարող է Հայաստանի մեկուսացման պատճառ դառնալ, ինչը կվտանգի անկանոն միգրացիայի նվազեցմանն ուղղված ջանքերը:

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Միջազգային միգրացիան անխուսափելիորեն լուրջ խնդիրներ է առաջացնում ծագման, նշանակետ կամ տարանցման երկրների համար: Այդ խնդիրները բարդ են և ներառում են միգրանտների մարդու իրավունքների պաշտպանություն, միգրացիայի ոլորտում պարտականությունների հստակ բաժանում, միգրանտների վերաբերյալ տվյալների հավաքագրում և կառավարում, ինչպես նաև պայքար մարդկանց տրաֆիկինգի դեմ: Այդ կարգի հարցերը հաճախ հանրային թեժ քննարկումների առիթ են դառնում և լուրջ պետական հսկողություն են պահանջում:

Սույն ուսումնասիրության կառուցվածքը հիմնված է ՀՀ կառավարության կողմից 2004 թ. հունիսին ընդունված «Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգում» նկարագրված սկզբունքների և գերակա խնդիրների վրա, որոնցից են

- Հայաստանից և դեպի Հայաստան միգրացիայի վերահսկողության ապահովումը, սահմանների կառավարման կատարելագործումը և համապատասխանեցումը միջազգային չափանիշներին,
- Հայաստանի քաղաքակիրթ ինտեգրումը միջազգային աշխատաշուկային, աշխատանքային միգրանտների իրավունքների և օրինական շահերի պետական պաշտպանությունը,
- Հայաստանից անկանոն միգրացիայի կանխումը, և օգնությունը արտասահմանում գտնվող հայ անկանոն միգրանտներին՝ կամավոր վերադարձի և վերաինտեգրման հարցում,
- Սփյուռքի համայնքների հետ հարաբերությունների հաստատումը և զարգացումը, հայրենադարձությունը խրախուսող միջոցառումների մշակումը և իրականացումը,
- Հայաստանում միգրացիայի հետ կապված իրավիճակի մոնիթորինգի և վերլուծության համար անհրաժեշտ տվյալների բազայի ստեղծումը¹⁰:

Սույն զեկույցը պատրաստելու համար մանրամասն ուսումնասիրվել է Հայաստանի օրենսդրությունը և հարցազրույցներ են անցկացվել մի շարք պետական պաշտոնյաների և միգրացիայի հարցերով փորձագետների հետ¹¹:

¹⁰ ՀՀ կառավարության նիստի արձանագրություն, Որոշում թիվ 24, 24 հունիսի, 2004թ.

Հայեցակարգում նշված են նաև հետևյալ գերակա խնդիրները՝ Հայաստանից մարդկանց ապօրինի տեղափոխման և թրաֆիկինգի կանխարգելում և զոհերի պաշտպանությանն ուղղված քայլերի ձեռնարկում, իրենց երկրներում հումանիտար ծանր պայմանների պատճառով Հայաստանում հայտնված օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության համակարգի հետագա կատարելագործում, Հայաստանում երկար ժամանակ ապրող փախստականների և հարկադիր միգրանտների ինտեգրման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, հարկադիր միգրանտների՝ դեպի Հայաստան հնարավոր զանգվածային հոսքերի կանխատեսման համար անհրաժեշտ միջոցների մշակում և իրականացում:

¹¹ Հարցազրույց տված անձանց ցուցակը ներկայացված է Հավելված I-ում:

Հայաստանի միգրացիոն օրենսդրության հնարավոր բացերը հայտնաբերելու համար օգտակար է եղել նաև Հայաստանի և այլ երկրների, մասնավորապես՝ Չեխիայի Հանրապետության իրավական և վարչական կառուցակարգերի համեմատությունը: Այս վերլուծությունը կենտրոնացած է կամավոր, «ոչ-հարկադրված» միգրացիայի վրա, ուստի այն չի ներառում փախստականներին կամ տեղահանված անձանց վերաբերող խնդիրները:

I. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բնակչության միգրացիայի պետական կարգավորման 2004 թ. հայեցակարգի համաձայն, միգրացիայի ոլորտում ՀՀ կառավարության գերակա խնդիրներից են արտագաղթի և ներգաղթի վերահսկողության ապահովումը և սահմանների կառավարման համապատասխանեցումը միջազգային չափանիշներին¹²: Միգրացիայի վերահսկելիությունը պայմանավորված է պատմական, սոցիալ-տնտեսական և աշխարհագրական բազմաթիվ գործոններով: Այդ գործոններով պայմանավորված կառավարության հետևողական քաղաքականությունը կարող է զգալիորեն կատարելագործել միգրացիոն գործընթացները: Սույն հետազոտությունը բաժանված է հետևյալ թեմաներին՝ համապատասխանող երեք հիմնական մասերի՝

ա) օտարերկրացիների մուտքը, ելքը և կացությունը ՀՀ տարածքում կարգավորող օրենսդրական դաշտը և երկրից մեկնող ՀՀ քաղաքացիներին վերաբերող ռեժիմը,

բ) օրենսդրության պահանջների կատարմանն ուղղված վարչական դաշտը և միջոցառումների արդյունավետությունը,

գ) միգրացիոն գործընթացների մոնիտորինգ (ներառյալ՝ տվյալների վերլուծություն) և իրավական արձագանք միգրացիոն խախտումներին:

1. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

1.1 ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը հռչակում է, որ «Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը»¹³: Հայաստանը ստանձնել է տարբեր միջազգային պարտավորություններ, որոնցից ամենանշանակալիները Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ), Եվրոպայի խորհրդի և Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) շրջանակներում ստանձնած պարտավորություններն են:

1.1.1. Միավորված ազգերի կազմակերպություն

¹² Տես՝ «Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգը Հայաստանի Հանրապետությունում», Մաս 3, կետ 1:

¹³ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հոդված 6, 3-րդ մաս:

Հայաստանը միացել է մարդու իրավունքների մասին ՄԱԿ-ի հիմնական կոնվենցիաներին, որտեղ անդրադարձ կա միգրացիոն խնդիրներին և որոնք նվազագույն պայմաններ են երաշխավորում ոչ քաղաքացիների և միգրանտների համար: Այդ պայմանագրերն են՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային Դաշնագիրը»¹⁴, իր Կամրնտիր արձանագրությամբ¹⁵, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային Դաշնագիրը»¹⁶, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան»¹⁷, «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիան»¹⁸ և «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան»¹⁹: Այս կոնվենցիաներով սահմանված իրավունքներից են՝ որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող յուրաքանչյուր մարդու՝ այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու իրավունքը, ցանկացած երկրից, այդ թվում՝ սեփականից, մեկնելու իրավունքը, քաղաքացիության իրավունքը, և որևէ այլ պետությանը հանձնված չլինելու իրավունքը, եթե նրան այնտեղ խոշտանգումների վտանգ է սպառնում²⁰:

1.1.2. Եվրոպայի խորհուրդ /ԵԽ/

Հայաստանը Եվրոպայի խորհրդի անդամ է դարձել 2001 թ. հունվարի 25-ին և վավերացրել կամ միացել է ԵԽ-ի 50-ից ավելի պայմանագրերի: Միջազգային միգրացիայի տեսանկյունից առավել կարևոր են հետևյալ կոնվենցիաները.

¹⁴ Տես՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու: Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում կնքված պայմանագրեր: ՀՀ ԱԳՆ պ/տ, N 4(12), 20.12. 2004թ., էջ 64-78: Դաշնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ. սեպտեմբերի 23-ից:

¹⁵ Տես՝ նույնը. ՀՀ ԱԳՆ պ/տ, N 4(12), 20.12. 2004թ. N 4(12), 20.12.2004թ., էջ 79-81: Կամրնտիր արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ. սեպտեմբերի 23-ից:

¹⁶ Տես՝ նույնը. ՀՀ ԱԳՆ պ/տ, N 4(12), 20.12. 2004թ. էջ 82-90: Դաշնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ. դեկտեմբերի 13-ից:

¹⁷ Տես՝ նույնը. ՀՀ ԱԳՆ պ/տ, N 4(12), 20.12. 2004թ. էջ 53-63: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ. հուլիսի 23-ից:

¹⁸ Տես՝ նույնը. ՀՀ ԱԳՆ պ/տ, N 4(12), 20.12. 2004թ. էջ 116-126: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ. հոկտեմբերի 13-ից:

¹⁹ Տես՝ նույնը. ՀՀ ԱԳՆ պ/տ, N 4(12), 20.12. 2004թ. էջ 127-143: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ. հուլիսի 22-ից:

²⁰ Տես՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, (1966 թ.), Հոդված 12: «Խոշտանգումների դեմ կոնվենցիա» (1984 թ.), Հոդված 3: «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա» (1989 թ.), Հոդված 3:

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (Պայմանագիր 005)²¹
- Հանձնման մասին եվրոպական կոնվենցիան (CETS 024)²²
- Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան (CETS 157)²³:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան շատ կարևոր իրավական փաստաթուղթ է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, քանի որ դրանով հիմնադրվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ)²⁴: Եվրոպայի խորհրդի որևէ անդամ-պետության իրավասության ներքո գտնվող ցանկացած անձ, այդ թվում միգրանտները, իրավունք ունեն դիմելու ՄԻԵԴ:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան պարունակում է միջազգային միգրացիային առնչվող այլ դրույթներ ևս: Կոնվենցիայի 3-րդ հոդվածը արգելում է խոշտանգումները կամ անմարդկային վերաբերմունքը, 6-րդ հոդվածը երաշխավորում է արդար դատաքննության իրավունքը, այդ թվում մեղադրյալի՝ իրեն հասկանալի լեզվով մեղադրանքի մասին տեղեկացված լինելու իրավունքը: Կոնվենցիայի 13-րդ հոդվածը երաշխավորում է նույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքների ու ազատությունների խախտման դեպքում պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը: Իսկ 14-րդ հոդվածը երաշխավորում է, որ Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները տարածվում են բոլորի վրա, առանց որևէ խտրականության, այդ թվում՝ անկախ ծննդից և այլ կարգավիճակներից, որոնց մեջ կարող են հայտնվել միգրանտները կամ քաղաքացիություն չունեցող անձինք²⁵:

Հայաստանը միացել է նաև Կոնվենցիայի արձանագրություններին, որոնցից մի քանիսը միգրացիային առնչվող լրացուցիչ դրույթներ են պարունակում: Չորրորդ արձանագրությունը երաշխավորում է ազատ տեղաշարժի իրավունքը, արգելում է օտարերկրացիների կոլեկտիվ արտաքսումը և հայտարարում, որ ազատ տեղաշարժվելու և ազատորեն բնակության վայր ընտրելու իրավունքները կարող են սահմանափակվել միայն պետական անվտանգության կամ հասարակական

²¹ Տես՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու: Եվրոպայի խորհրդի շրջանակներում կնքված պայմանագրեր: ՀՀ ԱԳՆ պ/տ, N 5(13), 20.12. 2004թ., էջ 25-39:

Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002թ. ապրիլի 26-ից:

²² Տես՝ նույնը. ՀՀ ԱԳՆ պ/տ, N 5(13), 20.12. 2004թ., էջ 53-62: Կոնվենցիան Հայաստանի

Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002թ. ապրիլի 25-ից:

²³ Տես՝ նույնը. ՀՀ ԱԳՆ պ/տ, N 5(13), 20.12. 2004թ., էջ 110-116: Կոնվենցիան Հայաստանի

Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1998թ. նոյեմբերի 1-ից:

²⁴ Տես՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա» (Եվրոպական պայմանագիր, սերիա 005), Հռոմ, 1950թ.:

²⁵ Նույնը, Հոդվածներ 3, 6, 13 և 14: Թարգմանչի անվճար ծառայություններից օգտվելու իրավունքը պահպանվում է նաև դատավարության ողջ ընթացքում, եթե մեղադրյալը չի կարող հասկանալ կամ խոսել դատարանում գործավճի լեզվով:

կարգուկանոնի պահպանության պես լուրջ նկատառումներով²⁶: Յոթերորդ արձանագրությունը նախատեսում է օտարերկրացիների արտաքսմանը վերաբերող ընթացակարգային երաշխիքներ²⁷:

Հանձնման մասին Եվրոպական կոնվենցիան կարգավորում է մեկ անդամ-երկրից որևէ այլ անդամ-երկիր մարդկանց հանձնման պայմանները և հանձնման համար հիմք հանդիսացող հանցագործությունները: Ուստի այն կարևոր իրավական փաստաթուղթ է այն միգրանտների համար, ովքեր կարող են մեղադրվել հանցագործությունների համար՝ ինչպես այն պետությունում, որտեղ գտնվում են, այնպես էլ այլ երկրներում: Այս կոնվենցիան թույլ է տալիս հանձնումն այն քրեական հանցագործությունների դեպքում, որոնք պատժվում են ավելի քան մեկ տարվա ազատազրկմամբ, սակայն սահմանափակում է հանձնումը քաղաքական կամ ռազմական հանցագործությունների, կամ էլ համաներման տակ ընկնող հանցագործությունների դեպքում: Անդամ-պետությունները կարող են հրաժարվել սեփական քաղաքացիներին հանձնելուց: Կոնվենցիան 2001 թ. ստորագրելիս, Հայաստանն իրեն վերապահել է այդ իրավունքը²⁸:

Հայաստանում միգրացիայի տեսանկյունից կարևոր է Եվրոպայի խորհրդի՝ 1995 թվականի փետրվարի 1-ին Ստրասբուրգում ստորագրված «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան»: Դա, ընդհանուր առմամբ, ազգային փոքրամասնությունների պաշտպանությանը վերաբերող առաջին բազմակողմ միջազգային փաստաթուղթն է, որը օրենքի ուժ ունի և որի կատարումը պարտադիր է²⁹: Շրջանակային կոնվենցիան «ազգային փոքրամասնության» սահմանումը թողնում է անդամ-պետություններին, սակայն 16-րդ հոդվածի հստակ ձևակերպումները պահանջում են, որ պետությունները ձեռնպահ մնան այնպիսի քայլերից, որոնք փոփոխում են ազգային փոքրամասնությունների կողմից բնակեցված տարածքներում բնակչության տոկոսային հարաբերությունը, կամ էլ ուղղված են սույն Կոնվենցիայից բխող իրավունքների սահմանափակմանը:

2005 թ. մայիսի 16-ին Հայաստանը ստորագրել է, բայց դեռ չի վավերացրել «Մարդկանց առևտրի դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան³⁰:

²⁶ Տե՛ս՝ ՀՀ ԱԳՆ պ/տ, N 5(13), 20.12. 2004թ. էջ 42-44: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 4-րդ Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002թ. ապրիլի 26-ից: Տե՛ս՝ նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիա և արձանագրություններ», Արձանագրություն 4: Տե՛ս՝ նաև Протокол N 4 к Конвенции о защите прав человека и основных свобод "Об обеспечении некоторых иных прав и свобод помимо тех, которые уже включены в Конвенцию и Протокол N 1 к ней" (Страсбург, 16 сентября 1963 г.) <http://www.echr.ru/documents/doc/>

²⁷ Նույնը, ՀՀ ԱԳՆ պ/տ, N 5(13), 20.12. 2004թ. էջ 47-49: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 7-րդ Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002թ. հուլիսի 1-ից: Տե՛ս՝ նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիա և արձանագրություններ», Արձանագրություն 7: Տե՛ս՝ նաև Протокол N 7 к Конвенции о защите прав человека и основных свобод (Страсбург, 22 ноября 1984 г.) <http://www.echr.ru/documents/doc/>

²⁸ Տե՛ս ՀՀ ԱԳՆ պ/տ, N 5(13), 20.12. 2004թ. էջ 61:

²⁹ Տե՛ս՝ նաև <http://conventions.coe.int/Treaty/rus/Treaties/Html/157.htm>

³⁰ Տե՛ս՝ <http://conventions.coe.int/Treaty/EN/Treaties/Html/197.htm>

Կոնվենցիայի նպատակն է պաշտպանել թրաֆիկինգի գոհերի իրավունքները և խրախուսել թրաֆիկինգի դեմ պայքարում միջազգային համագործակցությունը՝ ինչպես ազգային, այնպես էլ անդրազգային մակարդակներով³¹: Կոնվենցիայում հիմնական շեշտը դրվում է թրաֆիկինգի գոհերի պաշտպանությանը և նրանց աջակցելուն, սակայն այն անդրադառնում է նաև միգրացիային առնչվող առանձին խնդիրների: Այդ խնդիրներից են մարդկանց անկանոն տեղաշարժի կանխարգելումն ու սահմանների վերահսկողությունը, ինչը ներառում է նաև յուրաքանչյուր Կողմի պարտավորությունը՝ տարածել տեղեկատվություն օրինական ճանապարհով երկիր մուտք գործելու և երկրի տարածքում օրինական կարգով մնալու պայմանների մասին³²: Թրաֆիկինգի կանխարգելման և բացահայտման համար Կոնվենցիան կարևորում է սահմանների վերահսկողության ուժեղացումը, ուղևորների ճամփորդական փաստաթղթերի առկայության ստուգումները առևտրային տրանսպորտային ընկերությունների կողմից, ինչպես նաև սահմանային վերահսկողություն իրականացնող մարմինների միջև համագործակցության սերտացումը³³: Կողմերի տրամադրած ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի ապահովությունն ու հսկողությունը միգրացիոն վերահսկողության ևս մի միջոց է, որը նշված է Կոնվենցիայի 8-րդ հոդվածում: Թրաֆիկինգի գոհերի՝ նշանակետ երկրի աշխատաշուկա մուտք ունենալու իրավունքն ամրագրված է Կոնվենցիայի 12-րդ հոդվածում: Կացության կարգավիճակներին վերաբերող 14-րդ հոդվածում նշված է երկարաձգման ենթակա կացության կարգավիճակներ ստանալու նրանց իրավունքը: Կոնվենցիայի 16-րդ հոդվածի համաձայն, գոհերի հայրենադարձությունը/ վերադարձը և վերաինտեգրումը իրենց ծագման երկրում պետք է կազմակերպվի նշանակետ և ծագման երկրների միջև սերտ համագործակցության պայմաններում: Համապատասխան պետական մարմիններին, միջազգային կազմակերպություններին ու ՀԿ-ներին ընդգրկող հայրենադարձության ծրագրերը պետք է արտացոլվեն Կողմերի օրենսդրության մեջ³⁴:

1.1.3. Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ)

ԱՊՀ շրջանակներում Հայաստանը միացել է միգրացիային վերաբերող հետևյալ համաձայնագրերին՝ 1994 թ. ապրիլի 15-ին Մոսկվա քաղաքում կնքված «Աշխատանքային միգրացիայի և աշխատանքային միգրանտների սոցիալական պաշտպանության ոլորտներում համագործակցության մասին»³⁵ և 1998 թ. մարտի

³¹ Տե՛ս՝ «Մարդկանց առևտրի դեմ պայքարի մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա (2005 թ.), Գլուխ I:

³² Նույնը, Գլուխ II, Հոդված 5, կետ 4:

³³ Նույնը, Հոդված 7, կետ 1-6:

³⁴ Նույնը, Հոդված 16, կետ 5:

³⁵ Տե՛ս՝ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու: Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում կնքված պայմանագրեր: ՀՀ ԱԳՆ պ/տ, N

6-ին Մոսկվա քաղաքում կնքված «Անօրինական միգրացիայի դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցություն մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրերին³⁶:

«Աշխատանքային միգրացիայի և աշխատանքային միգրանտների սոցիալական պաշտպանության ոլորտներում համագործակցության մասին» 1994 թ. ԱՊՀ համաձայնագիրը ընդհանուր քաղաքական փաստաթուղթ է, որի մեջ բացակայում են այնտեղ բարձրացված խնդիրներին վերաբերող կարևոր իրավական մանրամասներ կամ իրականացման կառուցակարգեր:

Աշխատանքային միգրացիայի մասին 1994 թ. ԱՊՀ համաձայնագրից հետո Հայաստանը ստորագրել է երկկողմ համաձայնագրեր Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Ուկրաինայի և Բելառուսի հետ, որոնք վերաբերում են այդ երկրների տարածքում աշխատող քաղաքացիների սոցիալական պաշտպանությանը³⁷: Սակայն իրականում այդ համաձայնագրերից ոչ մեկը չի գործում, և ոչ միայն այն պատճառով, որ հետևողականորեն չի կիրառվել, այլ նաև այն պատճառով, որ դրանցից ոչ մեկը չի թարմացվել և չի արտացոլում այդ երկրների օրենսդրությունում շարունակ կատարվող փոփոխությունները:

«Անօրինական միգրացիայի դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին»

3(11), 20.12. 2004թ. էջ 229-233: Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1996թ. փետրվարի 26-ից:

³⁶ Տես՝ նույնը. ՀՀ ԱԳՆ պ/տ, N 3(11), 20.12. 2004թ. էջ 485-491: Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1999թ. հուլիսի 20-ից: Տես՝ նաև «Աշխատանքային միգրացիայի և աշխատանքային միգրանտների սոցիալական պաշտպանության մասին» Մոսկվայի համաձայնագիր, Մոսկվա, 1994 թ. և «Ապօրինի միգրացիայի դեմ պայքարում ԱՊՀ երկրների միջև համագործակցության մասին» համաձայնագիր, Մոսկվա, 1998 թ.:

³⁷ 1.Տես՝ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու: ՀՀ ԱԳՆ պ/տ, գիրք 1, N 1(1), 12.06. 2002թ. էջ 367-369: 1994թ. հուլիսի 19-ին Երևանում ստորագրված Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Ռուսաստանի Դաշնության տարածքում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատող Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին: Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1994թ. հուլիսի 19-ից:

2.Տես՝ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու: ՀՀ ԱԳՆ պ/տ, գիրք 1, N 1(1), 12.06. 2002թ. էջ 644-648: 1995թ. հունիսի 17-ին Կիևում ստորագրված Համաձայնագիր Հայաստանի կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև՝ իրենց պետությունների սահմաններից դուրս աշխատող Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին /ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 1997թ. մարտի 4-ի N-169-1 որոշմամբ/: Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1997թ. մարտի 12-ից:

3.Տես՝ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու: ՀՀ ԱԳՆ պ/տ, գիրք 3, N 3(3), 12.06. 2002թ. էջ 235-239: 2000 թ. հուլիսի 19-ին Միոսկոյում ստորագրված Համաձայնագիր ՀՀ կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև՝ իրենց պետությունների սահմաններից դուրս աշխատող քաղաքացիների ժամանակավոր աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին: Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2001թ. մայիսի 24-ից:

1998 թ. ԱՊՀ համաձայնագիրը ուշադրություն է դարձնում սահմանների հսկողության, անկանոն միգրանտների վերադարձի, տեղեկությունների և գործընկեր-երկրների ազգային օրենսդրության փոխանակման հարցերին, ինչպես նաև ազգային օրենսդրության ներդաշնակեցմանը միջազգային պարտավորությունների հետ: Այդ համաձայնագրի որոշ դրույթներ գործնականում կիրառվել են: Օրինակ, ընդունվել է անկանոն միգրանտների և անդամ-երկրների տարածք մուտք գործելու իրավունք չունեցող անձանց մասին ընդհանուր տվյալների բազայի կանոնադրությունը³⁸: Մի շարք խնդիրներ, որոնք բարձրացված են Համաձայնագրի մեջ, դեռ լուծման կարիք ունեն: Դա հատկապես վերաբերում է ազգային օրենսդրության փոխանակմանը: Այս գործընթացի խոչընդոտներից մեկն այն է, որ անկանոն միգրացիայի դեմ պայքարին վերաբերող շատ իրավական փաստաթղթեր դեռ թարգմանված չեն ռուսերեն:

1.1.4. Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ)

Հայաստանը վավերացրել է նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ)՝ աշխատանքային միգրացիային կամ դրան առնչվող այլ խնդիրներին վերաբերող հետևյալ կարևոր միջազգային փաստաթղթերը.

□ 2005 թ. հոկտեմբերի 3-ին ՀՀ նախագահը ստորագրել է ԱՄԿ «Զբաղվածության համար միգրացիայի մասին» 1949 թ.-ի թիվ 97 վերանայված կոնվենցիան (կից հայտարարությամբ)³⁹: Այս կոնվենցիան սահմանում է նորմատիվային դաշտի հիմքերը:

□ 2005 թ. հոկտեմբերի 3-ին ՀՀ նախագահը ստորագրել է «Միգրանտ աշխատողների մասին կոնվենցիան. Լրացուցիչ դրույթներ» 1975 թ., (C 143)⁴⁰: Այս կոնվենցիան սահմանում է աշխատանքային միգրացիային առնչվող ազգային օրենսդրության և պրակտիկայի հիմքերը:

Աշխատանքի միջազգային կազմակերպության այս երկու կոնվենցիաները պահանջում են, որ պետություններն ակտիվորեն խրախուսեն աշխատանքի ընդունման արդար պրակտիկան և սոցիալական գործընկերների հետ թափանցիկ խորհրդակցությունները, բացառեն խտրականությունը և հավասար վերաբերմունք ցուցաբերեն տվյալ երկրի քաղաքացիների և կանոնավոր աշխատանքային

³⁸ Տես՝ «Ապօրինի միգրացիայի դեմ պայքարում ԱՊՀ երկրների միջև համագործակցության մասին» համաձայնագիր, Հոդված 7:

³⁹ Տես՝ ՀՀՊՏ 26.10.05./ 67(439). Հոդ. 1251, Ն-213-3, «Զբաղվածության համար միգրացիայի մասին» 1949 թ.-ի թիվ 97 վերանայված կոնվենցիա (կից հայտարարությամբ): Թիվ 97 վերանայված կոնվենցիայի 15-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան Հայաստանի Հանրապետությունը հայտարարել է, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է կիրառել այդ կոնվենցիայի և դրա բոլոր հավելվածների դրույթներն առանց փոփոխությունների Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

⁴⁰ Տես՝ ՀՀՊՏ 26.10.05./67(439) Հոդ. 1250, «Միգրանտ աշխատողների մասին կոնվենցիա. Լրացուցիչ դրույթներ» 1975 թ., (C 143) Ն-212-3: Այն Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2005 նոյեմբերի 5-ից:

միգրանտների նկատմամբ՝ սոցիալական ապահովությունից օգտվելու, աշխատանքային պայմանների հետ կապված և այլ հարցերում:

1.1.5. Դեռևս չվավերացրած կարևոր միջազգային փաստաթղթեր

□ Հայաստանը դեռևս չի վավերացրել ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի՝ աշխատանքային միգրացիային կամ դրան առնչվող այլ խնդիրներին վերաբերող հետևյալ կարևոր միջազգային փաստաթղթերը՝ «Աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիան⁴¹, որն ուժի մեջ է մտել 2003 թ.-ի հուլիսի 1-ից: Այս կոնվենցիան պարունակում է աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքի անդամների՝ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության մասին դրույթներ, հատուկ ուշադրություն դարձնելով կոնկրետ խնդիրներին, որոնք վերաբերում են իրենց երկրից դուրս, օտար երկրներում աշխատող մարդկանց:

□ Եվրոպայի խորհրդի՝ 1977 թվականի նոյեմբերի 24-ին Ստրասբուրգում ստորագրված «Աշխատանքային միգրանտների իրավական կարգավիճակի մասին» եվրոպական կոնվենցիան: Սույն կոնվենցիայի դրույթները հիմնված են այն սկզբունքի վրա, որ «Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների քաղաքացի հանդիսացող աշխատանքային միգրանտների իրավական կարգավիճակը պետք է կարգավորվի այնպես, որ կենցաղային և աշխատանքային բոլոր պայմանների առումով նրանց նկատմամբ վերաբերմունքը, հնարավորին չափ, լինի ոչ պակաս շահեկան, քան ընդունող պետության քաղաքացիների նկատմամբ վերաբերմունքը»⁴²: Կոնվենցիայի մեջ արձարծվում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ապագա աշխատանքային միգրանտներին աշխատանքի ընդունումը, ելքի և մուտքի իրավունքը, աշխատանքային պայմանագրերը, աշխատանքի թույլտվությունը, ընտանիքի վերամիավորումը, խնայողությունների փոխանցումը, սոցիալական ապահովությունը, եկամուտների հարկումը, վերադարձը հայրենիք և այլն:

1.2 ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Հայաստանը չունի միգրացիոն բոլոր խնդիրները կարգավորող համապարփակ օրենք: Մինչև 2007 թ. օտարերկրացիների միգրացիայի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվային բազան հնացած էր և բազմաթիվ կարգավորումներում չէր համապատասխանում միջազգայնորեն ընդունված և արդյունավետ գործարկվող մոդելներին ու ՀՀ

⁴¹ Տես՝ International Convention on the Protection of the Rights of All Migrant Workers and Members of Their Families (U.N. Doc. A/45/49 (1990)) http://www.ilo.org/public/english/employment/skills/hrdr/instr/un_9.htm

⁴² Տես՝ Европейская конвенция о правовом положении рабочих-мигрантов СДСЕ №:093, <http://conventions.coe.int/Treaty/rus/Treaties/Html/093.htm>, Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1983 թ. մայիսի 1-ից: Տես՝ նաև «Աշխատանքային միգրանտների իրավական կարգավիճակի մասին» եվրոպական կոնվենցիա, Ներածություն:

Սահմանադրության առանձին դրույթների: Միգրացիայի տարբեր ոլորտներ կարգավորվում են առանձին օրենքներով ու կառավարության որոշումներով: Հաճախ այդ օրենքները շատ խնդիրներ թողնում են իրականացնող պաշտոնյաների հայեցողությանը, ինչը հարց է առաջացնում միգրացիոն խնդիրների նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության հնարավորության և արդյունավետության մասին:

Միգրացիոն ամենակարևոր խնդիրներն են՝

- ☐ մուտքի արտոնագրերի, երկիր մուտք գործելու և երկրում կացության իրավական կարգավորումը,
- ☐ քաղաքացիության իրավական կարգավորումը,
- ☐ ՀՀ քաղաքացիների կարգավիճակի իրավական կարգավորումը արտերկրում,
- ☐ փախստականների և քաղաքական ապաստանի իրավական կարգավորումը,
- ☐ աշխատանքային միգրացիայի իրավական կարգավորումը :

Մուտքի արտոնագրերի, երկիր մուտք գործելու և երկրում կացության խնդիրները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով⁴³: Այս օրենքի համակարգակառուցվածքային վերլուծությունը, ինչպես նաև համեմատական-իրավական վերլուծությունը նախկինում գործող «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» 1994 թվականի հունիսի 17-ի ՀՕ-110 ՀՀ օրենքի հետ⁴⁴ վկայում է, որ 2006 թվականի օրենքը պարունակում է ավելի ժամանակակից մոտեցումներ երկիր մուտքի և կացության հարցերում և հիմնված է այդ խնդիրներին վերաբերող հիմնական միջազգային չափանիշների վրա: Մուտք գործելու և ելքի հետ կապված մի շարք խնդիրներ, ինչպես նաև անձնագրերի և կացության փաստաթղթերի տրամադրման խնդիրները, կարգավորվում են «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությամբ»⁴⁵: **Քաղաքացիության խնդիրը** կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության

⁴³ Տես՝ "Օտարերկրացիների մասին" ՀՀ օրենքը, որի նախագիծը մշակվել է ի կատարումն ՀՀ կառավարության 25.02.02 թ. «ՀՀ կառավարության 2002 թվականի աշխատանքային ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 173 որոշմամբ հաստատված ցանկի 259-րդ կետի: Մինչ այդ գործող «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» ՀՀ 1994 թվականի հունիսի 17-ի ՀՕ-110 օրենքը այլևս չէր համապատասխանում ժամանակակից միջազգային պահանջներին եւ չափանիշներին:

⁴⁴ Տես՝ ՀՀԳԽՏ 1994/12, ուժը կորցրած «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» 1994 թվականի հունիսի 17-ի ՀՕ-110 ՀՀ օրենքը:

⁴⁵ Տես՝ ՀՀՊՏ 31.12.98./33(66), «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում N 821, 25 դեկտեմբերի, 1998՝ որը փոփոխվել է ՀՀ կառավարության 31.10.1999թ. N 544 /ՀՀՊՏ 03.09.99./24(90)/, 16.06.2001թ. N 536 /ՀՀՊՏ 04.07.01./19(151) Հոդ.493/, 19.12.2002թ. N 1887-Ն /ՀՀՊՏ 18.12.02./56(231) Հոդ.1322/ որոշումներով:

մասին» ՀՀ օրենքով⁴⁶: 2005 թվականին փոփոխված ՀՀ Սահմանադրությունից հանվել է ՀՀ քաղաքացիների երկքաղաքացիությունն արգելող դրույթը⁴⁷: Փոփոխված Սահմանադրության համապատասխան հոդվածը մանրամասներ չի ներկայացնում և բաղկացած է ընդամենը մեկ նախադասությունից. «Երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով»: Երկքաղաքացիության իրավական կարգավորումը սահմանված է վերը նշված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում:

Հատուկ ընթացակարգեր են նախատեսված «ՀՀ քաղաքացիության մասին օրենքի կիրարկման միջոցառումների վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշման մեջ⁴⁸:

ՀՀ քաղաքացիների կարգավիճակը արտերկրում կարգավորվում է «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքով⁴⁹: **Փախստականների և քաղաքական ապաստանի** խնդիրը կարգավորվում է «Փախստականների մասին»⁵⁰ և «Քաղաքական ապաստանի մասին»⁵¹ ՀՀ օրենքներով: Փախստականներին վերաբերող տարբեր ընթացակարգեր են սահմանված կառավարության մի շարք որոշումներում, օրինակ՝ «Փախստականների ազատ տեղաշարժի և բնակություն հաստատելու կարգի մասին» կամ «Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ հայցողի վկայական տալու կարգը հաստատելու մասին»⁵² ՀՀ կառավարության որոշումներում: **Ներքին և արտաքին աշխատանքային միգրացիայի խնդիրն** վերաբերող համապարփակ օրենսդրական փաթեթ դեռ գոյություն չունի: Օտարերկրացիների աշխատանքային միգրացիայի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվել են «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով: Աշխատանքային օրենսգրքում և Զբաղվածության մասին օրենքում կան միգրացիային վերաբերող որոշ դրույթներ: «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագիծը հիմնական գործիքն է, որն, ընդունվելուց հետո, պետք է կարգավորի Հայաստանից դուրս աշխատանքային միգրացիան: Միգրացիոն օրենսդրության կատարման կանոններն ամրագրված են մի շարք տարբեր օրենսգրքերում, այդ թվում՝ «ՀՀ

⁴⁶ Տես՝ ՀՀԱԺՏ 1995/8, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենք՝ ՀՀՊՏ 15.12.97./28 ՀՕ-157, ՀՀՊՏ 13.11.99./28(94) ՀՕ-5, ՀՀՊՏ 28.04.01./12(144) Հոդ.287 ՀՕ-157, ՀՀՊՏ 26.04.02./13(188) Հոդ.266 ՀՕ-313, ՀՀՊՏ 24.12.03./62(297) Հոդ.1229 ՀՕ-33-Ն, ՀՀՊՏ 14.03.07./15(539) Հոդ.317 ՀՕ-33-Ն օրենքներով կատարված լրացումներով և փոփոխություններով:

⁴⁷ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հոդված 30.1:

⁴⁸ Տես՝ «ՀՀ քաղաքացիության մասին օրենքի կիրարկման միջոցառումների վերաբերյալ» ՀՀ կառավարության 25.06.1996 N 192 որոշում՝ ՀՀ կառավարություն 07.11.2002 N 1623-Ն որոշմամբ կատարված լրացումներով, ՀՀՊՏ 06.11.02./47(222) Հոդ.1099:

⁴⁹ Տես՝ ՀՀԱԺՏ 1996/11, «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենք՝ 27.12.1997 ՀՕ-171 օրենքով կատարված փոփոխություններով, ՀՀՊՏ 11.01.98./1

⁵⁰ Տես՝ ՀՀՊՏ 01.04.99./8(74), «Փախստականների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-288՝ 05.03.2001 ՀՕ-152 օրենքով /ՀՀՊՏ 11.04.01./11(143) Հոդ.238/, 19.03.2002 ՀՕ-314 օրենքով / ՀՀՊՏ 2002/13 (188)/, 03.03.2004 ՀՕ-49-Ն օրենքով կատարված լրացումներով և փոփոխություններով:

⁵¹ Տես՝ ՀՀՊՏ 31.10.01./33(165) Հոդ.800, ՀՕ-229 «Քաղաքական ապաստանի մասին» ՀՀ օրենք:

⁵² Տես՝ ՀՀՊՏ 23.07.01./23(155) Հոդ.534, ՀՀ կառավարության 04.07.2001 N 594 որոշում

քրեական օրենսգրքում», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում» և «Քրեական դատավարության օրենսգրքում»: Միգրացիայի մյուս ասպեկտները կարգավորված են «Լեզվի մասին»⁵³, «Պետական տուրքի մասին»⁵⁴, «Պետական սահմանի մասին»⁵⁵, «Սահմանապահ զորքերի մասին»⁵⁶, «Լիցենզավորման մասին»⁵⁷, « Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդությունների կանխարգելման մասին»⁵⁸, «Անհատական տվյալների մասին»⁵⁹ և «Օտարերկրյա ներդրումների մասին»⁶⁰ ՀՀ օրենքներով:

Միգրացիայի խնդիրներին վերաբերող ՀՀ օրենսդրության յուրահատկությունը կայանում է նրանում, որ բազմաթիվ ընթացակարգային և վարչական գործընթացների սահմանումը վերապահված է ենթաօրենսդրական իրավական ակտերին, այդ թվում՝ կառավարության որոշումներին, նախագահի հրամանագրերին կամ տարբեր կառավարական գործակալություններ կամ հանձնաժողովներ ստեղծող կանոնադրություններին:

Հայաստանի միգրացիոն օրենսդրության հետ կապված խնդիրներից մեկը նաև այն է, թե որքանով է այդ օրենսդրությունը ենթակա բավարար ժողովրդավարական վերահսկողության: Օրենքի նախագծերը անցնում են մի քանի լսումներ Ազգային ժողովում և քննության են առնվում տարբեր հանձնաժողովներում, սակայն կառավարության որոշումները և ենթաօրենսդրական այլ ակտերը (օրինակ՝ պետական մարմիններ ստեղծող կանոնադրությունները) այդպիսի մանրամասն քննության չեն արժանանում: Ուստի, գործող համակարգում կա թափանցիկության պակաս : Պետական տարբեր մարմինների պարտականությունների ոչ հստակ բաժանումը նույնպես նրանց թույլ է տալիս ինքնուրույն սահմանել իրենց իրավասության շրջանակը, որը հաճախ համընկնում է այլ մարմինների իրավասության շրջանակի հետ:

⁵³ Տես՝ ՀՀԳԽՏ 1993/8 «Լեզվի մասին» ՀՀ օրենք, 17.04.1993, ՀՕ-52 և ՀՀՊՏ 08.06.05 /35(407). Հոդ.632, 03.05.2005 ՀՕ-95-Ն:

⁵⁴ Տես՝ ՀՀՊՏ 11.01.98./1, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, 27.12.1997, ՀՕ-186, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի ինկոռպորացիան 2007 թ. ապրիլի 7-ի դրությամբ տես՝ <http://www.laws.am/> կայքում:

⁵⁵ Տես՝ ՀՀՊՏ 25.12.01./41(173) Հոդ.999, «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենք, 20.11.2001, ՀՕ-265

⁵⁶ Տես՝ ՀՀՊՏ 25.12.01./41(173) Հոդ.1000, «Սահմանապահ զորքերի մասին» ՀՀ օրենք, 20.11.2001, ՀՕ-266:

⁵⁷ Տես՝ ՀՀՊՏ 08.08.01./26(158) Հոդ.581, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, 30.05.2001, ՀՕ-193, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի ինկոռպորացիան 2007 թ. ապրիլի 7-ի դրությամբ տես՝ <http://www.laws.am/> կայքում:

⁵⁸ Տես՝ ՀՀՊՏ 28.02.97./3, «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենք, 03.02.1997, ՀՕ-103, օրենքի ինկոռպորացիան 2007 թ. ապրիլի 7-ի դրությամբ տես՝ <http://www.laws.am/> կայքում:

⁵⁹ Տես՝ ՀՀՊՏ 14.11.02./49(224) Հոդ.1149, «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենք, 08.10.2002, ՀՕ-422-Ն, տես՝ նաև «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, 23.05.2006, ՀՕ-95-Ն

⁶⁰ Տես՝ ՀՀԳԽՏ 1994/14, Օտարերկրյա ներդրումների մասին, 31.07.1994, ՀՕ-115: Օրենքում կատարված փոփոխությունները տես՝ ՀՀՊՏ 30.10.00./24(122) ՀՕ-86 և ՀՀՊՏ 31.01.07./8(532) Հոդ.167, ՀՕ-66-Ն:

Պետք է նշել, որ միայն հիմնական օրենքներից բխող բազմաթիվ մանրամասները ենթաօրենսդրական ակտերին թողնելու պրակտիկան, որպես կանոն, նախորդում է կենսունակ, արդյունավետ իրավական և վարչական համակարգի ձևակերպմանը: Այդուհանդերձ, թեև այդ մոտեցումը կարող է կարճաժամկետ կտրվածքով արդյունավետ լինել, պետք է գիտակցել հստակ իրավական դաշտ մշակելու, ժողովրդավարական վերահսկողություն սահմանելու և լիազորություններն ու պատասխանատվությունները հստակ սահմանելու և տարանջատելու անհրաժեշտությունը:

2. ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Թեև միջազգային միգրացիային առնչվող խնդիրների համար վարչական պատասխանատվությունը, որպես կանոն, բավականին բարդ գործընթաց է (նույնիսկ Եվրամիության զարգացած երկրներում), Հայաստանի վարչական համակարգը հատկապես խրթին է: Միգրացիոն խնդիրների վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավասությունը կամ թերի է սահմանված, կամ էլ բաժանված է տարբեր մարմինների միջև, ինչը շփոթեցնող է: Այդ մանդատների կարգավիճակն ու սահմանները պարզելն ինքնին կարող է դժվար գործ լինել:

2.1. Ինստիտուցիոնալ համակարգի ակնարկ

Ստորև ներկայացված են այն հիմնական մարմինները, որոնք մասնակցում են Հայաստանում միջազգային միգրացիայի հետ կապված հարցերի վերաբերյալ վարչական որոշումներ կայացնելուն, կամ էլ իրենց կարգավիճակով պատասխանատու են այդ հարցերի համար.⁶¹

- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (Աշխատանքի և զբաղվածության վարչություն, Զբաղվածության ծառայություն)՝ աշխատանքային միգրացիա⁶²,
- Տարածքային կառավարման նախարարություն՝ միգրացիայի վերահսկողության քաղաքականության մշակում և դրա իրականացման համակարգում, աշխատանքային միգրացիայի պետական քաղաքականության մշակում և կազմակերպում⁶³,
- Միգրացիոն գործակալություն (ներկայումս՝ ՀՀ Տարածքային կառավարման նախարարության կառուցվածքում (համաձայն

⁶¹ Այս ցանկում ներկայացված են միգրացիոն խնդիրներով զբաղվող հիմնական մարմինները, թեև այլ մարմիններ կամ վարչություններ նույնպես զբաղվում են միգրացիայի հետ կապված որոշ հարցերով:

⁶² Տես՝ ՀՀՊՏ 11.12.02./54(229) Հոդ.1282, Կառավարության որոշում N 1823-Ն, 14.11.2002, Հավելված 1, որի 8-րդ կետը խմբ. 09.03.06 N 301-Ն որոշմամբ: Քաղվածքը տես՝ սույն աշխատության Հավելված 4-ում:

⁶³ Տես՝ ՀՀՊՏ 17.06.05./38(410), Հոդ. 712, Կառավարության որոշում N 633, 19 մայիսի 2005.

Հավելված 1. Տարածքային կառավարման նախարարության կանոնադրություն, կետ 7: Քաղվածքը տես՝ սույն աշխատության Հավելված 2-ում:

կառավարության N 633-Ն որոշման, 19 մայիսի 2005)՝ միգրացիայի կարգավորմանն ու փախստականների խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում⁶⁴,

- Արտաքին գործերի նախարարություն (իրավաբանական վարչություն, հյուպատոսական վարչություն, միգրացիայի բաժին)՝ մուտքի արտոնագրերի և անձնագրերի տրամադրում, հարաբերություններ արտասահմանում գտնվող հայերի հետ,
- Սահմանապահ ծառայություն (Կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայություն)՝ սահմանների կառավարում և հսկողություն,
- Վիզաների և անձնագրային բաժին (ՕՎԻԲ)⁶⁵, գտնվում է Կառավարությանն առընթեր ՀՀ Ոստիկանության կազմում՝ անկանոն միգրացիա, սահմաններում մուտքի արտոնագրերի տրամադրում, երկրի տարածքում գտնվող օտարերկրացիների հաշվառում, ՀՀ քաղաքացիների ելքի արտոնագրի տրամադրում /անձնագրի վավերացում/
- ՀՀ Նախագահի աշխատակազմ՝ քաղաքացիության շնորհում:

Գործնականում պարզ չէ, թե որն է տարբեր մարմինների պարտականությունների միջև էական բաժանումը: Հաճախ, տարբեր մարմիններ պնդում են, որ իրենք են պատասխանատու այս կամ այն միգրացիոն խնդիրների համար, ինչը կարող է հանգեցնել բյուրոկրատական քաշքշուկների և անարդյունավետության: Առավել մեծ խառնաշփոթը, կարծես, տիրում է Աշխատանքի և սոցիալական հարցերի և Տարածքային կառավարման նախարարությունների միջև, քանի որ երկուսն էլ պնդում են, որ պատասխանատու են աշխատանքային միգրացիայի խնդիրների համար: Տարածքային կառավարման նախարարության կանոնադրությունում նշված է, որ նախարարությունն այն գործադիր մարմինն է, որը պատասխանատու է միգրացիայի վերաբերյալ ՀՀ քաղաքականության իրականացման, աշխատանքային միգրացիայի և փախստականների խնդիրների համար⁶⁶: Մինչ այդ, կառավարության ընդունած միգրացիոն հայեցակարգը, գործողությունների ծրագիր մշակելու և հայեցակարգի դրույթների իրականացումը կազմակերպելու իրավասությունը դրել էր Միգրացիայի և փախստականների վարչության վրա⁶⁷: Խառնաշփոթն էլ ավելի է

⁶⁴ Տես՝ նույնը. ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի N 633-Ն որոշման Հավելված N 2, կետ 2. Տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի առանձնազված ստորաբաժանումներ, Հավելված N 3, Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության կանոնադրություն, Մաս III, Գործակալության գործառնությունները: Քաղվածքը տես՝ սույն աշխատության Հավելված 3-ում:

⁶⁵ ՕՎԻԲ-ը ռուսերեն հապավում է «отдел виз и регистрации»:

⁶⁶ Տես՝ Կառավարության որոշում N 633, 19 մայիսի 2005. Հավելված. Տարածքային կառավարման նախարարության կանոնադրություն, կետ 7:

⁶⁷ Տես՝ Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգ, 25 հունիսի 2004: Միգրացիայի կարգավորման պետական ծրագրի ընդունմանը նվիրված նիստի արձանագրություն, Դրույթ 2:

խորացել «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» օրենքի պատճառով, որում նշվում է, որ արտագնա աշխատանքի կարգավորման համար պետք է պատասխանատու լինի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը⁶⁸:

Նմանատիպ տարաձայնություններ կան նաև այլ խնդիրների շուրջ: Օրինակ՝ մուտքի արտոնագրեր տալու պարտականությունը բաժանված է Արտաքին գործերի նախարարության և Ոստիկանության (նախկին Ներքին գործերի նախարարության) միջև: Իրավասությունների այս համընկնումն ակնհայտ է «Օտարերկրացիների մասին» օրենքում, որի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «Օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա տալիս են օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունները կամ հյուպատոսական հիմնարկները, իսկ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում կամ անհրաժեշտության դեպքում նաև Հայաստանի Հանրապետության տարածքում՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը, ինչպես նաև արտաքին գործերի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը»⁶⁹:

Որոշ հարցերում պարտականությունների բաժանումն ավելի հստակ է: Օրինակ, քաղաքացիության հարցերում հիմնական որոշում կայացնողը ՀՀ նախագահն է: Նա է որոշում՝ շնորհել՝ քաղաքացիություն, թե՞՝ դադարեցնել այն, ինչպես նաև սահմանում է քաղաքացիության վերաբերյալ դիմումների քննարկման կարգը⁷⁰:

2.2. ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Քննարկման է արժանի վարչական համակարգի կառուցվածքի երկու հնարավոր տարբերակներից մեկի ընդունման հարցը, որոնք հիմնված են եվրոպական փորձի վրա: Այդ մոդելներից յուրաքանչյուրի հիմքում այն գաղափարն է, որ անհրաժեշտ է փորձել պահպանել հայեցակարգային բաժանումը միգրացիոն քաղաքականության համակարգման և դրա իրականացման համար պատասխանատու մարմինների միջև:

Մոդել 1. Համակարգման կենտրոնացված մարմին

Առաջին մոդելն առաջարկում է հատուկ օրենքով կամ կառավարության որոշմամբ ստեղծել պետական մի մարմին, որը պատասխանատու պիտի լինի

⁶⁸ Տե՛ս՝ «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» օրենք, Հոդվածներ 14 և 15, 2-րդ մաս :

⁷⁰ Տե՛ս՝ «Քաղաքացիության մասին» օրենք, Հոդված 26:

Հայաստանի միջազգային միգրացիոն քաղաքականության մշակման և իրականացման միջոցառումների համակարգման համար: Իհարկե, տրամաբանական է, որ միգրացիոն քաղաքականության իրականացման համար պատասխանատու պիտի լինեն մի քանի տարբեր մարմիններ, սակայն այլ մարմինների աշխատանքը համակարգելը, ինչպես նաև օրենսդրական դաշտում քաղաքական որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ նյութեր պատրաստելը առաջին մոդելով առաջարկվում է ներառել կենտրոնացված այդ մարմնի պարտականությունների մեջ: Այս մոդելը հաջողությամբ կիրառվում է Բելգիայում, որտեղ միջազգային միգրացիայի և երկրում գտնվող օտարերկրացիների համար պատասխանատու է իմիգրացիոն վարչությունը, որը և հանդես է գալիս որպես կենտրոնացված մարմին: Այս մոդելը, կարծես, առավել մոտ է Հայաստանում այսօր գործող մոդելին:

Մոդել 2. Իրավասությունների թափանցիկ և մանրամասն բաժանում

(Չեխիայի Հանրապետության օրինակը)

Երկրորդ մոդելով առաջարկվում է վարչական ապարատը կազմակերպել այնպես, որ իրավասություններն ու պարտականությունները բաժանվեն արդեն իսկ գոյություն ունեցող մարմինների միջև՝ առանց մեկ ընդհանուր մասնագիտացված մարմին ստեղծելու: Չեխիայի Հանրապետության փորձը ցույց է տալիս, որ պարտականությունների հստակ բաժանումը կարող է հանգեցնել ներդաշնակ ու արդյունավետ միգրացիոն քաղաքականության՝ նույնիսկ առանց կենտրոնացված մարմնի, որը պատասխանատու է միջազգային միգրացիայի ոլորտում միջոցառումների համակարգման համար: Աշխատանքային խմբերի և միջկառավարական գործընթացների առկայությունը շահագրգիռ բոլոր կողմերին թույլ է տալիս նոր օրենքներ ընդունելուց առաջ վեր հանել բոլոր հակասությունները կամ վարչական անհամաձայնությունները:

Չեխիայի Հանրապետությունում վարչական պարտականությունների համընկնումը կանխելու համար կիրառվում են տարբեր միջոցներ: Առաջինը «Նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների ստեղծման մասին» օրենքն է («Իշխանության մասին» օրենք), որն ընդունվել է 1969 թ.-ին, այնուհետև ենթարկվել փոփոխությունների ավելի քան 14 անգամ: Բացի այդ, կառավարության օրենսդրական խորհուրդը քննարկում է բոլոր առաջարկվող օրինագծերը, որպեսզի դրանք չհակասեն գործող օրենսդրությանը: Եվ վերջապես, յուրաքանչյուր նախարարություն ունի հատուկ օրենսդրական բաժին, որը համակարգում է օրենքների կիրարկմանն ուղղված միջոցառումները: Կիրառվում են երկու ընթացակարգեր, որոնք ապահովում են համապատասխան մարմինների համամասնական մասնակցությունը կառավարության քաղաքականության իրականացման գործում: Յուրաքանչյուր նախարարություն ունի ներքին ընթացակարգ, ըստ որի տվյալ նախարարության բոլոր ստորաբաժանումները պարտավոր են իրենց լուրջ ներդրել ցանկացած հարցում, որը գտնվում է նրանց իրավասության ներքո: Գոյություն ունի նաև միջգերատեսչական մեխանիզմ, սովորաբար՝ աշխատանքային խմբերի ձևով, որոնց մեջ մտնում են բոլոր

համապատասխան նախարարությունները և պետական մարմինները, և որոնք զբաղվում են կոնկրետ խնդիրների համակարգման գործով:

Չեխիայի Հանրապետությունում միջազգային միգրացիայի ոլորտում հիմնականում ընդգրկված են հետևյալ կազմակերպությունները:⁷¹

1. Ներքին գործերի նախարարության ապաստանի և միգրացիոն քաղաքականության վարչություն և ոստիկանություն

Ներքին գործերի նախարարությունը պատասխանատու է միջազգային միգրացիայի և ապաստանի համար ինչպես օրենսդրության մշակման, այնպես էլ իրականացման մակարդակով: «Օտարերկրացիների կացության մասին» օրենքի համաձայն, նախարարությունն իրականացնում է ներգաղթի ոլորտում պետական քաղաքականությունը⁷²: Նախարարության կազմում միգրացիայի և ապաստանի խնդիրներով զբաղվում են բացառապես ապաստանի և միգրացիոն քաղաքականության վարչությունը և փախստականների հարցերի վարչությունը: Կացության թույլտվության դիմումները նախարարությունը ստանում է բացառապես այն դեպքերում, երբ արդեն ավարտվել է ապաստան տրամադրելու գործընթացը, և, որպես առաջին ատյանի վարչական մարմին, որոշում է կայացնում այդ դիմումների վերաբերյալ: Նախարարությունը նաև պարտավոր է հրապարակել սահմանային անցակետերի և դրանցով անցնելու իրավունք ունեցող անձանց խմբերի ցանկը, ինչպես նաև բանակցել միգրացիային առնչվող միջազգային պայմանագրերի շուրջ:

Չեխիայի Հանրապետությունում ոստիկանությունը մտնում է Ներքին գործերի նախարարության կառուցվածքի մեջ:

Սահմանների պաշտպանության, սահմանային անցումների և երկրում բնակվող օտարերկրացիների հարցերով զբաղվում են օտարերկրացիների և սահմանապահ ոստիկանության ծառայության (այսուհետ՝ օտարերկրացիների ոստիկանություն) աշխատակիցները: Օտարերկրացիների հարցերով զբաղվող ոստիկանությունը ապահովում է «Օտարերկրացիների կացության մասին» օրենքի կիրարկումը, որն օտարերկրացիներից պահանջում է հաշվառվել:

Օտարերկրացիների կացության հետաքննության և վերահսկողության վարչությունները նաև պատասխանատու են անկանոն միգրացիայի, միջազգային հանցագործությունների և օտարերկրացիների կացության ռեժիմի խախտումները հայտնաբերելու և կանխարգելելու համար⁷³:

2. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

⁷¹ Ձեկույցի այս մասը շարադրելիս օգտագործվել է «Չեխիայի Հանրապետությունում 2003 թ.-ին միգրացիոն վիճակի մասին» զեկույցը, Ներքին գործերի նախարարություն, Պրագա, 2004:

⁷² Steu՝ «Օտարերկրացիների կացության մասին» Չեխիայի Հանրապետության օրենք և այլ օրենքների փոփոխություններ, Օրենք No. 326/1999 Coll., նաև հայտնի է «Օտարերկրացիների մուտքի մասին» կամ «Օտարերկրացիների մասին» օրենք անվանումներով:

⁷³ Պետք է նշել, որ քրեական ծառայությունը և կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի վերջինիս հատուկ ստորաբաժանումը նույնպես մասնակցում են անկանոն միգրացիայի և մարդկանց տրաֆիկինգի դեմ պայքարին:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը գլխավոր պատասխանատուն է միգրացիայի հետ կապված երկու հիմնական ոլորտներում:

Նախարարությունը սահմանում է՝

ա) այն իրավաբանական անձանց կատեգորիաները, ովքեր կարող են հանդես գալ որպես գործատուներ, և

բ) օտարերկրացիների յուրաքանչյուր կատեգորիայի համար աշխատաշուկա մուտք գործելու պայմանները:

Նախարարությունը պատասխանատու է նաև օտարերկրացիների՝ հասարակության մեջ ինտեգրման հետ կապված խնդիրների համար (դեկավարելով այդ թեմայով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովը), որոնք նախկինում մտնում էին Ներքին գործերի նախարարության պարտականությունների մեջ: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2002 թվականին նոր պարտականություններ է ստանձնել «Որակյալ օտարերկրյա աշխատողների ակտիվ ընտրության» ծրագրով:

3. Արտաքին գործերի նախարարություն

Արտաքին գործերի նախարարությունը պատասխանատու է Չեխիայի Հանրապետությունում օտարերկրացիներին տրվող կացության թույլտվությունների համար: Այն նաև մուտքի արտոնագրեր է տրամադրում՝ դեսպանությունների և հյուպատոսությունների միջոցով:

4. Արդյունաբերության և առևտրի նախարարություն

Արդյունաբերության և առևտրի նախարարությունը կարգավորում և տրամադրում է առևտրային լիցենզիաները՝ այսպիսով մասնակցություն ունենալով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց ձեռնարկատիրական գործունեության զգալի հատվածի, այդ թվում՝ օտարերկրացիների բիզնես-գործունեության ընթացքին:

5. Արդարադատության նախարարություն

Արդարադատության նախարարությունը հիմնականում պատասխանատու է հանձնման գործընթացների համար: Նախարարությունը նաև մշակում է կալանավայրերի համակարգը կարգավորող օրենքների նախագծեր՝ հարց, որն անմիջական կապ ունի միգրացիայի ոլորտի հետ: Դատարանները համագործակցում են օտարերկրացիների հարցերով զբաղվող ոստիկանության հետ այն դեպքերում, երբ Չեխիայի քաղաքացիներին կամ օտարերկրացիներին դատարանի որոշմամբ արգելվում է մեկնել երկրից: Եվ վերջապես, Արդարադատության նախարարությունը պատասխանատու է այն օրենսդրության համար, որը կարգավորում է կոմերցիոն ռեզիստրի, առևտրային և կոոպերատիվ ընկերությունների հիմնադրման և կարգավիճակի հետ կապված և Կոմերցիոն օրենսգրքով կարգավորվող այլ խնդիրները:

6. Կրթության, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն

Կրթության, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության պարտականությունների մեջ մտնում են՝ օտարերկրացի երեխաների համար կրթական համակարգի մատչելիության ապահովումը, օտարերկրացիների համար մասնագիտական կրթության ծրագրերը և արտասահմանում ստացած կրթության ճանաչումը (տեղական համալսարանների հետ համատեղ):

3. ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼԸ ԵՎ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մուտքի արտոնագիր

3.1.1. Հայաստան մուտք գործելու երեք հիմնական եղանակները

Հայաստան մուտքի արտոնագրեր տալու կամ մերժելու գործընթացը համեմատելի է այլ երկրներում լայնորեն կիրառվող պրակտիկայի հետ, մինչդեռ մուտքի արտոնագրի մերժման գործընթացը և արտոնագրի կարիք չունեցող այցելուների կատեգորիաների սահմանումը դեռևս կատարելագործման կարիք ունեն։ Կարևոր է, սակայն, որ օտարերկրացիների Հայաստան մուտք գործելու համար պատասխանատու պետական մարմինները կարողանան արդյունավետորեն համակարգել անցանկալի անձանց մուտքը կանխելու և օրինական այցելուների մուտքը թույլ տալու նպատակով իրենց գործունեությունը։

Հայաստան գալու ցանկություն ունեցող օտարերկրացիները կարող են երկիր մուտք գործել երեք հիմնական եղանակով։ Առաջին. նրանք կարող են մուտքի արտոնագիր ձեռք բերել ՀՀ Արտաքին գործերի նախարարությունից կամ ՀՀ Ոստիկանության համապատասխան մարմիններից⁷⁴։ Երկրորդ. նրանք կարող են մուտք գործել առանց մուտքի արտոնագրի, եթե պատկանում են այն կատեգորիայի անձանց, որոնք ազատված են մուտքի արտոնագրի ձեռք բերելու պահանջից։ Եվ վերջինը՝ այն երկրների քաղաքացիները, որոնց հետ կնքված են փոխադարձաբար առանց մուտքի արտոնագրի երկիր մուտք գործելու իրավունք տվող պայմանագրեր կամ, անհրաժեշտության դեպքում, միակողմանիորեն սահմանվել է այդ իրավունքը, կարող են Հայաստան մուտք գործել առանց մուտքի արտոնագրի⁷⁵։

Օտարերկրյա պետություններում Հայաստան մուտք գործելու համար մուտքի արտոնագրի կարիք ունեցող օտարերկրացիներն այն կարող են ստանալ արտասահմանում գտնվող ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններից կամ հյուպատոսական հիմնարկներից, կամ սահմանակետում, կամ անհրաժեշտության դեպքում նաև ՀՀ տարածքում⁷⁶։ Այն դեպքերում, երբ մուտքի արտոնագրի համար հարցաթերթիկը ներկայացվում է դեսպանություն կամ հյուպատոսություն, մուտքի արտոնագրի տրամադրելու համար պատասխանատու է Արտաքին գործերի նախարարությունը։ Իսկ այն դեպքերում, երբ հարցաթերթիկը ներկայացվում է պետական սահմանի վրա կամ ՀՀ տարածքում, մուտքի արտոնագիրը տրամադրում է կամ Ոստիկանությունը, կամ Արտաքին գործերի նախարարությունը։

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում՝ սահմանված է Հայաստանում տրվող մուտքի արտոնագրերի չորս տեսակները՝

⁷⁴Տես՝ "Օտարերկրացիների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մաս։

⁷⁵«Նույնը, 9-րդ հոդվածի 5-րդ մաս։

⁷⁶Նույնը, 10-րդ հոդվածի 3-րդ մաս։

այցելության մուտքի վիզա, պաշտոնական մուտքի վիզա, դիվանագիտական մուտքի վիզա և տարանցիկ մուտքի վիզա:

Հայաստան մուտք գործելու ռեժիմի համար կարող է կարևորություն ունենալ մուտքի արտոնագրերի և կացության կարգավիճակի միջև կապը: Եվրամիության երկրներում մուտքի արտոնագրերը սովորաբար կապված են կացության տարբեր ձևերի հետ, որոնք որոշվում են մինչև մուտքի արտոնագրի համար դիմողի ժամանումը երկիր և ավարտվում են համապատասխան պետական մարմնում հաշվառվելուց հետո: Դա հնարավորություն է տալիս ավելի ամբողջական վերահսկողություն սահմանել օտարերկրացիների ներհոսքի նկատմամբ և նրանց թույլ չտալ մնալ երկրի տարածքում՝ առանց համապատասխան կացության կարգավիճակի: Հայաստանում մուտքի արտոնագրի կարգավիճակը և կացության կարգավիճակը երկու առանձին իրավական կատեգորիաներ են, և միմյանցից կախված չեն. մուտքի արտոնագիրը լրացուցիչ արտոնություններ չի տալիս այն ստացած անձին: Ուստի, մուտքի արտոնագիր ստանալը և երկրում առանց համապատասխան կացության կարգավիճակի մնալը միանգամայն հնարավոր է: Մուտքի արտոնագրերի և կացության կարգավիճակների միջև կապ ստեղծելով՝ համապատասխան մարմիններին դիմելու և հաշվառվելու պարտականությունը կդրվի մուտքի արտոնագրի համար դիմած անձանց վրա, ինչը կհեշտացնի նրանց կարգավիճակի և գտնվելու վայրի գրանցման գործընթացը:

3.1.2. Հայաստան մուտք գործելու խոչընդոտները

Միջազգային պրակտիկայում ընդունված է հստակ սահմանել, թե որ կատեգորիայի մարդիկ իրավունք չունեն մուտք գործել երկիր: Սովորաբար դրանք քրեական անցյալ ունեցող միգրանտներն են, մարդիկ, ովքեր կապեր ունեն ահաբեկչական գործունեության հետ, նախկինում թույլ են տվել միգրացիոն օրենսդրության խախտումներ, կամ էլ չունեն համապատասխան ֆինանսական միջոցներ, ինչպես նաև մարդիկ, ում մուտքն արգելվում է առողջապահական անվտանգության նկատառումներով: Մուտքի արտոնագիր ստանալը ընդհանուր իրավունք չէ և պետությունը կարող է մուտքի արտոնագրի դիմումը մերժելու համար հիմնավոր պատճառներ ունենալ:

Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագրերի մերժման հիմքերը սահմանված են «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում⁷⁷: Դրանք բաժանվում են երկու մեծ խմբի՝

1. առաջին խումբը կազմում են այն հիմքերը, որոնք առանձնանում են վարչաիրավական և դրա առանձնահատուկ տեսակը կազմող օպերատիվ-հետախուզական ծագումով,

⁷⁷ "Օտարերկրացիների մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում նախատեսված՝ մուտքի արտոնագրի մերժման հիմքերը հավասարապես վերաբերում են նաև արդեն տրամադրված մուտքի արտոնագրի ժամկետի երկարաձգման մերժմանը, մուտքի արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելուն կամ մուտք գործելն արգելելուն:

2. երկրորդ խումբը կազմում են քրեաիրավական իրավահարաբերությունների հետևանքով սահմանված արգելքները:

Արգելքների երկու խմբերի սահմանադրաիրավական հիմքն է ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում ամրագրված՝ մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքների և ազատությունների օրենքով ժամանակավորապես սահմանափակելու հնարավորությունը և դրանք բխում են ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարքերի, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության անհրաժեշտությունից:

Արգելքների առաջին խումբ. Օտարերկրացուն մուտքի արտոնագրի տրամադրումը, մասնավորապես, մերժվում է, եթե՝

ա) նա արտաքսվել է Հայաստանի Հանրապետության տարածքից կամ զրկվել է կացության կարգավիճակից, և արտաքսման կամ կացության կարգավիճակից զրկելու մասին որոշման ուժի մեջ մտնելու պահից չի անցել երեք տարի,

բ) նա «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը խախտելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության, և այդ մասին որոշման ընդունման պահից չի անցել 1 տարի,

գ) գոյություն ունեն հավաստի տվյալներ, որ նա իրականացնում է այնպիսի գործունեություն, մասնակցում, կազմակերպում կամ հանդիսանում է այնպիսի կազմակերպության անդամ, որի նպատակն է՝

- վնաս պատճառել Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը, տապալել սահմանադրական կարգը, թուլացնել պաշտպանունակությունը,

- իրականացնել ահաբեկչական գործունեություն,

- սահմանով ապօրինաբար (առանց համապատասխան թույլտվության) տեղափոխել զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, թմրանյութեր, հոգեմեդիկամենտներ նյութեր կամ

- իրականացնել մարդկանց առևտուր (թրաֆիքինգ) և (կամ) անօրինական սահմանափակումներ.

դ) նա տառապում է վարակիչ հիվանդությամբ, որը սպառնում է բնակչության առողջությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ նա մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն՝ նման հիվանդությունը բուժելու նպատակով⁷⁸.

ե) նա մուտքի թույլտվություն հայցելիս ներկայացրել է իր մասին կեղծ տեղեկություններ կամ չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթեր, կամ գոյություն ունեն տվյալներ այն մասին, որ նրա մուտքը կամ գտնվելը Հայաստանի Հանրապետությունում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը, կամ

⁷⁸ Այդ վարակիչ հիվանդությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Տես՝ "Օտարերկրացիների մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետը:

զ) գոյություն ունեն նրա կողմից Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը կամ հասարակական կարգին այլ լուրջ և հիմնավոր սպառնալիքներ:

Արգելքների երկրորդ խումբ. Օտարերկրացուն Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագրի տրամադրումը, մասնավորապես, մերժվում է, եթե նա դատապարտվել է Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով չի հանվել կամ մարվել:

Նույն 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում և 4-րդ մասում սահմանված են մուտքի արտոնագրի մերժման հիմքերի առկայության դեպքում մուտքի արտոնագիր տրամադրելու հնարավոր բացառությունները: Ընդ որում 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, խիստ հիմնավորված դեպքերում օտարերկրացիների մուտքը կարող է թուլատրվել, երբ՝

ա) այդ անձը արտաքսվել էր Հայաստանի Հանրապետության տարածքից կամ զրկվել էր կացության կարգավիճակից, և արտաքսման կամ կացության կարգավիճակից զրկելու մասին որոշման ուժի մեջ մտնելու պահից դեռևս չի անցել երեք տարի, և

բ) այդ անձը «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը խախտելու համար ենթարկվել էր վարչական պատասխանատվության, և այդ մասին որոշման ընդունման պահից դեռևս չի անցել մեկ տարի:

Քանի որ այդ բացառություններին վերաբերող նորմը այլ դրույթներով չի մանրամասնվում և/կամ լրացուցիչ չի կարգավորվում, ուստի դրանից բխում է, որ «խիստ հիմնավորված դեպքերի» մասին որոշումն ընդունում է մուտքի արտոնագիր տվող / մերժող մարմինն ընդհանուր ընթացակարգերով: Այս պարագայում, սակայն, ծագում է հարց. ինչ օբյեկտիվ չափանիշներով պետք է առաջնորդվի «խիստ հիմնավորված դեպքերի» մասին որոշումն ընդունող մարմինը: Դա խնդիրը թողնում է վարչական հայեցողության, և կարող է նաև «խիստ հիմնավորված դեպքերում» դիմումների մերժման նպատակով պատահական չափանիշների կիրառման պատճառ դառնալ:

Բացի այդ, որպես էական սահմանափակում կարող է դիտվել արտոնագրի մերժման այն հիմքը, որի համաձայն բավարար է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը խախտելու համար վարչական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը, եթե այդ մասին որոշման ընդունման պահից չի անցել մեկ տարի: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 201-րդ հոդվածը 2006 թ. դեկտեմբերի 25-ի՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-47 օրենքով շարադրվել է նոր խմբագրությամբ: Այդ հոդվածի առաջին մասի համաձայն օտարերկրացիների՝ Հայաստանի Հանրապետությունում առանց վավերական արտոնագրի կամ կացության կարգավիճակի, կամ անվավեր փաստաթղթերով բնակվելը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ երթևեկության կարգը խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հայաստանի

Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով⁷⁹: Հոդվածի սանկցիան արտաքսում չի նախատեսում: Հայաստանի Հանրապետության տարածքից արտաքսումը նախատեսված է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխում ներառված նորմերով: Այդ գործընթացը կիրառվում է այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված դեպքերում օտարերկրացին կամավոր չի հեռացել Հայաստանի Հանրապետության տարածքից: Մինչդեռ, հնարավոր է իրավիճակ, երբ օտարերկրացին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության ենթարկվելուց հետո, "Օտարերկրացիների մասին" ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն, կամավոր հեռացել է Հայաստանի Հանրապետության տարածքից, որից հետո օրենքով սահմանված կարգով մեկ տարվա ընթացքում դիմել է մուտքի արտոնագիր ստանալու համար: Նման դեպքերում "Օտարերկրացիների մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն ընդհանուր կանոնն այն է, որ մուտքի արտոնագրի տրամադրումը պետք է մերժվի: Իսկ հատուկ կանոնն այն է, որ պետք է քննարկվի, չկան, արդյոք, մուտքի արտոնագիր տրամադրելու համար «խիստ հիմնավորված» հանգամանքներ: Այս առումով առաջարկվում է քննարկել նման դեպքերում մուտքի արտոնագիր տրամադրելու/մերժելու ընդհանուր և հատուկ ընթացակարգերի կիրառման հիմքերը օրենքով առավել հստակ նախատեսելու հարցը: Որպես այլընտրանքային տարբերակ կարող է քննարկվել արգելքի ռեժիմը լիբերալիզացնելու հնարավորությունը, երբ արտոնագրի մերժման բավարար հիմք կարող է ծառայել "Օտարերկրացիների մասին" ՀՀ օրենքը խախտելու համար *երկու կամ ավելի անգամ* վարչական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը, եթե այդ մասին որոշման ընդունման պահից չի անցել մեկ տարի: Եվ վերջապես. առաջարկվում է քննարկել այն հարցը, որ այցելուններին կարելի է թույլ տալ երկիր մուտք գործել առանց մուտքի արտոնագրի ոչ թե քաղաքական նկատառումներով, այլ ըստ նրանց ներկայացրած հնարավոր ռիսկի: Ներգաղթի մեծ ծավալներ ունեցող երկրները, օրինակ՝ ԱՄՆ-ը կամ Եվրամիությունը, սովորաբար մուտքի արտոնագրի ռեժիմ են սահմանում տարբեր երկրների համար, ելնելով տվյալ երկրների քաղաքացիների՝ հետազայում ապաստան խնդրելու կամ անկանոն միգրանտ դառնալու հավանականությունից: Ի տարբերություն դրա, Հայաստանն առանց մուտքի արտոնագրի մուտք գործելու իրավունք է տալիս ըստ միջազգային պայմանագրերի, ինչպիսիք են, օրինակ, 1992 թ. Բիշկեկի պայմանագիրը, որը ԱՊՀ երկրների (Թուրքմենստանից բացի) քաղաքացիներին թույլ է տալիս Հայաստան մուտք գործել առանց մուտքի արտոնագրի⁸⁰: Այսպիսի քաղաքականության շնորհիվ, քաղաքական կամ աշխարհաքաղաքական դաշինքներն ավելի բարձր են դասվում, քան միգրանտին

⁷⁹ 2007թ. մայիս ամսի տվյալներով նվազագույն աշխատավարձը կազմում է 20,000 դրամ

⁸⁰ Տես՝ «ԱՊՀ երկրների տարածքում այդ երկրների քաղաքացիների առանց մուտքի արտոնագրի տեղաշարժման մասին» համաձայնագիր, Բիշկեկ (1992):

առանց մուտքի արտոնագրի երկիր մուտք գործելու թույլտվություն տալու կամ չտալու ստանդարտ նկատառումները:

3.1.3. Առողջության հավաստագրեր

Առողջական այն խնդիրները, որ կարող են խոչնդոտել օտարերկրացու մուտքը երկիր, պետք է ենթարկվեն երկու սկզբունքների: Առաջին. համապատասխան պետական մարմինը կարող է սահմանափակել որևէ հիվանդությամբ տառապող մարդկանց մուտքը երկիր, եթե չկան հակառակը պարտավորեցնող միջազգային պայմանագրեր: Այնուամենայնիվ, պետք է տարբերակել վարակիչ հիվանդությունները այն հիվանդություններից, որոնք կարող են տարածվել միայն գիտակցաբար և միտումնավոր, ինչպիսիք են սեռական ճանապարհով տարածվող հիվանդությունները կամ ՄԻԱՎ-ը: Թեև իշխանությունները կարող են պահանջել, որ վարակիչ հիվանդություններով տառապողները հաշվառվեն հատուկ կարգով, հիվանդությունների կանխամտածված տարածման հարցերը, սովորաբար, կարգավորվում են քրեական օրենսդրությամբ: Երկրորդ. երբ իշխանությունները որոշում են, որ տվյալ հիվանդությունը վտանգում է հանրային առողջությունը, ապա նրանք պետք է առողջության հավաստագիր պահանջեն երկիր մուտք գործող բոլոր անձանցից: Տրամաբանորեն, եթե գոյություն ունի հանրային առողջությանը սպառնացող վտանգ, ապա երկրում կեցության ժամկետը այլևս էական չէ:

"Օտարերկրացիների մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դ/ կետի համաձայն, օտարերկրացուն մուտքի արտոնագրի տրամադրումը /ժամկետի երկարաձգումը/ մերժվում է, տրամադրված մուտքի արտոնագիրը ուժը կորցրած է ճանաչվում կամ մուտքը Հայաստանի Հանրապետություն արգելվում է, եթե նա տառապում է վարակիչ հիվանդությամբ, որը սպառնում է բնակչության առողջությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ նա մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն նման հիվանդությունը բուժելու նպատակով: Այդ վարակիչ հիվանդությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ներկայումս, երեք ամսից ավելի ժամկետով Հայաստան այցելող օտարերկրացիներից կարող է պահանջվել առողջության հավաստագիր՝ կախված նրանից, թե այն հիմնարկը, որտեղ նրանք աշխատելու կամ սովորելու են, պահանջում է նման հավաստագիր, թե՞ ոչ: «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» օրենքը պահանջում է, որ երեք ամսից ավելի ժամկետով Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագիր (վիզա) ստանալու համար դիմած օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք ներկայացնեն ՄԻԱՎ-ի հետազոտման հավաստագիր (սերտիֆիկատ)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: Այդ պահանջը լրացվում է, նշելով, որ «հավաստագիր չներկայացնելու դեպքում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք պարտավոր են մեկ ամսվա ընթացքում ՀՀ տարածքում անցնել ՄԻԱՎ-ի հայտնաբերման

լաբորատոր հետազոտություն»⁸¹: Եթե հետազոտության ընթացքում ՄԻԱՎ է հայտնաբերվում, ապա վարակակիրը ենթակա է վարչական վտարման ՀՀ-ից⁸²: Մակայն գործնականում այս դրույթը, կարծես, չի գործում:

Այլ երկրներում գոյություն ունեն հատուկ դրույթներ, որոնք վերաբերում են այն դեպքերին, երբ կան կասկածներ, որ երկիր մուտք գործելու ցանկություն ունեցող անձը տառապում է որոշ հիվանդություններով: Սովորաբար, առողջության հավաստագիր է պահանջվում ուսանողներից կամ աշխատանքային այն միգրանտներից, որոնց կատարած աշխատանքը հուշում է այս կամ այն հատուկ հիվանդությունների հնարավոր առկայությունը: Չեխիայի Հանրապետությունում օտարերկրացու մուտքը երկիր կարող է արգելվել, «եթե գոյություն ունեն լուրջ հիվանդության հիմնավորված կասկածներ»⁸³: Տվյալ հիվանդության՝ հանրային առողջության համար վտանգավոր լինելու կամ չլինելու հարցը ամբողջությամբ չեն որոշում դեսպանությունների աշխատողները կամ սահմանապահները: «Օտարերկրացիների կացության մասին» Չեխիայի օրենքում հստակ հղում է կատարվում Առողջապահության նախարարության հրապարակած կանոններին, որտեղ նշվում են կոնկրետ հիվանդությունները, որոնց առկայությունը բավարար հիմք է օտարերկրացիների մուտքը երկիր արգելելու համար⁸⁴:

3.2. ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Հայաստանի Հանրապետության սահմանը հատող բոլոր անձինք ենթակա են մուտքի և ելքի հսկողության: Եվրոպայում շեշտը դրվում է հիմնականում մուտքի, և ոչ թե ելքի հսկողության վրա, քանի որ պետությունն իր սահմանների ներսում անվտանգության ապահովման պարտավորություն ունի: Անհրաժեշտ է որակապես նոր մոտեցում որդեգրել մուտքի և ելքի հսկողության հարցում: Մուտքի հսկողությունը սովորաբար ավելի խիստ պետք է լինի, քան ելքի հսկողությունը:

3.2.1. Սահմանապահներ

⁸¹ Տես՝ «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդությունների կանխարգելման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր:

⁸² Տես՝ «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդությունների կանխարգելման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված:

⁸³ Տես՝ Չեխիայի Հանրապետության «Օտարերկրացիների կացության մասին» օրենք No. 326/1999 Coll., Հոդված 9, կետ 2 (B):

⁸⁴ Տես՝ Չեխիայի Հանրապետության «Հանրային առողջության պաշտպանության մասին» օրենք No. 274/2003, մասնավորապես §68, և «Հանրային առողջության համար վտանգ ներկայացնող հիվանդությունների մասին» կանոնակարգ No.274/2004: Կանոնակարգում նշված են հիվանդությունների երեք տեսակներ, որոնք համարվում են վտանգավոր հանրային առողջության համար՝ ա) Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից վտանգավոր ճանաչված հիվանդություններ կամ նոր վարակներ (օրինակ, SARS), բ) տարբեր աստիճանների տուբերկուլյոզ, և գ) համապատասխան պետական մարմնի կողմից նշված վարակիչ հիվանդություններ:

Հայաստանի սահմանապահներն իրականացնում են անձնագրերի և, անհրաժեշտության դեպքում, մուտքի արտոնագրի ստուգման գործընթացը, որով պարտադիր անցնում են Հայաստան մուտք գործող բոլոր օտարերկրացիները: Երկիր մուտք գործելու գործընթացում սահմանապահների ակնառու դերն ընդգծում է նրանց կարգավիճակը սահմանելու կարևորությունը, ինչպես նաև ավելի արդյունավետ և պրոֆեսիոնալ պրակտիկա կիրառելու համար նրանց կարողությունների զարգացման նշանակությունը:

Սահմանապահների հրամանատարին նշանակում է ՀՀ նախագահը՝ Ազգային անվտանգության ծառայության պետի ներկայացմամբ: Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքված երկկողմ համաձայնագրի համաձայն՝ Թուրքիայի և Իրանի հետ սահմանների պահպանությունն իրականացնում են Ռուսաստանի սահմանապահ զորքերը⁸⁵: Համաձայնագիրը տարածվում է նաև Երևանի միջազգային օդանավակայանի վրա և Ռուսաստանի սահմանապահ զորքերին թույլ է տալիս ստուգել միջազգային բոլոր ուղևորներին:

Սահմանապահների կարգավիճակը խիստ կարևոր գործոն է նրանց աշխատանքի և արդյունավետության համար: Շատ երկրներում սահմանների պաշտպանությունը մտնում է ոստիկանության գործառնությունների մեջ, այն ապառազմականացված է և լիովին քաղաքացիական: Այլ երկրներում սահմանների պաշտպանությունը հանձնարարված է բանակին կամ ազգային անվտանգության ծառայությանը: Նախկին կոմունիստական երկրներում սահմանների պաշտպանությունն ավանդաբար մտնում է բանակի գործառնությունների մեջ, և սահմանակետերում հաճախ աշխատում են ժամկետային զինծառայողները: Փորձը ցույց է տալիս, որ դա շատ անարդյունավետ է, որովհետև սահմանապահները լավ աշխատելու խթաններ չունեն, իսկ նրանց առաջարկված ցանկացած հատուկ ուսուցում նրանց ծառայության ժամկետն ավարտելուն պես անիմաստ է դառնում: Արևելյան Եվրոպայի շատ երկրներ սահմանների պաշտպանությունը հանել են բանակի գործառնություններից և այն հանձնարարել են ոստիկանությանը: Ուկրաինայում գործում է համատեղ մոդելը, երբ պրոֆեսիոնալ սահմանապահներին ուղեկցում են ժամկետային զինծառայողները: Հայաստանում սահմանապահների լրիվ ապառազմականացումը, կամ գոնե ավելի ինտենսիվ ուսուցումը և սահմանապահների հիմնական և մշտական խմբի ստեղծումը, կարող են բարձրացնել արդյունավետության և պրոֆեսիոնալիզմի մակարդակը:

Արդյունավետության բարձրացմանը կարող է նպաստել նաև ստուգումներն ավելի ճկուն և ընտրովի դարձնելը: Սահմանը հատող բոլոր մարդկանց միանման կարգով ու խստությամբ ստուգելը ժամանակ է խլում և հաճախ անհրաժեշտ չէ: Եվրամիության երկրները նախընտրել են ավելի կարևորել սահմանապահների ուսուցման ծրագրերը, որպեսզի նրանք ավելի մեծ ուշադրություն դարձնեն կասկածելի անձանց վրա: Ստուգման մեխանիզմների այսպիսի տարբերակումը, այսինքն՝ բոլոր անձանց ստուգելու փոխարեն ուշադրություն դարձնելը միայն

⁸⁵ «ՀՀ տարածքում ՌԴ սահմանապահ զորքերի կարգավիճակի և գործունեության պայմանների մասին» Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև համաձայնագիր (1992):

կասկածելի վարք դրսևորող մարդկանց, կարող է ռեսուրսներ խնայել և արագացնել Հայաստանի սահմանապահների աշխատանքը:

3.2.2. Հսկողություն և բողոքարկում

2002 թ. Հայաստանի կառավարությունը որոշել է պետական սահմանի անցման կետերում սահմանային վերահսկողությունը կազմակերպել առաջնային և երկրորդային հսկողության համակարգի միջոցով: Համակարգի նպատակն է կատարելագործել սահմանային վերահսկողությունը, սահմանի հատումը դարձնել ավելի արագ և հարմարավետ՝ օրինապահ մարդկանց համար, հայտնաբերել ապօրինի կամ կեղծ հայտարարություններ անողներին և կանխել նրանց մուտքը կամ ելքը երկրից: Սահմանային առաջնային հսկողության ընթացքում ստուգվում են ժամանող կամ մեկնող անձանց փաստաթղթերը և կիրառվում են այլ ընթացակարգեր, որոնց արդյունքում անձի մուտքը կամ ելքը թույլատրվում է, կամ նա ուղարկվում է երկրորդային հսկողության, որի ընթացքում անձը ենթարկվում է ավելի մանրամասն զննման: Ընդհանուր առմամբ, այս գործընթացը կասկածելի ժամանողներին հայտնաբերելու պարտականությունը տեղափոխում է առաջնային հսկողությունից դեպի երկրորդային հսկողության դաշտ, որտեղ աշխատում են ավելի նեղ մասնագիտացում ունեցող մարդիկ⁸⁶: Ե՛վ առաջնային, և՛ երկրորդային հսկողություն իրականացնողներն ունեն մուտքը թույլատրելու կամ արգելելու իրավունք:

Թեև այդ երկաստիճան համակարգը նպաստում է մուտք գործելու գործընթացի արդյունավետության բարձրացմանը, այն բերում է երկրորդային հսկողություն իրականացնողների թվի աճի: Երկու դեպքում էլ հսկողությունը իրականացնում են սահմանապահները, սակայն երկրորդային հսկողության ժամանակ նրանք կարող են ներգրավել այլ նախարարությունների ու գերատեսչությունների, այդ թվում՝ Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության աշխատակիցներին: Այդ գերատեսչությունների միջև պարտականությունների բաժանումը և համագործակցությունը կարգավորված չեն: Խորհուրդ է տրվում հստակեցնել սահմանային հսկողության ընթացքում յուրաքանչյուր գերատեսչության ինստիտուցիոնալ պարտականությունները, հատկապես այն պատճառով, որ քաղաքացիների և օտարերկրացիների մասին տվյալների բացահայտման վտանգը առավել բարձր է հենց այդ փուլում:

Բացի այդ, չկա մուտքի մերժման մասին որոշումները բողոքարկելու կարգ: Համեմատության համար, Միացյալ Թագավորության ներգաղթի մասին օրենքը թույլ է տալիս մուտքի մերժման մասին որոշումը բողոքարկել դատական կարգով, սակայն միայն սեփական երկիր վերադառնալուց հետո, բացի այն դեպքերից, երբ մուտք գործել ցանկացողը ապաստան է խնդրում կամ հայտ է ներկայացնում «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի» շրջանակներում, կամ էլ եթե

⁸⁶ Տե՛ս՝ «ՀՀ պետական սահմանի անցման կետերում սահմանային վերահսկողությունը առաջնային և երկրորդային հսկողության (ինսպեկցիայի) համակարգի միջոցով իրականացնելու մասին» ՀՀ կառավարության որոշում (2002թ.): Տե՛ս՝ www.dmr.am

ներկայացնում է օրինական աշխատանքի թույլտվություն⁸⁷: Կանադայի ներգաղթի օրենսդրությունն էլ ավելի հեռու է գնում. այն նախատեսում է մուտքի մերժման որոշման բողոքարկում, ինչը հիմք է հանդիսանում վտարումը ժամանակավորապես կասեցնելու համար⁸⁸:

3.2.3. Համագործակցություն և համատեղ հսկողություն

Եթե քաղաքականապես հնարավոր է, համատեղ հսկողությունը, սովորաբար, ավելի արդյունավետ է և ֆինանսապես ավելի մատչելի, քան միակողմանի միջոցառումները: Համատեղ հսկողությունը, սովորաբար, պահանջում է սերտ համագործակցություն հարևան երկրների սահմանապահների հետ: Այն նաև ավելի պրակտիկ է, որովհետև դրա շնորհիվ ստեղծվում է այնպիսի համակարգ, երբ երկու պետությունների սահմանները հատելու համար մարդը մեկ անգամ է ստուգման ենթարկվում: Հայաստանում սահմանային համագործակցությունը դժվարանում է ռուսական սահմանապահ զորքերի ներկայության և հարևան առանձին երկրների հետ քաղաքական լարվածության պատճառով: Հետևաբար կարևոր է, որ Հայաստանի սահմանների վրա ցանկացած հետագա համագործակցություն հիմնված լինի տեղեկությունների փոխանակման և մարդու իրավունքների հարգման վրա:

Սահմանների արդյունավետ հսկողության օրինակ է եվրոպական երկրների միջև համագործակցությունը: Սակայն այդ օրինակը չպետք է ընկալվի առանց զգուշավորության: Սահմանային ընթացակարգերի համար ընդհանուր պատասխանատվությունը շենգենյան համակարգի առանցքային սկզբունքներից է, սակայն երկրի սահմանների պաշտպանության և մարդու իրավունքների հարգման միջև հավասարակշռությունը գտնելը բավականին դժվար գործ է: Շենգենյան տեղեկատվական համակարգը պահանջում է ինչպես ներքին սահմանների վերացում, այնպես էլ ավելի սերտ համագործակցություն անդամ երկրների ոստիկանությունների միջև տվյալների փոխանակման ոլորտում: Երբ առաջ են գալիս հանրային կարգուկանոնին կամ ազգային անվտանգությանը սպառնացող կարևորագույն խնդիրներ, շենգենյան մոդելի համագործակցությունը սահմանների հսկողության հարցում կարող է պակաս ուշադրության արժանացնել տվյալների փոխանակման կամ քաղաքացիների անձնական կյանքի գաղտնիության պահպանության վերաբերյալ հարցերը:⁸⁹

Այն փաստը, որ Հայաստան մուտք գործողների հսկողությունն իրականացնում են Ռուսաստանի սահմանապահները, ովքեր, հետևաբար, կարող են ազատ ծանոթանալ միգրանտների մասին տեղեկություններին, տեղիք է տալիս տվյալների պաշտպանվածության հետ կապված մտահոգությունների: Ռուսաստանի սահմանապահները Հայաստանի սահմանապահների հետ մեկտեղ,

⁸⁷ Տե՛ս՝ «Միգրացիոն օրենսդրության և պրակտիկայի միջազգային համեմատական ուսումնասիրություն (Բոլանդիայի օրինակը)», Միգրացիայի միջազգային կազմակերպություն, 2000 թ.:

⁸⁸ Նույնը, էջ 35:

⁸⁹ Տե՛ս՝ Ռիչարդ Խոլիսիսկի. «Սահմաններն ու խտրականությունը Եվրամիությունում», Բմիգրացիոն իրավաբանների ընկերակցություն, Միգրացիոն քաղաքականության խումբ, Բրյուսել, 2002 թ.:

հսկում են նաև այն այցելություններին, ովքեր մուտքի արտոնագրի կարիք չունեն, օրինակ՝ ԱՊՀ երկրների քաղաքացիներին: Այսպիսի համագործակցության արդյունքում ի հայտ եկող տարբերությունը կիրառվող չափանիշներում և գործողություններում կարող է թուլացնել Հայաստանի՝ երկիր մուտք գործելու ընթացակարգերի կամ չափանիշների հստակությունը: Ուստի, պետք է ծանրություն անել արդյունավետության բարձրացումը, որ առաջ է գալիս սահմանային այս համագործակցությունից, մի կողմից, և խնդիրները, որ կարող են առաջանալ համագործակցության մասնակիցների քաղաքական գերակայությունների տարբերություններից, մյուս կողմից:

4. ԵԼՔԸ

Հայաստանի օրենսդրությունն օտարերկրյա քաղաքացիների և ՀՀ քաղաքացիների՝ ՀՀ-ից ելքի իրավունքի որոշ ստանդարտ սահմանափակումներ է նախատեսում, այդ թվում այն դեպքերում, երբ տվյալ անձի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում կամ նա որոշակի տեսակի պատիժ է կրում: Մինչև «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքն ընդունելը, գործող «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 1994 թվականի օրենքով նախատեսված էին մի շարք այլ սահմանափակումներ, ինչպես, օրինակ, օտարերկրացիներին դեպքում՝ հնարավոր քաղաքացիական պարտավորությունների առկայությունը: ՀՀ քաղաքացիների դեպքում՝ «կրկնակի վավերացման» համակարգը, կարծես թե, տեղաշարժման իրավունքի չարդարացված սահմանափակման է նման: Նշված խնդիրներից առաջինը լուծվել է, իսկ ՀՀ քաղաքացիների համար Հայաստանից ելքի կրկնակի վավերացման համակարգը առաջնահերթ բարեփոխումների կարիք ունի:

4.1. Օտարերկրյա քաղաքացիներ

ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածում սահմանված է.

«Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք:

Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք»: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ վերացվեցին օտարերկրացիների՝ քաղաքացիաիրավական հարաբերություններից բխող ելքի իրավունքի չափից դուրս խիստ կամ ավելորդ

որոշ սահմանափակումներ⁹⁰: Այժմ այդ սահմանափակումները երկուսն են: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունից օտարերկրացու ելքն արգելվում է, եթե օրենքով սահմանված կարգով՝

ա) նրա նկատմամբ որոշում է կայացված որպես մեղադրյալ ներգրավելու մասին՝ մինչև գործի վարույթի ավարտը կամ այդ անձի նկատմամբ քրեական հետապնդման դադարեցումը.

բ) նրա նկատմամբ նշանակվել է այնպիսի պատիժ, որի կրումը հնարավոր է միայն Հայաստանի Հանրապետությունում, մինչև պատիժը կրելու ժամկետի ավարտը կամ պատիժը կրելուց օրենքով սահմանված կարգով ազատվելը:

Այլ երկրներում տարածված պրակտիկայում քաղաքացիական պարտավորությունները նույնպես ելքի սահմանափակման անհրաժեշտ հիմք չեն համարվում: Այսպես՝ «Օտարերկրացիների կացության մասին» Չեխիայի օրենքը մանրամասն նշում է այն հետևանքները, որ սպառնում են երկրի տարածքում գտնվող և իրենց պարտականությունները չկատարող օտարերկրացիներին, սկսած նախագուշացումից կամ տուգանքից մինչև վտարում, սակայն ընթացքի մեջ գտնվող քաղաքացիական գործն ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակման հիմք չի համարվում⁹¹:

Կացության կարգավիճակ ունեցողները սովորաբար պարտավոր են այն երկրաձգել կամ պարբերաբար ներկայանալ համապատասխան մարմիններ՝ հաշվառման համար, սակայն երկրից դուրս գալու թույլտվություն հայցելը հակասում է ազատ տեղաշարժի իրավունքին: Այդ առումով դրական է, որ

⁹⁰ «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» նախկինում գործող օրենքը 15-րդ հոդվածում նախատեսում էր օտարերկրացու ելքը ՀՀ-ից արգելելու հետևյալ դեպքերը՝

- Եթե օտարերկրյա քաղաքացու նկատմամբ հարուցված էր քրեական գործ, կամ եթե այդ գործի վարույթը դեռ լրիվ ավարտված չէր,
- Եթե օտարերկրյա քաղաքացին դատապարտվել էր որևէ քրեական հանցագործության համար կամ քրեական հանցագործության համար պատժի կրումը դեռ ավարտված չէր,
- Եթե օտարերկրյա քաղաքացու նկատմամբ կար քաղաքացիական հայցով դատարանի որոշում, կամ այդ հայցով դատարանի հրահանգները դեռ կատարված չէին, կամ օտարերկրյա քաղաքացին չէր ազատվել տվյալ հրահանգների կատարումից:

Քաղաքացիական գործերի հետ կապված այս վերջին սահմանափակումն անմիջականորեն խաբխլում էր ազատ տեղաշարժման իրավունքը: Քաղաքացիական իրավունքը կարգավորում է մասնավոր կողմերի միջև հարաբերությունները, և քաղաքացիական գործում օտարերկրյա քաղաքացու ներգրավված լինելը չպետք է ազդեր ազատ տեղաշարժի իրավունքի վրա, որն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ և մարդու իրավունքներին առնչվող տարբեր փաստաթղթերում:

⁹¹ Չեխիայի Հանրապետության «Օտարերկրացիների կացության մասին» No. 326/1999 օրենքի Հոդվածներ 118-121-ում նշված են վարչական վտարման պայմանները (Օրինակ, եթե օտարերկրացին վտանգում է ազգային անվտանգությունը կամ կեղծ փաստաթղթեր է ներկայացնում, ապա նա վտարվում է համապատասխանաբար 5 և 10 տարով: Վարչական վտարման կարելի է ենթարկվել նաև աշխատանքի իրավունք չունենալու կամ դրա անվավեր լինելու, ճամփորդական փաստաթղթեր չունենալու, մուտքի արտոնագրի ժամկետանց լինելու և այլ դեպքերում:) «Օտարերկրացիների կացության մասին» No. 326/1999 օրենքի Հոդվածներ 90-92-ում, որտեղ հստակ նշված են օտարերկրացիների՝ երկրից դուրս գալու պայմանները, քաղաքացիական պարտավորությունների մասին խոսք չկա:

վերացվել են նաև օտարերկրացիների՝ երկրից ելքի իրավունքի՝ կացության կարգավիճակների հետ կապված ավելորդ սահմանափակումները, որոնք նախատեսված էին այժմ արդեն ուժը կորցրած «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» օրենքում⁹²: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասով այժմ սահմանված է, որ մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացին Հայաստանի Հանրապետությունից վեց ամսից ավել բացակայելու դեպքում այդ մասին ընդամենը գրավոր ծանուցում է ՀՀ ոստիկանությանը:

4.2. ՀՀ քաղաքացիներ

ՀՀ գործող օրենսդրությունը չի նշում ՀՀ քաղաքացիների ելքի իրավունքի սահմանափակումների հատուկ դեպքեր: Ընդհանուր առմամբ, այդ կարգի սահմանափակումները պետք է հստակ նախատեսված լինեն օրենքով, որովհետև դրանք վարչական հայեցողությանը թողնելը կարող է հանգեցնել այդ սահմանափակումների կամայական կիրառման: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի մասին» օրենքի նախագիծը կոչված է կատարելագործելու ելքի գործող համակարգը, քանի որ այն թվարկում է կոնկրետ հիմքեր, որոնց առկայության դեպքում ՀՀ քաղաքացիների ելքի իրավունքը կարող է սահմանափակվել⁹³: Այդ հիմքերը սահմանափակվում են այն դեպքերով, երբ քրեական պատասխանատվության ենթարկելը պահանջում է տեղաշարժման իրավունքի սահմանափակում, երբ անձը պարտավոր է կատարել ժամկետային զինվորական ծառայությունը, երբ անչափահաս քաղաքացին փորձում է երկրից դուրս գալ առանց օրինական ներկայացուցչի համաձայնության, կամ երբ քաղաքացին չունի վավեր փաստաթղթեր: Այս հիմքերը համապատասխանում են լայնորեն ընդունված միջազգային պրակտիկային և քիչ տեղ են թողնում վարչական չարաշահումների համար: Օրենքի նախագծում նշված է նաև յուրաքանչյուր հիմքի առկայության դեպքում ելքի իրավունքի սահմանափակման առավելագույն ժամկետը:

Հայաստանում ինքնությունը հաստատող ազգային փաստաթուղթը (այսպես կոչված, ներքին անձնագիրը) կարող է «վավերացվել» արտասահման մեկնելու համար: Վավերացման կնիքը դրվում է Ոստիկանության տեղական անձնագրային

⁹² Դրանց իմաստն այն էր, որ կացության սովորական կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացին մեկ տարվա ընթացքում չէր կարող բացակայել Հայաստանի Հանրապետությունից վեց ամսից ավելի ժամկետով, եթե նախօրոք չէր ստացել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության գրավոր համաձայնությունը՝ պայմանով, որ այն չէր գերազանցում մեկ տարվա անընդմեջ ժամկետը, մոծում էր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տարեկան վճար, ինչպես նաև այն, որ երկրից ավելի քան վեց ամիս բացակայել ցանկացող և կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիները համապատասխան թույլտվության համար պետք է դիմեին Արտաքին գործերի նախարարություն: Տես՝ «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» ուժը կորցրած օրենքի (1994 թ.) 28-րդ հոդվածը:

⁹³ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի մասին» օրենքի նախագիծ, Գլուխ 3, Հոդվածներ 9 և 10:

գրասենյակում: Այս կրկնակի վավերացման պրակտիկան արժանացել է մեծ քննադատության: Շատ երկրներում արտասահմանյան ուղևորությունների համար քաղաքացիներին տրվող փաստաթղթի դիմաց գանձվում է փաստաթղթի տրամադրման հետ կապված վարչական ծախսերը ծածկող գումար, որը դիմորդների համար խնդիր չի ներկայացնում և օրինական արտասահմանյան ուղևորությունների համար խոչընդոտ չի հանդիսանում: Կրկնակի վավերացման հայկական պրակտիկան իրականում կարող է բերել տեղաշարժվելու սահմանափակումների: Ըստ որոշ տեղեկությունների, բանակում դեռ չծառայած որոշ երիտասարդների աձնագրերը վավերացնելու դիմումները մերժվել են: Միգրացիոն գործակալությունը ընդգրկել է կրկնակի վավերացման պրակտիկայի վերացումն իր օրակարգում, և դա արտացոլված է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի մասին» օրենքի նախագծում, որի կողմնակիցների թիվը Ազգային ժողովում այնքան էլ մեծ չէ:

«ՀՀ անձնագրային համակարգի կանոնադրության» համաձայն, հայկական անձնագրերի վավերականության ժամկետը Հայաստանում և արտասահմանում տարբեր է: Ըստ կանոնադրության, անձնագիրը երկրի ներսում ուժի մեջ է 10 տարի տրման օրվանից, իսկ նույն փաստաթուղթն այլ երկրներում վավերական է միայն 5 տարով: Արտասահմանում անձնագրի վավերականությունը պահպանելու համար քաղաքացին հինգ տարին մեկ պետք է դիմի ոստիկանություն կամ հյուպատոսական ծառայություն արտասահմանում՝ վավերացման կնիք ձեռք բերելու համար: Վավերական լինելու ժամկետի յուրաքանչյուր տարվա համար գանձվում է պետական տուրք՝ 1000 դրամի չափով⁹⁴:

ՀՀ իշխանությունների գնահատմամբ, առանց վավերացման կնիքի անձնագիրը ծառայում է միայն որպես անձը հաստատող տեղական փաստաթուղթ: Այն չի կարող օգտագործվել արտասահման ուղևորվելու համար, քանի որ անվավեր է այլ պետություններում: Արտասահման մեկնելուց առաջ անձնագիրը վավերացնելու պահանջը Միգրացիոն գործակալությունը ոչ պաշտոնապես անվանում է «ելքի վիզա», ինչը, ըստ էության, զգալի շեղում է ազատ տեղաշարժի իրավունքին առնչվող ընդունված չափանիշներից⁹⁵: Միգրացիոն գործակալությունը պնդում է, որ վավերացման կնիքը իշխանություններին հնարավորություն է տալիս սահմանափակել այն անձանց ելքը, ովքեր Հայաստանից դուրս գալու իրավունք չունեն: Սակայն, եթե կան տվյալ անձի ելքի իրավունքը սահմանափակելու հիմքեր, ապա համապատասխան դատական ատյանները պետք է այդ մասին տեղեկացնեն սահմանապահներին կամ ոստիկանությանը: Խնդիրը չպետք է կախված լինի անձը հաստատող փաստաթղթում վավերացման կնիքից:

⁹⁴ Տե՛ս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մաս:

⁹⁵ Տե՛ս՝ «ՀՀ քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի մասին» ՀՀ օրենքի հայեցակարգը, որը տեղակայված է www.dmr.am կայքում:

5. ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐ

Մինչ "Օտարերկրացիների մասին" ՀՀ օրենքը ընդունելը, Հայաստանում կացության կարգավիճակների համակարգին բնորոշ էին ծայրահեղ անհաստատությունն ու վարչական անարդյունավետությունը⁹⁶: Նոր օրենքի ընդունմամբ պայմանավորված, կացության կարգավիճակի ձևերին, այն տալու, երկարաձգելու և մերժելու հիմքերին, որոշումը բողոքարկելու կանոններին վերաբերող էական փոփոխությունները մոտեցրել են կարգավորումը միջազգայնորեն ընդունված մոտեցումներին: Սակայն, մարդու հիմնարար իրավունքների չհիմնավորված կամ անհարկի խիստ առանձին սահմանապակումներ և բյուրոկրատական քաշքշուկի մեխանիզմներ դեռևս առկա են: Գործընթացը շփոթեցնում է « ծագումով հայ » հասկացության սահմանման անորոշությունը, հասկացություն, որը կարևոր գործոն է հայկական արմատներ ունեցող օտարերկրացիներին կացության կարգավիճակ տրամադրելու համար: Չհիմնավորված սահմանափակում կարող է դիտվել կացության հատուկ կարգավիճակի վերաբերյալ կայացված որոշումը դատական կարգով բողոքարկելու անհնարինությունը: Անհարկի խիստ սահմանափակում կարող է դիտվել այն, որ « Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածում նշված ցանկացած հիմքով կացության կարգավիճակ տալը մերժելու դեպքում օտարերկրացին կրկին կարող է դիմել կացության կարգավիճակ ստանալու համար միայն մեկ տարի հետո:

«Օտարերկրացիների մասին» օրենքը սահմանում է օտարերկրացիների կացության երեք կարգավիճակներ՝ ժամանակավոր, մշտական և հատուկ:

5.1. Կացության ժամանակավոր կարգավիճակ

Կացության ժամանակավոր կարգավիճակ տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում մեկ տարի և ավել ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներ: Այդպիսի հանգամանքներ կարող են լինել ուսումը, օրենքով սահմանված կարգով աշխատանքի թույլտվության առկայությունը, ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում օրինական կարգով բնակվող օտարերկրացու հետ ամուսնությունը, ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ազգական լինելը, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը: Կացության ժամանակավոր կարգավիճակը տրվում է մինչև մեկ տարի ժամկետով, որը կարելի է երկարաձգել՝ յուրաքանչյուր անգամ ոչ ավելի, քան մեկ

⁹⁶ Ի տարբերություն այլուր տարածված պրակտիկայի, Հայաստանում կացության կարգավիճակը կապված չէր մուտքի արտոնագրի պահանջների հետ: Դա լրացուցիչ բյուրոկրատական դժվարություններ էր առաջացնում այն օտարերկրացիների համար, ովքեր ցանկանում են Հայաստանում ավելի երկար մնալ, քան նախատեսված է մուտքի գործող արտոնագրերով: Ավելին, կացության կարգավիճակ տրամադրելու վարչական գործընթացը բաժանված էր Արտաքին գործերի նախարարության և Ոստիկանության միջև, և առանց անհրաժեշտության առանձնացված էր մուտքի արտոնագրի համար դիմելու գործընթացից:

տարով⁹⁷: Կացության ժամանակավոր կարգավիճակ ստանալու կամ երկարաձգելու դիմումների մերժման որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով⁹⁸:

5.2. Կացության մշտական կարգավիճակ

Կացության մշտական կարգավիճակ կարող է տրվել դիմում ներկայացնող յուրաքանչյուր օտարերկրացու հինգ տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ, եթե նա միաժամանակ բավարարում է օրենքում նշված հետևյալ երեք պահանջներին՝ ապացուցում է ՀՀ-ում մերձավոր ազգականների առկայությունը և ՀՀ-ում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով, և մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալը առնվազն երեք տարի բնակվել է ՀՀ-ում: Մշտական կացության կարգավիճակ կարող է տրվել նաև ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող օտարերկրացուն⁹⁹: Այդ պայմաններին չբավարարելը հիմք է հանդիսանում կացության կարգավիճակի դիմումը մերժելու համար: Կացության ժամանակավոր կարգավիճակ ստանալու կամ երկարաձգելու դիմումների մերժման որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով¹⁰⁰: Դիմումները հաստատելու կամ մերժելու չափանիշները հստակ նշված են¹⁰¹: Ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմումը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կառույցի լիազորված պետական կառավարման մարմին¹⁰²:

5.3. Կացության հատուկ կարգավիճակ

Կացության հատուկ կարգավիճակ տրվում է տասը տարի ժամկետով: Այն կարող է տրվել մեկից ավելի անգամ: Կացության հատուկ կարգավիճակ տրվում է ծագումով հայ օտարերկրացիներին: Կացության հատուկ կարգավիճակ կարող է տրվել նաև «Հայաստանի Հանրապետությունում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների»¹⁰³: Օրենքը, սակայն, չի մանրամասնում, թե որ գործունեությունն է համարվում տնտեսական կամ մշակութային: Հատուկ կացության կարգավիճակ ստանալ ցանկացողները օտարերկրյա պետությունում դիմում են ներկայացնում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններին կամ հյուպատոսական հիմնարկ, իսկ արդեն Հայաստանում գտնվողները՝

⁹⁷ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր:

⁹⁸ Նույնը, 20-րդ հոդվածի 1-ին մաս:

⁹⁹ Նույնը, 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր:

¹⁰⁰ Նույնը, 20-րդ հոդվածի 1-ին մաս:

¹⁰¹ Նույնը, 19-րդ հոդված:

¹⁰² Նույնը, 17-րդ հոդվածի 1-ին մաս:

¹⁰³ Նույնը, 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր:

նուստիկանությանը¹⁰⁴։ Օրենքով սահմանված է, որ կացության հատուկ կարգավիճակ ստանալու դիմումները քննելու և կացության հատուկ կարգավիճակ տրամադրելու համար պատասխանատու է ՀՀ նախագահը։ Ընդ որում ՀՀ նախագահի որոշումը այդ հարցում ըստ օրենքի վերջնական է և ենթակա չէ բողոքարկման¹⁰⁵։

Կացության հատուկ կարգավիճակի համար առանցքային կարևորություն ունի հայկական ծագման գործոնը։

Թեև տարբեր պետությունների մոտեցումները ազգային ծագումը որոշելու հարցում տարբեր են, արդյունավետ պրակտիկայի հիմք կարող է դառնալ այն քաղաքականությունը, որի մեջ բացահայտ նշված են այս կամ այն ազգի ներկայացուցիչ համարվելու պայմանները։ Որոշ պետություններում կացության որոշակի կարգավիճակ է տրամադրվում բացառապես միգրանտի՝ ազգային ծագման վերաբերյալ սեփական հայտարարության հիման վրա¹⁰⁶։ Սակայն այս սեփական հայտարարությունների արդյունքում միգրանտը պետությունից, սովորաբար, որևէ լուրջ արտոնություններ կամ օգուտներ չի ստանում։ Մի շարք այլ պետություններ շահագրգռված են պահպանել ազգային ծագման քաղաքականության ճկունությունը և, հետևաբար, ազգությունը որոշելու չափանիշներ չեն սահմանում։

Եվ վերջինը, որոշ պետություններ հստակ պահանջներ են ներկայացնում ազգային ծագումը որոշելու համար (թեև՝ որոշ բացառություններով)։ Դրա վառ օրինակն է Սլովակիան¹⁰⁷։ «Սլովակ էքսպատրիանտների մասին» օրենքը սահմանում է արտասահմանում գտնվող սլովակների ազգային ծագումը որոշելու կարգը և թվարկում է այդ կարգավիճակն ունեցողներին տրվող արտոնությունները¹⁰⁸։ Օրենքը մանրամասն նկարագրում է այդ կարգավիճակը ստանալու համար պահանջները, դիմումին կցվող փաստաթղթերը և դիմումը ներկայացնող անձի կարգավիճակը որոշելու կարգը, ինչպես նաև նշում է, թե վարչական որ մարմիններն են մասնակցում այդ գործընթացին¹⁰⁹։

¹⁰⁴ Նույնը, 18-րդ հոդվածի 3-րդ մաս։

¹⁰⁵ Նույնը, 18-րդ հոդվածի 5-րդ մաս։

¹⁰⁶ Օրինակ, Սլովակիայում՝ չեխերի, Չեխիայում՝ սլովակների, իսկ երկու երկրներում էլ՝ գնչուական ազգության ներկայացուցիչների ազգությունը որոշվում է բացառապես նրանց հայտարարության հիման վրա։

¹⁰⁷ Սլովակիայի Հանրապետության թիվ 70/1997 օրենքը «Սլովակ էքսպատրիանտների մասին» և որոշ օրենքների փոփոխություններ և լրացումներ (1997 թ.)։

¹⁰⁸ Հոդված 8-ում նշված են որպես էքսպատրիանտներ ճանաչված անձանց իրավունքները, այդ թվում՝ ցանկացած ուսումնական հաստատություն դիմելու, առանց աշխատանքի թույլտվության և մշտական կացության կարգավիճակի աշխատանքի դիմելու և բացառիկ անձնական պատճառներով Սլովակիայի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար դիմելու իրավունքները։ Սլովակիայի Հանրապետության տարածքում գտնվող էքսպատրիանտները կարող են ավելի հեշտությամբ ձեռք բերել անշարժ գույք, իսկ 70-ից բարձր տարիքի մարդիկ ստանում են զեղչեր և այլ արտոնություններ։

¹⁰⁹ Հոդված 2-ի համաձայն, սլովակ էքսպատրիանտի կարգավիճակ տրվում է Սլովակիայի քաղաքացիություն չունեցող անձանց, եթե նրանք ազգությամբ սլովակ են, կամ ունեն սլովակյան էթնիկական ծագում և սլովակյան մշակութային և լեզվամտածողություն։ Էթնիկական ծագում ասելով՝ օրենքը նկատի ունի դիմում ներկայացնողի՝ ազգությամբ սլովակ նախնիներից որևէ մեկին,

Էքսպատրիանտի կարգավիճակը հեշտացնում է մուտքի արտոնագիր և կացության կարգավիճակ ստանալը¹¹⁰։ Էքսպատրիանտի կարգավիճակի չափանիշները հստակ նշելով և դա կապելով որոշակի արտոնությունների հետ, Մլովակիայի օրենքը պատշաճ ձևով լուծում է ազգային ծագումը որոշելու հարցին բնորոշ քաղաքական և վարչական խնդիրները։

Ըստ ՀՀ արտգործնախարարության պարզաբանման, հայկական ծագումը որոշվում է կամ տվյալ անձի ազգանունով, կամ էլ նրա երկրում հայկական եկեղեցու կամ սփյուռքահայ որևէ կազմակերպության կողմից տրամադրված պաշտոնական փաստաթղթի միջոցով։ Այս խնդրի շուրջ օրենսդրական լուծումը տրվել է « Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին » ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում, որի համաձայն ծագումով հայ է այն անձը, ով ունի հայ նախնիներ¹¹¹։

Թերևս, ոչ ՀՀ արտգործնախարարության պարզաբանման, ոչ էլ օրենսդրական լուծումները չեն կարող ընդունվել որպես հստակ ուղենիշներ։ Ուստի, գործընթացը մեծ մասամբ կամայական է, ինչը կարող է տարամեկնաբանման տեղիք տալ։ Այնուամենայնիվ, հաշվի առնելով կացության հատուկ կարգավիճակի հետ կապված արտոնությունները և ազգային ծագման որոշման ակնհայտ քաղաքական բնույթը, ավելի թափանցիկ ուղենիշների ընդունումը ցանկալի է։

Կացության հատուկ կարգավիճակի համար առանցքային է նաև այն, որ ՀՀ նախագահի որոշումը այդ հարցում ըստ օրենքի վերջնական է և ենթակա չէ բողոքարկման։ Օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասը և 20-րդ հոդվածի 1-ին մասը, կարծես թե, հակասում են ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին։ Այսպես, վերոհիշյալ դրույթներով նախատեսվում է, որ հատուկ կացության կարգավիճակի տրամադրման մերժումը չի կարող բողոքարկվել դատական կարգով, մինչդեռ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք։ Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք»։ Իսկ 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու,իրավունք»։ Նշենք նաև, որ ՀՀ Սահմանադրական դատարանի 2006 թվականի նոյեմբերի 16-ի ՄԴՈ-665 որոշման համաձայն անվավեր է ճանաչվել ՀՀ

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

մինչև երրորդ սերունդը։ Դիմում ներկայացնողներն իրենց ծագումը ապացուցում են տարբեր փաստաթղթեր ներկայացնելու միջոցով՝ ծննդյան վկայական, մկրտության վկայական, տեղեկանք գրանցման գրասենյակից և այլն։ Օրենքը սլովակյան ազգային կազմակերպություններին թույլ է տալիս մասնակցել գործընթացին՝ սատարելով դիմում ներկայացնողի հայցը։

¹¹⁰ Հոդված 5-ի համաձայն, «Մլովակիայի Հանրապետության տարածք մուտք գործող Էքսպատրիանտները պարտավոր չեն գրավոր հրավեր կամ մուտքի արտոնագիր ունենալ, եթե դա թույլատրվում է երկկողմ միջպետական պայմանագրերով»։

¹¹¹ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 14.03.07./15(539) Հոդ.317 ՀՕ-33-Ն։

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը, համաձայն որի, ի թիվս այլ մարմինների, ընդհանուր իրավասության դատարաններում չէին կարող վիճարկվել ՀՀ նախագահի հրամանագրերը: Ընդ որում, որոշման հիմքը հենց Սահմանադրության վերը թվարկված հոդվածներով սահմանված դատական պաշտպանության իրավունքի խախտումն էր¹¹²:

Եվ վերջապես, անհարկի խիստ սահմանափակում կարող է դիտվել այն, որ "Օտարերկրացիների մասին" ՀՀ օրենքի 19-րդ հոդվածում նշված ցանկացած հիմքով կացության կարգավիճակ տալը մերժելու դեպքում օտարերկրացին կրկին կարող է դիմել կացության կարգավիճակ ստանալու համար միայն մեկ տարի հետո¹¹³: Մինչդեռ, "Օտարերկրացիների մասին" ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի դ/կետում նշված հիմքերից մեկով՝ եթե նա տառապում է վարակիչ հիվանդությամբ, որը սպառնում է բնակչության առողջությանը, ինչպես նաև գ/կետում նշված հիմքերից մեկով՝ եթե նա մուտքի թույլտվություն հայցելիս չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթեր, վերստին դիմելու համար մեկ տարվա ժամկետ սահմանելու փոխարեն ողջամիտ կլինեք, եթե այդ անձանց ընձեռվեր կրկին դիմելու իրավունք համապատասխանաբար առողջանալուց կամ անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելուց անմիջապես հետո:

6. ՀԱՇՎԱԴՐՈՒՄ

Հայաստանում երկար ժամանակ ապրող օտարերկրացիները պարտավոր են հաշվառվել ՀՀ ոստիկանությունում՝ ՀՀ կառավարության սահմանված կարգով: Այդ պահանջը միատեսակ է ժամանակավոր, մշտական և հատուկ կացության կարգավիճակներ ունեցող օտարերկրացիների համար¹¹⁴: Այդ հարցում օրենքի մյուս պահանջն այն է, որ մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացին Հայաստանի Հանրապետությունից վեց ամսից ավել բացակայելու դեպքում այդ մասին ընդամենը գրավոր ծանուցում է ՀՀ ոստիկանությանը¹¹⁵: Նման

¹¹² Տես՝ <http://www.concourt.am/Voroshum/list2006.htm> Քաղաքացիներ Ս.Գասպարյանի և Ա.Զեյնալյանի դիմումների հիման վրա ՀՀ քաղ.դատ.օր-ի 160 հոդվածի 1-ին կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

¹¹³ Տես՝ "Օտարերկրացիների մասին" ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասը:

¹¹⁴ Տես՝ նույնը. 17-րդ հոդվածի 4-րդ մասը և 18-րդ հոդվածի 6-րդ մասը:

¹¹⁵ Տես՝ նույնը. 17-րդ 5-րդ մասը:

պահանջ չի ներկայացվում ինչպես ժամանակավոր, այնպես էլ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացուն, ինչը ողջամիտ արտոնություն է: Եթե մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացին գրավոր չի ծանուցել ՀՀ ոստիկանությանը իր մեկնելու մտադրության մասին և վեց ամսից ավել բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, ապա նրան տրված կացության կարգավիճակը համարվում է անվավեր և օտարերկրացին զրկվում է կացության կարգավիճակից: Սակայն բուն գրանցման վերաբերյալ օրենքը հստակ չէ, ինչը կարող է հարցականի տակ դնել հաշվառման համակարգը պահպանելու նպատակահարմարությունը: Այսպես, օրենքը կոնկրետ չի նշում, թե երբ և ինչպես պետք է տեղի ունենա այդ գրանցումը, և որոնք են չգրանցվելու հետևանքները: Հատկապես հաշվառման ժամկետներին և հետևանքներին վերաբերող այս անորոշ պահանջը իրականացնող մարմիններին կարող է հնարավորություն ընձեռնել հաշվառման կարգը մեկնաբանել յուրովի, ինչը կարող է բերել չարաշահումների և անարդյունավետության:

Գրանցման/հաշվառման շատ պահանջներ, կարծես, ընդհանրապես չեն կատարվում, իսկ եթե կատարվում են, ապա միայն այն պատճառով, որ որոշ օտարերկրացիներ դրանք կատարում են սեփական կամքով:

Շատ եվրոպական երկրներում հաշվառումը համակարգվում է կացության կարգավիճակ տրամադրելու գործընթացի հետ: Կացության կարգավիճակն ուժի մեջ է մտնում միայն տեղական ոստիկանությունում կամ այլ պատկան մարմնում հաշվառվելուց հետո: Սյս պրակտիկան հաշվառման համար պատասխանատվությունը դնում է օտարերկրացու վրա, ինչը խրախուսում է վարչական կարգապահությունը և ապահովում է հաշվառման քաղաքականության հուսալիությունը՝ պետության համար: Նույնիսկ եթե կացության կարգավիճակը վավերական է առանց հաշվառման, գրանցվելու պարտավորությունը սովորաբար նախատեսված է օրենքով: Չեխիայի Հանրապետությունում հաշվառման պահանջը բացահայտ ընդգրկված է «Օտարերկրացիների կացության մասին» օրենքում, որտեղ նշվում է, որ բոլոր օտարերկրացիները (որոշ կանխատեսելի բացառություններով) պարտավոր են գրանցվել օտարերկրացիների ոստիկանության տեղական բաժնում, ժամանելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում¹¹⁶:

7. ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

7.1. ՀՀ քաղաքացիություն

¹¹⁶ «Օտարերկրացիների մասին» օրենք, Հոդված 93: Գրանցվելու պարտավորությունը չի տարածվում 15 տարեկանը չլրացած օտարերկրացիների, ինչպես նաև դիվանագետների և նրանց ընտանիքի անդամների և այլ հատուկ խմբերի վրա: Եվրամիության քաղաքացիները նույնպես պարտավոր են գրանցվել, սակայն ուրիշ ժամկետներում (ժամանելուց հետո 30 օրվա ընթացքում):

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքը կարծես երկու սկզբունքների խառնուրդ է՝ *jus soli* (անձը ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե ծնվել է երկրի տարածքում) և *jus sanguinis* (եթե անձի մայրը, հայրը կամ երեխան ՀՀ քաղաքացի են, ապա նա նույնպես կարող է ՀՀ քաղաքացիություն ձեռք բերել)¹¹⁷: Երեխան, ում ծնողները նրա ծնվելու պահին ՀՀ քաղաքացիներ են, անկախ ծնվելու վայրից ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն¹¹⁸: Եթե ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, ապա երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ¹¹⁹: ՀՀ քաղաքացիություն կարող է ստանալ նաև 18 տարին լրացած յուրաքանչյուր անձ, եթե նա, օրենքով սահմանված կարգով, վերջին երեք տարիներին մշտապես բնակվել է ՀՀ-ում, կարող է բացատրվել հայերեն և ծանոթ է ՀՀ Սահմանադրությանը¹²⁰: Առանց թվարկված պահանջների պահպանման՝ ՀՀ քաղաքացիություն կարող է ստանալ ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձը, ով՝ ա) ամուսնացել է ՀՀ քաղաքացու հետ կամ ունի ՀՀ քաղաքացի երեխա, բ) ում ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է ՀՀ քաղաքացիություն կամ ծնվել է ՀՀ-ում և ով 18 տարին լրանալուց հետո երեք տարվա ընթացքում դիմել է ՀՀ քաղաքացիություն ստանալու համար, գ) ով ազգությամբ հայ է, այսինքն՝ ունի հայ նախնիներ, դ) ով 1995 թ.հետո, իր դիմումի համաձայն, հրաժարվել է ՀՀ քաղաքացիությունից: ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումը կարող է մերժվել, եթե տվյալ անձն «իր գործունեությամբ վնասում է պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին և բարի համբավին»¹²¹:

ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու մասին դիմումները կարող են մերժվել տարբեր պատճառներով, օրինակ, եթե տվյալ անձի նկատմամբ հարուցված է քրեական գործ, եթե նրա նկատմամբ կա դատարանի կատարման ենթակա դատավճիռ, կամ էլ եթե քաղաքացիությունից նրա հրաժարվելը հակասում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերին¹²²:

Ընդհանուր առմամբ, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում մեծ տեղ է հատկացվում ընդհանուր չափանիշներին՝ ազգային անվտանգություն, հանրության բարքեր, պետական շահեր, ինչը բարձրացնում է կամայական մեկնաբանությունների և օրենքի անհավասար կիրարկման ռիսկը: Եթե այդ հասկացությունները չպարզաբանվեն ընթացակարգային իրավունքի կամ դատական նախադեպային իրավունքի միջոցով, ապա դա կարող է բերել օրենքի

¹¹⁷ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենք:

¹¹⁸ Տես՝ նույնը. Հոդված 11:

¹¹⁹ Համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե նա ծնվել է ՀՀ-ի տարածքում, կամ եթե ՀՀ քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ, կամ եթե ծնողները մշտապես բնակվում են ՀՀ-ի տարածքում:

¹²⁰ Տես՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մաս, ՀՀՊՏ 14.03.07./15(539) Հոդ.317 ՀՕ-33-Ն օրենքի խմբագրությամբ:

¹²¹ Նույնը, 13-րդ հոդվածի 6-րդ մաս:

¹²² Նույնը, 24-րդ հոդվածի 2-րդ մաս:

որակապես տարբեր կիրարկումների, ինչը կնվազեցնի Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենսդրության ընդհանուր ներդաշնակությունը: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» գործող օրենքը չի նշում, թե որ մարմինն է տալիս անձի իրավական կարգավիճակը հաստատող փաստաթղթեր, ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ քաղաքացիություն ձեռք բերելու կամ քաղաքացիությունից հրաժարվելու համար: Ցանկալի է փոփոխություններ մտցնել գործող օրենքի մեջ՝ ներառելով այս բոլոր մանրամասները:

ՀՀ սահմանադրության 30¹ հոդվածի 1-ին մասի վերջին դրույթի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման կարգը սահմանվում է օրենքով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, ոչ ոք չի կարող գրկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից, ինչպես նաև քաղաքացիությունը փոխելու իրավունքից: Այդ դրույթը համապատասխանում է ժողովրդավարական պետություններում սահմանադրական տարբեր ձևակերպումներով քաղաքացիությունից գրկվելու ուղղակի արգելքի գաղափարին¹²³: Այս համատեքստում դադարեցումն ու գրկումը ոչ միայն տարբեր իրավաբանական կատեգորիաներ են, այլև միմյանց չեն թղթակցում որպես ընդհանուր և հատուկ կամ ամբողջություն և մաս: Չնայած սահմանադրական այդ արգելքին՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված է, որ ՀՀ քաղաքացիությունը դադարեցվում է ՀՀ քաղաքացիությունից գրկվելու դեպքում: Այդ դրույթը մանրամասնվում է նույն օրենքի 25-րդ հոդվածում և նախատեսված է, որ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելուց հետո անձը կարող է գրկվել դրանից, եթե յոթ տարի մշտապես բնակվել է արտասահմանում և այդ ընթացքում հյուպատոսական հաշվառման չի կանգնել, եթե ՀՀ քաղաքացիությունը ձեռք է բերել կեղծ փաստաթղթերի հիման վրա և եթե ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն՝ խախտելով ՀՀ քաղաքացիության մասին օրենսդրությունը:¹²⁴ Անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետում վերացնել ՀՀ սահմանադրության հետ օրենքի այդ անհամապատասխանությունը:

7.2. Երկքաղաքացիություն

Շատ երկրներ ներկայումս նախընտրում են արտոնել երկքաղաքացիություն կամ բազմաքաղաքացիություն: Օրեցօր մեծանում է այն երեխաների թիվը, ում ծնողները տարբեր երկրների քաղաքացիներ են, իսկ պետություններն այլևս լուրջ չեն վերաբերվում ավանդական այն գաղափարներին, որ յուրաքանչյուր քաղաքացի պետք է նվիրված լինի միայն մեկ պետության:

¹²³ Տես՝ Գերմանիայի Սահմանադրության 16-րդ հոդվածը, Իսպանիայի Սահմանադրության 11-րդ հոդվածի 2-րդ մասը և այլ սահմանադրություններ:

¹²⁴ Տես՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենք, Հոդված 25:

Սահմանադրական փոփոխությունների համաձայն, երկքաղաքացիությունն այլևս *de jure* արգելված չէ, իսկ *de facto* այն ամրագրված է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13¹ հոդվածում:

Երկքաղաքացիության հարցը հատկապես օրախնդիր էր Հայաստանում՝ հաշվի առնելով Սփյուռքի մեծությունը: Հայաստանի Հանրապետության կառավարության գերակա խնդիրներից է՝ խորացնել հարաբերությունները Սփյուռքի հետ¹²⁵: Երկքաղաքացիությունն արտոնելը դրան հասնելու ճանապարհներից մեկն է:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-33-Ն ՀՀ օրենքով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը լրացվել է «Երկքաղաքացիություն» վերնագրով նոր՝ 13¹ հոդվածով: Այդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի է համարվում այն անձը, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության (երկրների) քաղաքացիություն: Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է միայն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները և կրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պատասխանատվությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օրենքով նախատեսված դեպքերի:

Պետք է նշել, որ օրենքով նախատեսված բացառությունները սահմանված են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքում, ՀՀ քրեական օրենսգրքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, ՀՀ ընտրական օրենսգրքում:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 3¹ հոդվածով կարգավորվում են երկքաղաքացիների զինապարտության հետ կապված իրավահարաբերությունները: Մասնավորապես սահմանված է, որ ՀՀ քաղաքացիություն ընդունած այլ պետության քաղաքացին ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից, եթե մինչև ՀՀ քաղաքացիություն ընդունելը ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել է այլ ընտրանքային զինվորական ծառայություն՝ բացառությամբ ՀՀ կառավարության կողմից սահմանված պետությունների: Սահմանված է նաև, որ այլ պետության քաղաքացիություն ընդունած ՀՀ քաղաքացին չի ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից, անկախ այն հանգամանքից, թե ծառայել է նա այլ պետությունում, թե ոչ:

ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվել է նոր 314¹ հոդվածով, որով սահմանվել է քրեական պատասխանատվություն՝ նաև այլ պետության քաղաքացիություն

¹²⁵ Տես՝ «Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգը»:

ընդունման կամ ստանալու դեպքում օրենքով սահմանված ժամկետում ՀՀ կառավարության լիազոր մարմինն չհայտնելու համար:

ՀՀ ընտրական օրենսգրքում կատարված լրացումներով և փոփոխություններով սկզբունքորեն լուծվել են հետևյալ խնդիրները՝

1. Հայաստանի Հանրապետությունում ընտրությունները անցկացվում են միայն Հայաստանի Հանրապետության տարածքում,
2. ՀՀ և միաժամանակ այլ պետության քաղաքացի հանդիսացող քաղաքացիները ընտրություններին մասնակցում են ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով,
3. Հանրապետության Նախագահի և Ազգային Ժողովի պատգամավորության թեկնածու չեն կարող առաջադրվել և այդ պաշտոնների թեկնածու չեն կարող գրանցվել ՀՀ այն քաղաքացիները, ովքեր ունեն նաև այլ պետության քաղաքացիություն:¹²⁶

8. ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը որպես միգրացիոն համակարգի լիարժեք աշխատանքն ապահովելու միջոցներ նախատեսում է արտաքսումը և դրա իրականացման մեխանիզմներ հանդիսացող պահումը և ձերբակալումը, ինչպես նաև քրեական և վարչական պատասխանատվությունը միգրացիոն կանոնները խախտելու համար, հանձնումը կամ միջազգային համագործակցությունը անկանոն միգրացիայի դեմ պայքարում:

8.1. Արտաքսում

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը, ի տարբերություն նախկինում գործող «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին» օրենքի, լուծում է արտաքսմանն առնչվող հիմնական խնդիրները: Օրենքը, մասնավորապես, պարունակում է արտաքսման մասին մանրամասն դրույթներ, հստակ սահմանելով, թե որոնք են արտաքսման բավարար հիմքերը (հոդված 30) և որոնք են արտաքսումն արգելող հանգամանքները (հոդված 32), սահմանում է, որ արտաքսման մասին գործը հարուցում է ոստիկանությունը՝ նման որոշման հիմքերի առկայության դեպքում (հոդված 31) և որ այն ենթակա է քննության դատական կարգով (հոդված 34, մաս 1): Օրենքը նախատեսում է արտաքսման մանրամասն կարգ, ներառյալ՝ արտաքսման հետ կապված ֆինանսական պատասխանատվություն (հոդված 34, մաս 2 և հոդված 36, մաս 5), դատական լուումներին ուղղակիորեն մասնակցելու իրավունք (հոդված 33), արտաքսման մասին որոշման գանգատարկում դատական ատյաններում, «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը խախտելու համար համապատասխան հիմքերի առկայության դեպքում արտաքսման ենթակա անձանց ձերբակալման մեջ պահելու կամ ազատ արձակելու մասին դրույթներ

¹²⁶ Տես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի, 1-ին հոդվածի 5-րդ կետ, 2-րդ հոդվածի 7-րդ կետ, 65-րդ հոդվածի 3-րդ կետ, 97-րդ հոդվածի 5-րդ կետ:

(հոդված 34, մաս 2) և բողոքարկման դեպքում արտաքսման գործընթացի կասեցում (հոդված 35):

Պետք է նշել, որ ՀՀ Քրեական օրենսգրքում արտաքսումը չի մտնում նախատեսված քրեական պատժի տեսակների մեջ¹²⁷:

8.1.1. Պահում և ձերբակալում

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 6-րդ գլխում ներառված դրույթներով կարգավորվում են այն իրավահարաբերությունները, որոնք ծագում են օտարերկրացիների կողմից «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը խախտելու դեպքում նրանց պահելու կամ ձերբակալելու առնչությամբ: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը, ի տարբերություն նախկինում գործող «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին» օրենքի, մասնավորապես, պարունակում է օտարերկրացիներին պահելու կամ ձերբակալելու մասին մանրամասն դրույթներ, հստակ սահմանելով, թե որոնք են ՀՀ պետական սահմանի անցման կետերում մուտքի թույլտվություն չունեցող անձանց պահելու հիմքերը, կանոնները, վայրը, ժամկետները, դատարան դիմելու ժամկետները, դատական կարգով մինչև մեկ տարի ժամանակով ՀՀ-ում գտնվելու ժամանակավոր թույլտվություն տալու հիմքերը (հոդված 37): Սահմանվել են նաև արտաքսման նպատակով օտարերկրացուն ձերբակալելու հիմքերը, կանոնները, վայրը, ժամկետները, դատարան դիմելու ժամկետները, օտարերկրացու ծագման պետության շահերը ՀՀ-ում ներկայացնողին ծանուցելու կարգը (հոդված 38): Պահվող կամ ձերբակալված օտարերկրացին այդ ընթացքում ունի բավարար իրավունքներ սեփական շահերը պաշտպանելու համար¹²⁸:

Եվրոպական երկրներում առանց փաստաթղթերի անձանց հետ ուղարկելու պարտականությունը դրվում է առևտրային տրանսպորտային ընկերությունների վրա, որոնք օրենքով պարտավոր են տեղափոխել միայն ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձանց: Այս դրույթը չկատարելու համար նախատեսված է տուգանք, որից հետո տրանսպորտային ընկերությունը պարտավոր է սեփական հաշվին տվյալ անձին վերադարձնել այն երկիրը, որտեղից նա ժամանել էր¹²⁹:

¹²⁷ Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգիրք, Հոդված 49:

¹²⁸ Չեխիայի Հանրապետության «Օտարերկրացիների կացության մասին» օրենքի Հոդված 171-ում թվարկվում են դատարանին դիմելու իրավունքից բացառությունները: Դրանցից են՝ մուտքի արտոնագրի մասին որոշումները, վարչական վտարման մասին որոշումները և կացության կարգավիճակի դադարեցման մասին որոշումները, եթե մինչև գործընթացի սկիզբը օտարերկրացին երկրի տարածքում բնակվել է ապօրինի:

¹²⁹ Այս պրակտիկան հանգեցրել է ավիատուղիների աշխատակիցների ուսուցման գործում տրանսպորտային ընկերությունների և ոստիկանության ավելի սերտ համագործակցության, ինչի շնորհիվ շատ ապօրինի սահմանափակումներ կանխվել են մինչև ինքնաթիռ հասնելը: Տուգանքի չափը տարբեր է՝ տարբեր երկրներում, սակայն դրանք սովորաբար բավականին բարձր են, մինչև 2000 ֆունտ ստերլինգ մեկ անձի համար Մեծ Բրիտանիայում կամ 5000 ֆունտ ստերլինգ մեկ անձի համար Չեխիայի Հանրապետությունում:

8.2. Իրավական պատժամիջոցներ

8.2.1. Պատասխանատվության ընդհանուր դրույթներ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը նախատեսում են պատժամիջոցներ միգրացիոն իրավախախտումների համար, ընդ որում պատժամիջոցներ կարող են կիրառվել ինչպես ՀՀ քաղաքացիների, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ: Քրեական օրենսգրքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված ցանկացած հանցանքի վրա, այդ թվում նաև՝ օտարերկրացիների կողմից կատարվածների, բացառությամբ դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձանց կողմից կատարվածների, որոնց դեպքում «քրեական պատասխանատվության հարցը ... լուծվում է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան»¹³⁰: Նմանապես, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը» տարածվում է բոլոր անձանց վրա, անկախ նրանց քաղաքացիությունից, բացի միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերից:

Քրեական օրենսգրքով նախատեսված միգրացիոն հանցագործություններ են. պետական սահմանն ապօրինի հատելը, թրաֆիկինգը, ապօրինի ձեռնարկատիրությունը, փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ և ձևաթղթեր կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը¹³¹:

Վարչական իրավախախտումների մասին օրենսգիրքը պատիժ է նախատեսում օտարերկրացիների, հրավիրողների և գործատուների՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը խախտելու համար: Մասնավորապես, վարչական պատասխանատվություն է նախատեսվում՝

1. օտարերկրացիների կողմից Հայաստանի Հանրապետությունում առանց վավերական արտոնագրի կամ կացության կարգավիճակի կամ անվավեր փաստաթղթերով բնակվելը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ երթևեկության կարգը խախտելը,

2. օտարերկրացուն Հայաստանի Հանրապետություն հրավիրողի՝ հրավիրվողի կեցության ծախսերը, այդ թվում՝ նրա հնարավոր բուժօգնության և Հայաստանի Հանրապետությունից մեկնելու ծախսերը հոգալու մասին պարտավորությունը խախտելը,

3. գործատուների (իրավաբանական անձանց դեպքում՝ դրանց գործադիր տնօրենների) կողմից առանց համապատասխան կացության կարգավիճակի կամ աշխատանքի թույլտվության օտարերկրացիներին աշխատանքի ընդունելը: Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 201-րդ հոդվածում այս

¹³⁰ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք», Հոդված 14, մաս 5:

¹³¹ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք», Հոդվածներ 329, 132, 188 և 325:

փոփոխությունները կատարվել են «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը ընդունելու առնչությամբ՝ 2006 թվականի դեկտեմբերի 25-ի օրենքով¹³²:

Օրենսգրքով նախատեսված պատժամիջոցները կարող են նպաստել դրանում սահմանված կանոնների կիրառմանը և լուծել կացության կարգավիճակներ ստանալու համար անհրաժեշտ պայմանների և միգրացիոն այլ խնդիրների հետ կապված հարցերը:

8.2.2. Հանձնում և ազատագրկման ձևով հետագա պատիժը կրելու համար փոխանցում

Հանձնումը և ազատագրկման ձևով հետագա պատիժը կրելու համար փոխանցումը Հայաստանում տեղի են ունենում այլ երկրներում ընդունված ձևաչափով: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում նշված է, որ «Օտարերկրացիների հանձնումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով»¹³³: Հայաստանը նման պայմանագրեր ունի կնքած Բուլղարիայի (1995), Վրաստանի (2000), Լատվիայի (2002) և Արաբական Միացյալ Էմիրությունների (2003) հետ:

Հայաստանում հանձնման հետ կապված սահմանափակումները նույնպես տիպական են: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով նախատեսված է, որ օտարերկրացիների հանձնումն արգելվում է, եթե այն արարքի համար, որի կատարման դեպքում օտարերկրացիները պատասխանատվության են ենթարկվում, նախատեսված է մահապատիժ, կամ լուրջ հիմքեր կան կասկածելու, որ նրանք կարող են ենթարկվել խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ նվաստացնող պատժի կամ վերաբերմունքի¹³⁴: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքն արգելում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հանձնումն այլ պետությունների¹³⁵: Քրեական օրենսգիրքն արգելում է օտարերկրյա քաղաքացիների հանձնումը որևէ օտար պետության, եթե հիմնավոր պատճառներ կան ենթադրելու, որ այդ անձը ենթարկվելու է ռասայական, ազգային կամ սեռական խտրականության կամ խոշտանգումների¹³⁶: Հանձնման պահանջը կարող է մերժվել նաև այն դեպքերում, եթե հանձնվող անձն այդ երկրում կարող է ենթարկվել մահապատժի¹³⁷:

¹³² Տես՝ ՀՀՊՏ 24.01.07./6 (530), Հոդ.110:

¹³³ Տես՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մաս:

¹³⁴ Նույնը, հոդված 41:

¹³⁵ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենք, Հոդված 5:

¹³⁶ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, Հոդված 16, մաս 3:

¹³⁷ Նույնը, Հոդված 16, մաս 4:

II. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱ

9. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Մինչև «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի ընդունումը Հայաստանում աշխատանքային միգրացիայի ռեժիմը կարգավորող իրավական դաշտը գրեթե բացակայում էր: Դրա հետ մեկտեղ Հայաստանը ավելի ու ավելի է զգում աշխատանքային միգրացիայի ծավալի աճի հետևանքները: Սույն հատվածում ներկայացված են համապատասխան միջազգային պայմանագրերն ու տեղական օրենսդրությունը, ինչպես նաև մի քանի առաջարկություններ ապագայի համար:

Հայաստանը միացել է աշխատանքային միգրացիային առնչվող այնպիսի կարևոր միջազգային պայմանագրերի, ինչպիսիք են Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներից «Աշխատանքի նպատակով միգրացիայի մասին» 1949 թ. կոնվենցիան և «Աշխատանքային միգրանտների մասին» (Լրացուցիչ Դրույթներ) կոնվենցիան (1975 թ.), սակայն առայժմ չի ստորագրել աշխատանքային միգրացիային առնչվող առանձին կարևոր միջազգային պայմանագրեր:¹³⁸ Հայաստանը միացել է մարդու իրավունքներին առնչվող մի շարք կարևոր միջազգային կոնվենցիաների, որոնց համաձայն պարտավոր է պաշտպանել իր տարածքում գտնվող բոլոր անձանց, այդ թվում՝ աշխատանքային միգրանտների, մարդու իրավունքները: Հայաստանը միացել է նաև մի շարք տարածաշրջանային և երկկողմ պայմանագրերի՝ «Աշխատանքային միգրացիայի ոլորտում համագործակցության մասին» ԱՊՀ պայմանագրին (1994 թ.) և «Աշխատանքային միգրանտների սոցիալական պաշտպանության մասին» ԱՊՀ պայմանագրին: Սակայն վերջինիս դրույթների կիրառման համար խիստ անհրաժեշտ են լրացուցիչ երկկողմ համաձայնություններ: Հայաստանն աշխատանքային միգրացիայի մասին մի շարք երկկողմ պայմանագրեր ունի ԱՊՀ մի քանի պետությունների, օրինակ՝ Ուկրաինայի և Բելառուսի հետ¹³⁹:

10. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

1994 թ.-ին ԱՊՀ երկրները ստորագրել են համաձայնագիր «Աշխատանքային միգրացիայի և աշխատանքային միգրանտների սոցիալական պաշտպանության ոլորտներում համագործակցության մասին»: Հայաստանում այդ համաձայնագիրն

¹³⁸ Օրինակ՝ «Աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիան, «Աշխատանքային միգրանտների իրավական կարգավիճակի մասին» եվրոպական կոնվենցիան:

¹³⁹ «Համաձայնագիր Հայաստանի կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև իրենց պետությունների սահմաններից դուրս աշխատող Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին», որը ստորագրվել է 1995 թ. հունիսի 17-ին: «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև իրենց պետությունների սահմաններից դուրս աշխատող քաղաքացիների ժամանակավոր աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին», որը ստորագրվել է 2000 թ. հուլիսի 19-ին:

ուծի մեջ է մտել 1996 թ.-ի փետրվարի 26-ին: Այն պարունակում է մի շարք փոխհամաձայնություններ աշխատանքային միգրացիայի, ավելի կոնկրետ՝ ԱՊՀ երկրներում աշխատանքային միգրանտների սոցիալական պաշտպանության ոլորտում: Մասնավորապես, համաձայնագիրը պարունակում է այսպիսի դրույթներ՝

- Անդամ-երկրների ավարտական և այլ վկայականների, որակավորումների, գիտական աստիճանների, կոչումներն ու որակավորումը հաստատող փաստաթղթերի ճանաչում,
- Անդամ-երկրներում աշխատանքային ստաժի մասին գրառումների ճանաչում,
- Անդամ-երկրների ազգային օրենսդրությամբ երաշխավորված հավասար պայմաններ աշխատանքային միգրանտների համար, այդ թվում՝ աշխատողներին հասանելիք սոցիալական արտոնություններ և հատուկ պայմաններ,
- Կրկնակի հարկման բացառում,
- Աշխատանքային միգրանտների՝ ազգային օրենսդրությամբ երաշխավորված սոցիալական պաշտպանությունից, ապահովագրությունից և բժշկական ծառայություններից օգտվելու հնարավորություն (կենսաթոշակից բացի):

Համաձայնագիրն արտոնում է աշխատանքային միգրանտների թվի քվոտաների սահմանումը, ինչը պետք է կարգավորվի կողմերի միջև երկկողմ համաձայնագրերով:

11. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

«Օտարերկրացիների մասին» օրենքը սահմանում է «աշխատանքի թույլտվություն» տերմինը որպես իրավասու մարմինների կողմից տրվող «թույլտվություն», որը հաստատում է, որ տվյալ օտարերկրյա քաղաքացին մուտքի արտոնագիր ստանալուց հետո Հայաստանում աշխատելու իրավունք ունի:

Օրենքով սահմանվում են օտարերկրացիների հետ աշխատանքային իրավահարաբերությունների ծագման, փոփոխման և դադարեցման հիմքերը (հոդված 22), դրանց իրականացման երաշխիքները (հոդված 22, մաս 1-ին, հոդված 27, մասեր 1-ին, 2-րդ, հոդված 29), մեխանիզմները, արգելքների և սահմանափակումների շրջանակը, աշխատանքային պայմանագրերի կնքման կարգը (հոդված 27), օտարերկրացիների և գործատուների պատասխանատվությունը՝ աշխատանքի թույլտվության կանոնների պահանջները խախտելու համար: Օրենքը կարգավորում է նաև աշխատանքի թույլտվության տրամադրումը մերժելու հիմքերը (հոդված 25) և դրանք դատական կարգով բողոքարկելու կարգը (հոդված 26): Սահմանվել են այն բացառությունները, երբ օտարերկրացին կարող է աշխատել Հայաստանի Հանրապետությունում առանց թույլտվության (հոդված 23):

Ընդհանուր առմամբ, օտարերկրացիների աշխատանքային միգրացիայի նոր ռեժիմը կարող է գնահատվել որպես հավասարակշռված մոտեցում ներկայիս տնտեսական զարգացման պայմաններում:

Վերլուծությունը, սակայն, վկայում է, որ աշխատանքային միգրացիայի առանձին կանոններ, կարծես թե, կարող են էապես սահմանափակել գործատուների առևտրային ազատությունը կամ օտարերկրացիների՝ աշխատանքային իրավունքի իրականացման հնարավորությունները: Դրանց մեջ կարևորվում է օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ օտարերկրացուն աշխատանքի թույլտվությունը մերժելու մասին որոշումը դատական կարգով բողոքարկելու հնգօրյա ժամկետը: Դա կարող է դիտվել որպես դատական պաշտպանություն ստանալու անհավասար կարգավիճակ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը, ինչպես արդեն նշվել է, Հայաստանում աշխատանքի թույլտվության ռեժիմը խախտելու համար արդեն նախատեսում է համաչափ պատիժներ: Սակայն միգրացիոն համակարգի մեծ բացթողումը դրա կիրառման խնդիրն է:

11.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՉԵՒԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Չեխիայի Հանրապետությունը մանրամասն կարգավորում է օտարերկրացիների աշխատանքը երկրում և սեփական քաղաքացիների աշխատանքն արտասահմանում¹⁴⁰: Օտարերկրացիների աշխատանքը կարգավորվում է «Աշխատանքի մասին» օրենքով, իսկ «Օտարերկրացիների կացության մասին» օրենքը կարգավորում է աշխատանքի թույլտվություն ունեցող օտարերկրացիների կարգավիճակը: Արտագնա աշխատանքի կամ օտարերկրացիների աշխատանքի որոշ այլ ասպեկտներ կարգավորված են այլ օրենքներով¹⁴¹: Զբաղվածության (այդ թվում՝ օտարերկրացիների) համար պատասխանատու է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

Սկզբունքորեն, օտարերկրյա ցանկացած քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող ցանկացած անձ կարող է աշխատել Չեխիայի տարածքում, եթե գործատուն ստացել է համապատասխան թույլտվություն, իսկ տվյալ անձը ստացել է աշխատանքի թույլտվություն՝ կացության համապատասխան կարգավիճակի հետ միասին: Օտարերկրացուն աշխատանքի ընդունելու թույլտվությունը տրվում է աշխատանքի տեղական վարչության կանոնների համաձայն, ինչպես նշված է «Վարչական օրենսգրքում»: Թույլտվությունների և աշխատանքի թույլտվությունների համար գանձնվում է համապատասխան տուրք: Գործատուն

¹⁴⁰ Հարցազրույց օտարերկրացիների աշխատանքի վարչության ներկայացուցիչ Պ. Բուսկովայի հետ, Չեխիայի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Պրագա, 2 դեկտեմբերի, 2004 թ.:

¹⁴¹ «Աշխատանքի մասին» օրենք թիվ 435/2004 Coll., «Օտարերկրացիների կացության մասին» օրենք թիվ 326/1999, «Աշխատանքային օրենսգիրք» թիվ 65/1965, «Ընդհանուր սոցիալական ապահովության մասին» օրենք թիվ 589/1992, Եվրոպական հանձնաժողովի կանոններ թիվ 1612/68, 311/76 և այլն:

կարող է դիմել օտարերկրացուն աշխատանքի ընդունելու թույլտվության համար միայն այն դեպքում, եթե թափուր տեղի համար նախապես տեղեկացրել է աշխատանքի վարչությանը, և եթե այդ տեղը չի տրամադրվել Չեխիայի քաղաքացիություն կամ «Աշխատանքի մասին» օրենքով դրան հավասար կարգավիճակ ունեցող դիմորդին: Գործատուն պարտավոր է օտարերկրացուն առաջարկել այն աշխատավարձը, որը կառաջարկել է Չեխիայի քաղաքացուն, իսկ թույլտվությունը տրվում է միայն այն դեպքում, եթե օտարերկրացին աշխատանքի վարչությունից ստացել է աշխատանքի թույլտվություն, ունի մուտքի վավեր արտոնագիր (որը նրան տալիս է նշված աշխատանքի ընթացքում բնակվելու և աշխատելու իրավունք) և ֆիքսված ժամկետով գրավոր պայմանագիր: Օտարերկրացու սոցիալական ապահովության վճարների համար պատասխանատու է գործատուն:

Արտագնա աշխատանքի մեկնող Չեխիայի քաղաքացիներին վերաբերող ընթացակարգերը միանգամայն տարբեր են: Դրանք պայմանավորված են նրանով, թե որ երկրում է պատրաստվում աշխատել Չեխիայի քաղաքացին, քանի որ աշխատանքի կանոնները կարգավորվում են տվյալ երկրի համապատասխան օրենքներով: Չեխիայի Հանրապետության բոլոր քաղաքացիները պարտավոր են մասնակցել սոցիալական ապահովության ազգային ծրագրին: Արտասահմանում աշխատելիս նրանք պարտավոր են տեղեկացնել երկրից իրենց բացակայության մասին և սկսել սոցիալական ապահովության համակարգից դուրս գալու գործընթացը: Այս ոլորտը կարգավորվում է նաև երկկողմ և բազմակողմ համաձայնագրերով: Այս համաձայնագրերը ավելի քիչ կարևոր են նրանց համար, ովքեր գտնվում են Եվրամիության համակարգից դուրս:

Օտարերկրացիների աշխատանքի չեխական համակարգում առաջնային դեր են խաղում աշխատանքի տեղական վարչությունները: Այս պրակտիկան հիմնված է փորձի, ինչպես նաև այն տրամաբանության վրա, որ տեղական գրասենյակներն ավելի լավ են ճանաչում իրենց շրջանային և/կամ տեղական աշխատանքի շուկան, և հետևաբար ուրիշներից լավ կարող են գնահատել աշխատանքի ընդունվելու դիմումները: Թեև ասվածը Հայաստանի պարագայում այդչափ օրախնդիր չէ, լավ կլիներ, որ Հայաստանի իշխանությունները հետագայում ընդունվելիք համապատասխան օրենքներում ներառեին այս դրույթը, որով աշխատանքի տեղական վարչությունները լիազորվում են աշխատանքի թույլտվություններ և արտոնագրեր տրամադրել:

Չեխիայի Հանրապետությունը վերջերս նախաձեռնել է աշխատանքային իմիգրացիայի ոլորտում «Որակյալ աշխատողների ակտիվ ընտրության» փորձնական մի ծրագիր: 2002 թ. ներմուծված այս ծրագրի հիմքում ընկած էր Չեխիայում դիտարկվող աշխատուժի տարիքային-ժողովրդագրական պատկերի փոփոխման հետևանքների վերլուծությունը, և այն միտված էր պարզեցնելու Չեխիայի Հանրապետությունում մշտապես մնալու ցանկություն ունեցող որակյալ միգրանտ-աշխատողներին առնչվող ընթացակարգերը: Որակյալ աշխատուժի չեխական սխեմայի առանցքային հատկանիշները ներառում են միավորների վրա հիմնված մի համակարգ, որով ավելի բարձր միավորներ են շնորհվում կրթության, մասնագիտական փորձի և ընտանեկան կարգավիճակի համար, և ավելի

հեշտացվում է մշտական բնակչի կարգավիճակ ստանալու հարցը՝ դրա համար նախատեսված պարտադիր տասը տարի ժամանակը սխեմայի մասնակիցների և նրանց ընտանիքների անդամների համար կրճատելով և դարձնելով մինչև 2.5 տարի: Ծրագրի հաջողությունը դեռևս պետք է գնահատվի: Տեսակետներ կան, որ այս սխեման չի անդրադառնում Չեխիայի Հանրապետությունում նոր աշխատատեղերի խնդրին, ոչ էլ հատուկ աշխատանքային թույլտվություններ կամ արտոնագրեր է ապահովում: Դրա հիմնական նպատակն է՝ խրախուսել նրանց, ովքեր արդեն ձեռք են բերել Չեխիայի Հանրապետությունում աշխատանք ստանալու պայմանավորվածություններ, մասնակցել նշված սխեմային՝ մշտական բնակության իրավունք ստանալու համար պահանջվող ժամանակահատվածը կրճատելու նպատակով: Այս կարգի դրույթը հստակորեն խաբսխված է հետևյալ տրամաբանության վրա. ինտեգրացիոն ընթացակարգերի պարզեցման միջոցով շահագրգռել բարձրորակ աշխատուժ հանդիսացող միգրանտներին՝ մնալ երկրի տարածքում: Միևնույն ժամանակ, ծրագրի արդյունավետությունը և ծախսերի առումով շահավետ լինելը դեռևս պարզ չէ:

12. ԱՐՏԱԳՆԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՈՒՄ

Լինելով հարուստ աշխատանքային կապիտալ և գործազրկության բարձր մակարդակ ունեցող երկիր, Հայաստանը կանգնած է արտագնա աշխատանքի ռեժիմի համապատասխան իրավական կարգավորման անհրաժեշտության առջև: Այլ երկրների փորձը ցույց է տալիս, որ այդ ոլորտի կարգավորումը զգալի արդյունքների կարող է բերել՝ տեղական աշխատուժի համար արտասահմանյան պայմանագրեր ձեռք բերելու և օտար երկրներում պայմանագրային հիմունքներով աշխատող ՀՀ քաղաքացիների համար ավելի լավ պայմաններ ապահովելու առումով: Այս կարգի պետական ծրագրերն, իհարկե, հիմնված են համապարփակ իրավական համակարգի վրա:

Ներկայումս արտագնա աշխատանքը գրեթե կարգավորված չէ Հայաստանում: Միգրացիայի և փախստականների նախկին վարչությունը /ներկայումս՝ Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն ծառայություն/ մի քանի տարի առաջ արձագանքել էր այդ բացին՝ մշակելով «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագիծ: 2001 թ. սկզբին Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից հրավիրված փորձագետ Թոմաս Աչակոստն հատուկ առաքելությամբ այցելել էր Հայաստան՝ օրենքի նախագծի վաղ տարբերակներից մեկն ուսումնասիրելու համար: Այդ փորձագետը բազմակողմանիորեն վերլուծել էր օրենքի նախագիծը՝ լավագույն միջազգային պրակտիկայի և մարդու իրավունքների չափանիշների տեսանկյունից, և պատրաստել էր մի քանի առաջարկություններ օրենքի նախագծի վերաբերյալ¹⁴²:

Միգրացիայի վարչությունը լուրջ փոփոխությունների է ենթարկել օրենքի նախագիծը՝ հաշվի առնելով միջազգային փորձագետի առաջարկությունները:

¹⁴² Թ. Աչակոստ, «Հայաստանի Հանրապետությունում արտագնա աշխատանքների կազմակերպման հարցերով առաքելության զեկույցը»:

«Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նոր նախագիծը ներառում է փորձագետի առաջարկությունները հետևյալ դեպքերում՝

- 1) օրենքի նոր նախագիծը սահմանում է, որ այն երկրներում, որտեղ ՀՀ քաղաքացիները կարող են ենթարկվել քաղաքական կամ այլ ճնշումների, արտագնա աշխատանքի աննպատակահարմարության մասին պետության հայտարարությունները կրում են զուտ խորհրդատվական բնույթ: Նոր նախագծում նաև նշվում է, որ այդ հայտարարությունները «չեն կարող հիմք հանդիսանալ քաղաքացիներին այդ պետություններ արտագնա աշխատանքի մեկնման արգելքի համար»¹⁴³. դրանով իսկ վերացվում է տեղաշարժի ազատության հնարավոր խոչընդոտներից մեկը,
- 2) նոր նախագիծը թույլ չի տալիս, որ օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք մասնակցեն ՀՀ-ից արտագնա աշխատանքների ծրագրին¹⁴⁴,
- 3) նոր նախագիծը հանվել է այն դրույթը, համաձայն որի կառավարությունը կարող է կազմել մասնագիտությունների ցանկ, որոնք պետք է ընդգրկված լինեն արտագնա աշխատանքների ծրագրի մեջ¹⁴⁵: Այդ դրույթը դիտվել էր որպես խտրականություն պարունակող և պահանջարկի վրա հիմնված աշխատաշուկայի իրողություններին հակասող¹⁴⁶,
- 4) փորձագետն առաջարկել էր նաև կրկնակի հարկումից խուսափելու միջոցներ կիրառել, որպեսզի էմիգրանտները չհարկվեն Հայաստանում, քանի որ հավանական է, որ նրանք հարկեր են վճարում այն երկրում, որտեղ աշխատում են: Օրենքի նախագծի վերջին տարբերակում բացակայում են ավելի վաղ տարբերակներում զետեղված դրույթները, որոնք հարկային և մաքսային արտոնություններ էին նախատեսում էմիգրանտ-աշխատողների համար: Հավանաբար, դրանք հանվել են այն պատճառով, որ օրենսդիրները նախընտրում են այդ խնդիրը լուծել միջազգային պայմանագրերով, և ոչ թե միակողմանի հարկային արտոնություններով¹⁴⁷:

¹⁴³ «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագիծ, Հոդված 3, կետ 2 (բ):

¹⁴⁴ «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագծի 2004թ. տարբերակ , Հոդված 2

¹⁴⁵ «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագծի վաղ տարբերակ (2001), Հոդված 7:

¹⁴⁶ Թ. Աչախոս. «Հայաստանի Հանրապետությունում արտագնա աշխատանքների կազմակերպման հարցերով առաքելության զեկույց», «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագծին վերաբերող բաժին, պարբերություն 11, էջ 4:

¹⁴⁷ Կրկնակի հարկումից խուսափելու հարցն ընդգրկված է «Աշխատանքային միգրացիայի և աշխատանքային միգրանտների սոցիալական պաշտպանության ոլորտներում համագործակցության մասին» ԱՊՀ համաձայնագրում: Հայաստանը ստորագրել է նաև մի շարք երկկողմ պայմանագրեր տարբեր երկրների հետ, որոնց մեջ պարունակվում են կրկնակի հարկումից խուսափելու միջոցներ:

Փորձագետը նաև խորհուրդ է տվել, որ Հայաստանը ստորագրի Աշխատանքի միջազգային կազմակերպության «Սոցիալական ապահովության մասին» կոնվենցիան, որը «Հայաստանին թույլ կտա պահանջել այն երկրներից, որտեղ աշխատում են ՀՀ քաղաքացիները (պայմանով, որ տվյալ երկիրը նույնպես միացել է այդ կոնվենցիային), որ նրանք համաձայնեն փոխանցել իրենց մոտ աշխատող ՀՀ քաղաքացիների սոցիալական վճարները Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության համակարգ»¹⁴⁸։ Եվ վերջապես, Աչակոսոյի զեկույցը մեծ ազդեցություն է ունեցել միգրացիոն գործակալության ««Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հայեցակարգի» վրա, որի մեջ համաշխարհային աշխատաշուկայի՝ պահանջարկի վրա հիմնված լինելու հանգամանքը, մարկետինգային գործողություններին պետական մարմինների և դիվանագիտական ներկայացուցչությունների մասնակցությունը և աշխատանքի մեկնած էմիգրանտների իրավունքների պաշտպանությունը շեշտված են որպես պետության հիմնական նպատակները արտագնա աշխատանքների ծրագրերում։

12.1 «ԱՐՏԱԳՆԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Համեմատած առաջին տարբերակի հետ (2001 թ.) «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագծի վերջին տարբերակը (2004 թ.) լավ մշակված իրավական օրինագիծ է, որտեղ շտկվել են նախորդ տարբերակներում տեղ գտած բոլոր հիմնական վիճելի հարցերը, ինչպես նաև մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխանության վերաբերյալ մտահոգությունները։ Օրենքի նախագծի վերջին տարբերակը նախատեսում է արտագնա աշխատանքների կազմակերպման պետական ծրագրի մշակում, տրամադրում է ծրագրի նպատակներին հասնելու հստակ միջոցներ և սահմանում է այդ ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունքները։ Օրենքի նախագիծը համապատասխանում է միջազգային պարտավորություններին, ինչպես նաև ազգային օրենսդրությանը։ Մակայն, աշխատանքի տեղավորման կազմակերպությունների լիցենզավորման խնդիրը կարող է որոշ չափով հակասել «Լիցենզավորման մասին» օրենքին։

Օրենքի նախագիծը չի հակասում մարդու իրավունքների միջազգային չափանիշներին, սակայն 10-րդ հոդվածի դրույթները կարող են իրավական տեսակետից դժվար իրագործելի թվալ։ Հոդվածի առաջին կետում նշված է, որ «արտագնա աշխատանքի կարող են մեկնել 18 տարեկանը լրացած անձինք»¹⁴⁹։ Այս դրույթը, կարծես, իրավասության սահմանափակումներ է դնում այլ երկրների վրա։ Հնարավոր է, որ սա տեխնիկական ձևակերպումների խնդիր է, և ոչ թե

¹⁴⁸ Թ. Աչակոսո. «Հայաստանի Հանրապետությունում արտագնա աշխատանքների կազմակերպման հարցերով առաքելության զեկույց», «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագծին վերաբերող բաժին, վերջին պարբերություն, էջ 3:

¹⁴⁹ «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագիծ, Հոդված 10, կետ 1:

սկզբունքային հարց: Ուստի, բոլոր կասկածները փարատելու համար տվյալ հոդվածն անհրաժեշտ է վերաձևակերպել, որպեսզի արտագնա աշխատանքի կարողանան մեկնել միայն այն անձինք, ովքեր իրավունք ունեն աշխատանքի պայմանագրեր կնքել ինչպես Հայաստանում, այնպես էլ այն երկրում, որտեղ պատրաստվում են աշխատել: Բսկ 3-րդ կետն անհրաժեշտ է փոփոխել այնպես, որ արգելվի աշխատանքների պետական ծրագրում մասնակցությունն այն դեպքերում, երբ տվյալ երկրում աշխատանքային պայմանները հակասում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը:

Օրենքը նկարագրում է պետական ծրագրի այն միջոցները, որ պետությունը և համապատասխան մարմինները կարող են կիրառել վերոհիշյալ նպատակներին հասնելու համար: Այս միջոցներից են կառավարության, նրա համապատասխան մարմինների, ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից այլ երկրներում աշխատանքի շուկայի ուսումնասիրությունը /մարկետինգ/ և արտագնա աշխատանքի պայմանագրերի կնքելու գործընթացի հեշտացումը, արտագնա աշխատանքի մեկնող անձանց իրավունքների պաշտպանությունն արտասահմանում, արտագնա աշխատանքի մեկնած անձանց կամ մեկնել ցանկացողներին խորհրդատվություն տրամադրելը, միջազգային պայմանագրեր կնքելը, ինչպես նաև լիցենզավորման և պայմանագրերի մոնիտորինգի միջոցով արտագնա աշխատանքների կազմակերպման գործընթացի վերահսկողությունը¹⁵⁰:

Օրենքի նախագծի վերջին տարբերակի հիմնական բնութագրերից է մեծ ուշադրությունն աշխատանքային միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանության հարցերին: Կարևոր կետերից են

- արտագնա աշխատանքների կազմակերպման գործում մասնակցող կողմերի միջև հարաբերությունների պայմանագրային բնույթի նախատեսումը: Պայմանագրում ներառվում է կազմակերպության կողմից տրամադրվող ծառայությունների շրջանակը, օտարերկրյա գործատուի և արտագնա աշխատանքի մեկնել ցանկացողի միջև աշխատանքային պայմանագիրը և արտագնա աշխատանքներ կազմակերպող կազմակերպության և օտարերկրյա գործատուի միջև պայմանագիրը,
- պտենցիալ աշխատողների հանդեպ արտագնա աշխատանքներ կազմակերպող կազմակերպությունների պարտավորությունների մանրամասն նկարագրություն,
- աշխատողի և արտագնա աշխատանքներ կազմակերպող կազմակերպությունների նկատմամբ օտարերկրյա գործատուների պարտավորությունների սահմանում:

Օրենքի նոր նախագծի ևս մի կարևոր բնութագիրն այն է, որ նախագծում մեծ ուշադրություն է դարձվում արտագնա աշխատանքներ կազմակերպող կազմակերպությունների լիցենզավորման հարցին: Օրենքի նախագծի համաձայն,

¹⁵⁰ «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագիծ, Գլուխ 2 (Արտագնա աշխատանքների կազմակերպման բնագավառում պետական մարմինների իրավասությունները):

նախատեսվում է մասնավոր ընկերությունների մասնակցությունը պետական ծրագրում: Արտագնա աշխատանքների կազմակերպման գործում մասնավոր սեկտորի մասնակցությունը պահանջում է այնպիսի միջոցների կիրառում, որոնց օգնությամբ պետությունը կարողանա վերահսկել և մոնիտորինգի ենթարկել մասնավոր սեկտորի գործողությունները: Գործընթացի արդյունավետ մոնիտորինգը պետությանը կարող է օգնել քաղաքացիներին առաջարկվող պայմանագրերի օրինականությունը վերահսկելու, ինչպես նաև միգրանտների իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու հարցում: Միևնույն ժամանակ, մասնավոր կազմակերպությունների լիցենզավորումը կարող է դիտվել որպես աշխատանքային պայմանագրերի ապօրինի միջնորդման և տրաֆիկինգի դեմ պայքարի եղանակ:

Օրենքի կիրարկման տեսակետից, մասնավոր կազմակերպությունների լիցենզավորումը թույլ է տալիս պարզել, թե որ կազմակերպությունները չեն հետևում օրենքի պահանջներին: Այս առումով, կարծես, արդարացի է այն պնդումը, որ լիցենզավորման ծրագիրը պետք է պարունակի մի շարք պարտադիր «պայմաններ և սահմանափակումներ», որոնք կօգնեն հայտնաբերել պոտենցիալ չարաշահողներին¹⁵¹: Լիցենզիա ստացողները պետք է պարտադիր կարողանան ապացուցել իրենց գործողությունների, ինչպես նաև աշխատանքի ընթացքում ծագած հնարավոր հարցերի համար ֆինանսական պատասխանատվություն ստանձնելու կարողությունը: Այս պատճառով փորձագետն առաջարկել է աշխատանքի տեղավորման մասնավոր կազմակերպություններն այս փուլում ծրագրից հանելու տարբերակը, մասնավորապես, նշելով, որ «այս պահին մասնավոր սեկտորի մասնակցությունը կարող է նպատակահարմար չլինել Հայաստանի համար, հաշվի առնելով արտագնա աշխատանքների կազմակերպման հետ կապված նախնական ծախսերի մեծությունը և կենսունակ ձեռնարկություն մնալու համար գործունեության որոշակի մինիմալ ծավալ ապահովելու անհրաժեշտությունը»¹⁵²: Ոչ մի այլընտրանքային տարբերակ, այսպիսով, չի առաջարկվում: Սույն զեկույցը պաշտպանում է հենց սկզբից մասնավոր ընկերությունների մասնակցությունը թույլ տվող ընթացակարգերի ստեղծումը: Մակայն անհրաժեշտություն կա համապատասխան փոփոխություն մտցնել «Լիցենզավորման մասին» օրենքում, որպեսզի հնարավոր լինի լիցենզավորել արտագնա աշխատանքներ կազմակերպող կազմակերպությունները: «Լիցենզավորման մասին» ՀՀ գործող օրենքն աշխատանքի տեղավորման ընկերությունների և արտագնա աշխատանքի կազմակերպման ոլորտում նրանց գործունեության լիցենզավորում չի նախատեսում:

¹⁵¹ Թ. Աչակոսո. «Հայաստանի Հանրապետությունում արտագնա աշխատանքների կազմակերպման հարցերով առաքելության զեկույց», Լիցենզավորման խնդիրներին վերաբերող բաժին, էջ 8:

¹⁵² Թ. Աչակոսո. «Հայաստանի Հանրապետությունում արտագնա աշխատանքների կազմակերպման հարցերով առաքելության զեկույց», Լիցենզավորման խնդիրներին վերաբերող բաժին, էջ 8:

12.2 «ԱՐՏԱԳՆԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

«Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագիծը դեռ չի ընդգրկվել Ազգային Ժողովի օրակարգում: Ուստի, աշխատանքային միգրանտների հոսքը դեպի արտասահման դեռևս բավարար չափով կարգավորված չէ: Աշխատանքային արտագաղթն Ազգային Ժողովի գերակա խնդիրներից մեկն է, ինչպես նշված է «Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգում»: Հայեցակարգում նկարագրվում է ՀՀ կառավարության՝ աշխատանքային արտագաղթի հետ կապված ռազմավարությունը, որի նպատակն է՝ Հայաստանի ինտեգրացումը միջազգային աշխատաշուկային: Հայեցակարգում նշված են կառավարության հետևյալ գերակա խնդիրները՝

- աշխատանքային արտագաղթի օրենսդրական կարգավորում և պետական վերահսկողություն,
- աշխատանքային էմիգրանտների իրավունքների և շահերի պետական պաշտպանություն,
- ՀՀ քաղաքացիներին արտերկրում աշխատանքի տեղավորման նպատակով, ինչպես նաև նրանց սոցիալական և իրավական պաշտպանությանն ուղղված երկկողմ պայմանագրերի կնքում,
- աշխատանքային էմիգրանտների, և հատկապես բարձրակարգ մասնագետների, արվեստի և սպորտի գործիչների, ինչպես նաև հմուտ բանվորների հայրենադարձության խրախուսում¹⁵³:

Հայեցակարգը պարունակում է արտագնա աշխատանքների կարգավորման ծրագրի և «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագիծ մշակելու համար անհրաժեշտ հիմնական սկզբունքները: Ակնկալվում է, որ կառավարությունը կպաշտպանի օրենքի վերջին նախագիծը, և արտագնա աշխատանքի կազմակերպման պետական ծրագրի իրականացումը կդառնա հավանական:

13. ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

Վերջին տարիներին դրամական փոխանցումների ծավալը ողջ աշխարհում աճել է: 2003 թ. զարգացող երկրներ ուղարկվող դրամական փոխանցումների ծավալը կազմել է մոտ 93 միլիարդ ԱՄՆ դոլար, ինչը գերազանցել է բոլոր աղբյուրներից ստացվող՝ զարգացմանն ուղղված օգնության ծավալները¹⁵⁴: 2005 թ. այդ փոխանցումների ծավալը ողջ աշխարհում գերազանցել է 223 միլիարդ ԱՄՆ դոլարը: Այդ գումարից 197 միլիարդ ԱՄՆ դոլարն ուղարկվել է զարգացող

¹⁵³ «Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգ», Մաս 3. «Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն գործընթացների պետական կարգավորման գերակա խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները», կետ 2:

¹⁵⁴ Համաշխարհային Բանկի խումբ, «Միջազգային միգրացիա. գիտելիքներ հանուն փոփոխության»:

երկրներ¹⁵⁵: Ակնկալվում է, որ դրամական փոխանցումների ծավալների աճը շարունակվելու է: Հետևաբար, այդ գումարներն առավել օգտակար դարձնելը պետք է լինի ստացող երկրների քաղաքականության առանցքային խնդիրներից մեկը: Այս ոլորտի քաղաքականության հիմնական սկզբունքները պետք է ներառեն ֆինանսական կազմակերպություններին և միգրանտներին ներկայացվող պահանջների կարգավորումը, այդ պահանջները կիրառելու համար անհրաժեշտ կարողությունների ընդլայնումը և դրամական փոխանցումների ֆորմալացումը:

Բանկերին և ֆինանսական այլ հաստատություններին, ինչպես նաև գումարներ ուղարկող միգրանտներին ներկայացվող պահանջների կարգավորումը պետք է հիմնված լինի իրավական դրույթների վրա: Իրավական այդ դրույթները պետք է կարգավորեն արտարժույթի փոխանակման հարցերը և պարունակեն հետևյալ կարևոր տարրերը՝ արտարժույթի փոխանակման արտոնազրի դիմումներ, արտարժույթով որոշ գործարքներ կատարելու համար նախապայմաններ և պայմաններ, ինչպես նաև կեղծ փողի հետ վարվելու կարգ: Պետք է նաև ապահովվի Ազգային /Կենտրոնական/ Բանկի վերահսկողական դերը: Գործարքների մասին տեղեկացման պարտավորությունը պետք է հիմնված լինի իրավական դրույթների վրա, որոնցում հստակ նշվում են ծավալները, ժամկետները, ժամկետային սահմանափակումները և տեղեկացման ձևերը:

Արտասահմանյան ներդրումների և դրամական փոխանցումների կարգավորման նպատակն է բարձրացնել դրանց թափանցիկությունը, ինչը գնալով ավելի ու ավելի մեծ ուշադրության է արժանանում ողջ աշխարհում, հատկապես փողերի լվացման դեմ պայքարի առումով: Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ գումարներ ուղարկելու համար օգտագործվող բոլոր ոչ ֆորմալ համակարգերի լրիվ արգելումը կարող է դրանք ավելի խորը ընդհատակ մղել: Կառավարության քաղաքականության նպատակը պետք է լինի գտնել հավասարակշռություն ֆինանսական չարաշահումները նվազագույնի հասցնելու նպատակով պատշաճ մակարդակով կարգավորում իրականացնելու և արդյունավետ ու մատչելի տրանսֆերտային ծառայությունները խրախուսելու միջև: Բացի այդ, կարգավորման և վերահսկողության քաղաքականությունը չպետք է սահմանափակի դրամական փոխանցումները՝ գները բարձրացնելու և ֆինանսական ծառայությունների մատչելիությունը նվազեցնելու միջոցով: Եվ վերջապես. կարևոր է, որ կարգավորման մեխանիզմները համապատասխանեն տեղական և ազգային կարողություններին, որպեսզի դրանք կիրառելի լինեն:

Ֆորմալացումը նաև երկարաժամկետ օգուտներ է բերում երկրի տնտեսությանը՝ գումարներ ուղարկողներին ներգրավելով ֆինանսական համակարգի մեջ, որտեղ մատուցվում են նաև այլ ծառայություններ՝ խնայողական հաշիվներ, վարկեր և ապահովագրություն: Այս պրակտիկան կարող է փոխել գումարներ ուղարկողի կամ ստացողի ֆինանսական վարքագիծը: Պետությունը պետք է մտածի նաև ժամանակավոր միգրացիան խրախուսելու մասին, այն է՝ երբ միգրանտներն արտասահմանում որոշ սահմանափակ ժամանակ աշխատելուց հետո վերադառնում են հայրենիք: Իդեալական տարբերակում դա կնպաստի

¹⁵⁵ Համաշխարհային Բանկի «Գլոբալ տնտեսական հեռանկարներ 2006»:

արտասահմանում ձեռք բերված նոր հմտությունների ներմուծմանը Հայաստան և մշտական միգրացիային բնորոշ «ուղեղների արտահոսք» երևույթի դեմ պայքարին¹⁵⁶:

Դրամական փոխանցումների հետ անմիջական կապ ունեն արտարժույթի ներմուծման և արտահանման խնդիրները: Արտարժույթի փոխանակման ռեժիմը Հայաստանում կարգավորվում է «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» օրենքով և Կենտրոնական բանկի կարգերով: Մասնավորապես, Կենտրոնական բանկի՝ «Արժույթային վերահսկողության մասին» կարգը ռեզիդենտներին և ոչ-ռեզիդենտներին թույլ է տալիս անսահմանափակ քանակով արտարժույթ ներմուծել երկիր: Երկրից դուրս գալուց ֆիզիկական անձինք կարող են իրենց հետ տանել մինչև 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ արտարժույթով: 10.000 ԱՄՆ դոլարը գերազանցող գումարները կարող են փոխանցվել միայն մասնագիտացված և լիցենզավորված կազմակերպությունների միջոցով¹⁵⁷:

13.1 ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐԸ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Չեխիայի Հանրապետությունում կապիտալի հոսքը կարգավորվում է «Արտարժույթի փոխանակման մասին», «Չեխիայի ազգային բանկի մասին» օրենքներով և համապատասխան հրամանագրերով¹⁵⁸: «Արտարժույթի փոխանակման մասին» օրենքը Չեխիայի ֆինանսների նախարարությանը և Չեխիայի ազգային բանկին իրավունք է տալիս կանոնները փոփոխել հրամանագրերի միջոցով: «Արտարժույթի փոխանակման մասին» օրենքի համաձայն, միջազգային վճարումները և փոխանցումները կարող են իրականացվել միայն արտարժույթի փոխանակմամբ զբաղվող կազմակերպությունների միջոցով, որոնք ունեն բանկային կամ մեկանգամյա արտոնագրեր, կամ էլ արտարժույթի փոխանակման արտոնագրեր: Արտարժույթի փոխանակման արտոնագրերը տրվում են Ազգային բանկի կողմից: Օրենքը նաև սահմանում է հաշվետվության ձևերը որոշ վճարումների դեպքում: «Արտարժույթի փոխանակման մասին» օրենքի դրույթները արտարժույթի փոխանակմանն առնչվող ամենակարևոր կանոններն են, քանի որ դրանք տարածվում են ինչպես Չեխիայի բնակիչների, այնպես էլ այլոց վրա:

¹⁵⁶ «Միգրանտների կողմից ուղարկված դրամական փոխանցումներ. ազդեցությունը զարգացման վրա, ֆինանսական սեկտորի հնարավորությունները և հեռանկարները» թեմայով միջազգային գիտաժողով, Միջազգային զարգացման դեպարտամենտ (DFID) և Համաշխարհային Բանկ, Լոնդոն, Միացյալ Թագավորություն, 2003 թ.-ի հոկտեմբեր: Վերջնական գեկույցը կարելի է գտնել հետևյալ կայքում՝ http://www.livelihoods.org/hot_topics/docs/RemitConfFinal.doc:

¹⁵⁷ Արտարժույթային կարգավորման մասին օրենսդրության բարեփոխումներով նախատեսվում է հանել 10.000 ԱՄՆ դոլարի այս սահմանափակումը:

¹⁵⁸ «Արտարժույթի փոխանակման մասին» օրենք թիվ 219/1995 Coll., 26 սեպտեմբերի, 1995: Հրամանագրեր թիվ 351/2003, 34/2003 Coll. և 434/2002 Coll.:

Հաշվետվություններ կայացնելու պարտավորությունը կախված է գումարի չափից և վճարման տեսակից: Ցանկացած կազմակերպություն պարտավոր է Ազգային բանկին տեղյակ պահել դեպի երկիր կամ երկրից դուրս 1.000.000 կրոնան (մոտ 30.000 եվրո) գերազանցող գումար փոխանցելու մասին: Յուրաքանչյուր վճարմանը վերագրվում է դասիչ, որը ցույց է տալիս վճարման նպատակը:

Չեխիայի Ազգային բանկը լիազորված է վերահսկել լիցենզավորված բոլոր կազմակերպություններին և պատժամիջոցներ կիրառել նրանց հանդեպ: Փողերի լվացման դեմ պայքարի մասին դրույթները, որոնք առաջին անգամ կյանքի էին կոչվել 1996 թ.-ին, ավելի ներդաշնակ դարձան «Քրեական գործունեությունից ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի որոշ միջոցների մասին» օրենքում, ինչպես նաև 2001 թ.-ին «Քրեական դատավարության օրենսգրքում» և «Քրեական օրենսգրքում» փոփոխությունների ընդունումից հետո¹⁵⁹: Ապագայում նախատեսվում է նոր միջոցների կիրառում՝ փողերի լվացման դեմ Եվրամիության նոր հանձնարարականի պահանջները բավարարելու նպատակով:

Այս ոլորտի վարչական դաշտը ներառում է Չեխիայի Ազգային բանկը, Ֆինանսների նախարարությունը և Չեխիայի արժեթղթերի հանձնաժողովը: Ֆինանսական կարգավորողների՝ իրենց առաջնային դերից բացի, այդ մարմինները նաև պատասխանատու են բանկերի, ապահովագրական և միջնորդական կազմակերպությունների մոնիտորինգի համար, որը նրանք կարգավորում են օրենքով: Կասկածելի գործարքները մոնիտորինգի ենթարկելու և դրանց մասին զեկուցելու պատասխանատվությունն ընկնում է բանկերի և լիցենզավորված այլ կազմակերպությունների վրա, իսկ Ազգային բանկը վերահսկում է ֆինանսական կազմակերպությունների կողմից այդ նպատակով կիրառվող գործընթացները: Եթե կասկածելի փոխանցում է նկատվում, ապա բանկը դիմում է Ֆինանսների նախարարության հատուկ բաժին, որն իր հերթին որոշում է, թե ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ օրենքի համաձայն:

Պետք է խոստովանել, որ փողերը փոխանցվում են ոչ միայն բանկերով: Չեխիայի Հանրապետություն և երկրից դուրս գումարներ փոխանցելու համար օգտագործվում են նաև այլ միջոցներ, ինչպիսիք են կորպորացիաները /իրավաբանական անձինք/, փոստային ծառայությունը, «Western Union»-ի նման կազմակերպությունները կամ փողերի փոխանցում իրականացնող, սակայն արտոնագիր չունեցող կազմակերպությունները: Այսուհանդերձ, բանկերը ամենաթափանցիկ կառույցներն են: Բանկերից օգտվելու պրակտիկայի խրախուսումը նպատակ ունի ֆորմալացնել բոլոր վճարումները՝ խիստ լիցենզավորման և օրենքի պարտադիր կիրարկման միջոցով:

14. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

2004թ. «Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգի» ութերորդ գերակա խնդիրն է՝ ստեղծել տեղեկատվական բանկ, որն

¹⁵⁹ «Քրեական գործունեությունից ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի որոշ միջոցների մասին» օրենք թիվ 61/1996, 15 փետրվարի, 1996 թ.:

անհրաժեշտ տվյալներ կապահովի Հայաստանի միգրացիոն իրավիճակի մոնիտորինգի և վերլուծության համար¹⁶⁰։ Մեթոդաբանության առումով, մոնիտորինգը սերտորեն կապված է միգրացիայի վերահսկողության հետ և, ամենայն հավանականությամբ, անհրաժեշտ պայման է պատշաճ քաղաքականություն մշակելու համար։

Շատ երկրներում օտարերկրացիների մասին տարբեր տեսակի տեղեկություններ են հավաքում մի շարք պետական մարմիններ։ Օտարերկրյա այն քաղաքացիները, ովքեր մուտքի արտոնագրի կարիք ունեն, դիմում են Արտաքին գործերի նախարարություն։ Երկիր մուտք գործելիս, օտարերկրացիները ենթարկվում են ստուգումների։ Երկրի ներսում պետական մարմինները մոնիտորինգի են ենթարկում և հաղորդում են տեղեկություններ օտարերկրացիների մասին՝ կախված նրանց գործունեության ոլորտից։ Տեղեկատվական այսպիսի համակարգի ստեղծումը կարող է ֆինանսապես, ինչպես նաև ժամանակի առումով ծախսատար լինել։ Սակայն պետք է հիշել, որ միայն տեղեկատվության ճիշտ հավաքումն ու գնահատումը կարող է հիմք ստեղծել արդյունավետ որոշումներ կայացնելու համար։

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն հետևյալ օտարերկրացիների մասին անհատական տվյալները պահպանվում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ոլորտի լիազորված պետական կառավարման մարմնի կողմից վարվող տվյալների բանկում։

- ☐ ում մուտքի վիզայի տրամադրումը (ժամկետի երկարաձգումը) մերժվում է,
- ☐ ում տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվում
- ☐ ում մուտքը Հայաստանի Հանրապետություն արգելվում է, որպես անցանկալի համարվող օտարերկրացիներ։

Վերոհիշյալ բանկը վարելու համար տեղեկություններ են ներկայացնում ՀՀ Նախագահի աշխատակազմը, ՀՀ ազգային անվտանգության ոլորտի լիազորված պետական կառավարման մարմինը, ՀՀ ոստիկանությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը։ Տվյալների բանկից օգտվելու իրավունք ունեն վերը նշված պետական կառավարման մարմինները, ինչպես նաև սահմանային հսկողություն իրականացնող լիազոր մարմինը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև ՀՀ դատարանները և ՀՀ քրեական հետապնդում իրականացնող մարմինները։ Տվյալների բանկում տեղեկություններ մտցնելու և դրանից օգտվելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն վիզա տրամադրող մարմինները մուտքի վիզա ստացած անձանց

¹⁶⁰ «Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգ. Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն գործընթացների պետական կարգավորման գերակա խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները», կետ 8։

տվյալները մտցնում են համապատասխան տվյալների բանկ, որը վարում է ոստիկանությունը:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի վերջին պարբերության համաձայն, հրավերների հաստատման և հաշվառման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Սակայն նշված չէ մուտքի հրավերների տվյալների որևէ միասնական բանկ ստեղծելու մասին:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի և 18-րդ 6-րդ մասի համաձայն, ժամանակավոր կամ մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիներին հաշվառում է ոստիկանությունը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, ոստիկանությունն իրականացնում է արտաքսված անձանց առանձին հաշվառում, և այդ տվյալները մտցվում են սույն օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասում նշված տվյալների բանկ:

Այսպիսով, առկա է անհատական տվյալների չորս տարբեր հիմքերով ստեղծվող երեք բանկերի համակարգ, որոնք վարում են պետական կառավարման երկու մարմիններ՝ օրենքում նշված այլ մարմինների աջակցությամբ: Անցանկալի համարվող օտարերկրացիների անհատական տվյալների բանկի տվյալներից օգտվելու իրավական հիմնական կարգավորումները սահմանված են օրենքով, իսկ մնացածը ենթադրում է կառավարության կողմից կարգավորում:

Կարծես այդ տվյալների հավաքման և փոխանակման մեխանիզմը կարգավորող ոչ մի իրավական ակտ գոյություն չունի, որը ցանկալի է նախատեսել: Հանրային կարգ ու կանոնը պահպանելու և օտարերկրացիների կողմից կացության պահանջների խախտումները կանխելու հարցում կարևոր դեր է խաղում երկրի տարածքում գտնվող օտարերկրացիների հաշվառումը ոստիկանության տեղական բաժանմունքում: Ոստիկանությունը կարող է իրեն անհրաժեշտ գործառնությունները կատարել օտարերկրացիների հաշվառման թափանցիկ և հստակ կանոնների առկայության դեպքում միայն: Ներկայումս երկրում գտնվող օտարերկրացիների մասին տեղեկություններից օգտվելու ամենալայն հնարավորությունները, կարծես, Ազգային անվտանգության ծառայությանն են: Սակայն, հաշվի առնելով այդ տվյալների նկատմամբ Ազգային անվտանգության ծառայության պարտականությունները սահմանող օրենսդրության բացակայությունը, կարելի է պնդել, որ միգրանտների մասին տվյալները դեռևս խոցելի են: :

Որպես լավ օրինակ կարելի է դիտարկել օտարերկրացիների մասին տեղեկությունների հավաքման Չեխիայի համակարգը: Չեխիայում այսօր գործող էլեկտրոնային համակարգը ներդրվել է 2004 թ. ըստ էության, միացնելով ոստիկանության տարբեր տեղական բաժանմունքներում արդեն կուտակված տվյալների բազաները: Տվյալների գնահատման համար պատասխանատու է Ներքին գործերի նախարարության օտարերկրացիների ոստիկանության վարչության միգրանտների մասին տվյալների հավաքման և մշակման հատուկ բաժինը: Այդ բաժինը հավաքում է ոստիկանության 77 տեղական բաժանմունքների կողմից ուղարկված տեղեկությունները: Մեկ բաժնի կողմից տվյալների

պահպանումը ապահովում է համապատասխան տվյալների հոսքը հետ՝ դեպի տեղական բաժանմունքներ, որոնք այլ կերպ կարող էին տեղյակ չլինել երկրի մյուս մասերում տեղի ունեցող միգրացիոն զարգացումների մասին: Դա նաև ապահովում է համալիր պետական քաղաքականության մշակում: Մինչ կենտրոնացված տվյալների բազայի և մոնիտորինգի հատուկ բաժնի ստեղծումը, Չեխիայի օտարերկրացիների և սահմանապահ ոստիկանության առանձին տեղական բաժանմունքները միշտ չէ, որ իրար տեղեկացնում էին միգրանտների տեղաշարժի մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ միգրանտների ներկայությունը անվտանգության առումով լուրջ հարցեր էր առաջացնում: Իսկ հիմա հատուկ բաժինը կարող է մի տեղ հավաքել տեղեկությունները բոլոր շրջաններից, ինչը թույլ է տալիս որոշել հնարավոր միգրացիոն ուղիները և համապատասխան տեղեկություններ տրամադրել կառավարությանը:

Օտարերկրացիների մասին տվյալների բազաներից կարող են օգտվել միայն սահմանափակ թվով աշխատակիցներ, որոնք օգտագործում են հատուկ ծածկագրեր, ինչը թույլ է տալիս հետևել, թե ով և երբ է օգտվել տվյալների բազայից: Ներքին գործերի նախարարության տեսչական բաժինը և անհատական տվյալների պաշտպանության գրասենյակի տեսչական բաժինը կարող են բացատրություն և հիմնավորում պահանջել՝ տվյալների բազայից օգտվելու յուրաքանչյուր դեպքի համար¹⁶¹:

Ցանկալի է, որ Հայաստանի կառավարության կողմից մշակման ենթակա համապատասխան կարգերում հատուկ ուշադրություն դարձվի տվյալների պաշտպանության և տվյալների բազաներից օգտվելու դեպքերի ստուգումների հարցերին: Դա կարելի է անել տվյալների բազայից օգտվելու յուրաքանչյուր դեպք գրանցելու, իսկ հետո հիմնավորումները ստուգելու միջոցով: Նաև խորհուրդ է տրվում տվյալների բազաներ և պաշտպանության միջոցներ ստեղծել ոչ միայն օտարերկրացիներին վերաբերող տվյալների համար, այլ նաև հատուկ պաշտպանական միջոցներ ձեռնարկել այլ երկրների հետ տվյալների փոխանակման առումով: ԱՊՀ երկրների հետ համագործակցության պայմանագիրը, որին միացել է նաև Հայաստանը, նպատակ ունի պայքարել անկանոն միգրացիայի դեմ, բայց չի պարունակում տվյալների պաշտպանության վերաբերյալ ոչ մի կոնկրետ դրույթ: Փոխարենը, այն ընդամենը նշում է Կողմերի՝ տվյալներ փոխանակելու և անօրինական միգրանտների ռեգիստր կամ տվյալների բազա վարելու պատրաստակամությունը:

¹⁶¹ Այս կարգի ստուգումները տեղի են ունենում ոչ կանոնավոր ձևով: Եթե ոստիկանը օգտվել է տվյալների բազայից, սակայն չի կարող հիմնավորել դրա անհրաժեշտությունը, ապա նա կարող է տուգանվել բավականին մեծ գումարի չափով:

III. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

15. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հայաստանում տվյալների հավաքման և պաշտպանության հարցը կարգավորվում է «Անհատական տվյալների մասին» օրենքով: Օրենքը սահմանում է, որ «պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ...կարող են անհատական տվյալներից օգտվել միայն օրենսդրությամբ սահմանված դեպքերում»¹⁶²: «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով սահմանվել է, որ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված անցանկալի համարվող օտարերկրացիների տվյալների բանկում, 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված մուտքի վիզա ստացած օտարերկրացիների տվյալների բանկում, 11-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հրավերների հաշվառման ընթացքում, 17-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների հաշվառման ընթացքում, 18-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների հաշվառման ընթացքում, ինչպես նաև 36-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արտաքսված օտարերկրացիների հաշվառման ընթացքում օտարերկրացիների, ինչպես նաև այլ անձանց անհատական տվյալները մշակելիս այդ անհատական տվյալներն օգտվում են «Անհատական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պաշտպանությունից:

Ենթադրվում է, որ կառավարության կողմից մշակման ենթակա համապատասխան կարգերում կսահմանվեն անհատական տվյալների պաշտպանության հստակ կառուցակարգեր:

15.1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏ

Մարդու իրավունքներին վերաբերող համաձայնագրերը անձի մասնավոր կյանքին անդրադառնում են որպես մարդու հիմնարար իրավունքներից մեկին: «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» Հոդված 12-ում ասվում է. «Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական միջամտության իր անձնական ու ընտանեկան կյանքի նկատմամբ, իր տան, թղթակցության և/կամ իր պատվի ու համբավի դեմ կամայական ոտնձգության: Ամեն ոք ունի օրենքով պաշտպանվելու իրավունք ընդդեմ նման միջամտության կամ ոտնձգության»:

¹⁶² «Անհատական տվյալների մասին» օրենք, Հոդված 7, Պարբերություն 1: «Անհատական տվյալների մասին» օրենքի շրջանակներում «օգտագործում» տերմինը ներառում է տվյալների հավաքումը, մուտքագրումը, փոփոխումը, պաշտպանությունը, տրամադրումը և վերացումը 3-րդ հոդվածում սահմանված կարգով:

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան 1990 թ.-ին անհատական տվյալներ պարունակող համակարգչային ֆայլերի վերաբերյալ ընդունել է հատուկ ուղենիշներ՝ համաձայնության գալով անդամ պետությունների կողմից պահպանվելիք մի շարք սկզբունքների շուրջ¹⁶³։ Գլխավոր Ասամբլեան մասնանշել է, որ այդ սկզբունքները պետք է կիրառվեն առաջին հերթին բոլոր հանրային և մասնավոր համակարգչային ֆայլերի, ինչպես նաև ձեռքով համալրվող մատյանների դեպքում՝ համապատասխան ճշգրտումների ենթակա ընտրովի ընդարձակման միջոցով։

«Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան» անդրադառնում է տվյալների պաշտպանության հարցին՝ ելնելով արտահայտվելու ազատության հետ դրա առնչությունից¹⁶⁴։ Եվրոպայի Խորհուրդը նույնպես խրախուսում է երկրների կողմից միացյալ ջանքերի գործադրումը տեղեկատվական հոսքի և անձի մասնավոր կյանքի հիմնարար իրավունքի բախումը կանխելու ուղղությամբ։ 1981 թ., Եվրոպայի Խորհուրդն ընդունել է «Անհատական տվյալների ավտոմատացված մշակման հարցում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան¹⁶⁵։ Հարկ է նշել, որ 1985 թ. ուժի մեջ մտած այս Կոնվենցիան առաջին պարտավորեցնող միջազգային փաստաթուղթն է, որով անձը պաշտպանվում է անհատական տվյալների չարաշահումից և կարգավորվում է անձնական տեղեկատվության միջազգային հոսքը։ Այն արգելում է, համապատասխան իրավական երաշխիքների բացակայության պայմաններում, այսպես կոչված «զգայուն» տվյալների մշակումը, եթե դրանք կապված են անհատի ռասայական, քաղաքական, առողջական, կրոնական, սեռական կյանքի հետ, կամ եթե առնչվում են նրա քրեական անցյալին։ Կոնվենցիան նաև երաշխավորում է տեղեկատվության արխիվացման մասին իմանալու, և, անհրաժեշտության դեպքում, նրա մեջ ուղղումներ մտցնելու իրավունքը։ Նպատակահարմար է համարվում, որ Հայաստանի կառավարությունը քննության առնի «Անհատական տվյալների ավտոմատացված մշակման հարցում անհատների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի ստորագրման հարցը և ուղիներ մշակի ազգային օրենսդրության մեջ դրա դրույթները կիրառելու համար։

15.2. ՏԿՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԵԽՒՍՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վերստին դառնանք Չեխիայի Հանրապետության օրինակին՝ համեմատական անցկացնելով տվյալների պաշտպանության հարցը կարգավորող ընդհանուր կանոնների և սկզբունքների միջև։ Չեխիայի Հանրապետությունը տվյալների պաշտպանության իր առաջին կանոնակարգերը ներմուծեց 1992-թ.-ին՝

¹⁶³ «ՄԱԿ-ի ուղենիշները անհատական տվյալների համակարգչային ֆայլերի վերաբերյալ»,

Գլխավոր ասամբլեա (1990 թ.)։

¹⁶⁴ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիա» (1950 թ.), Արձանագրություն թիվ 11, Հոդված 10, պարբերություն 2։

¹⁶⁵ Կոնվենցիա թիվ 108 Անհատական տվյալների ավտոմատացված մշակման հարցում անհատների պաշտպանության մասին» (1981 թ.)։

հիմնովին ելնելով «Անհատական տվյալների ավտոմատացված մշակման հարցում անհատների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի դրույթներից¹⁶⁶։ Այդուհանդերձ, օրենքներում առկա խոշոր բացթողումներից մեկն այն էր, որ օրենքը չէր սահմանել համապատասխան իրականացնող մարմին, դրանով իսկ խափանելով նախանշված արդյունքներին հասնելը։

Միաժամանակ, տվյալների պաշտպանության ոլորտը լիովին չկանոնակարգված չմնաց։ Մի շարք այլ օրենքների (օրինակ, «Ոստիկանության մասին» օրենքի, կամ Ներքին գործերի կամ Առողջապահության նախարարությունների կանոնակարգերի) իրավական դրույթներով սահմանվում էին որոշակի ընթացակարգեր։ Օրինաստեղծ մարմինները 2000 թ.-ին ներմուծեցին նոր օրենք «Անհատական տվյալների պաշտպանության մասին», որով այնպիսի հասկացությունների վերաբերյալ ճշգրիտ սահմանումներ առաջարկվեցին, ինչպիսիք են՝ անհատական տվյալները, «զգայուն» տվյալները կամ անանուն տվյալները, և անհատական տվյալների մշակումն և հավաքումը¹⁶⁷։ Այն հստակորեն ուրվագծում է վարչական կառույցի շրջանակները, այդ թվում՝ Անհատական տվյալների պաշտպանության գրասենյակի հիմնումը։ Այն առանձնանշում է տվյալների հավաքմամբ զբաղվող բոլոր սուբյեկտների պարտականությունները (այդ թվում՝ անհատների), ինչպես նաև տվյալների հավաքման ու պաշտպանության հետ կապված ընթացակարգերը։ Օրենքը նաև սահմանում է պատժամիջոցներ և Անհատական տվյալների պաշտպանության գրասենյակին լիազորում է կատարել տվյալներ հավաքողների գրանցում և նրանց գործունեության վերահսկողություն։

Կան երեք գործոններ, որոնք գրավական դարձան ներկայիս օրենքի ներմուծման համար։ Նախ, մարդու իրավունքներին առնչվող միջազգային համաձայնագրերից բխում էին մասնավոր/անձնական կյանքի պաշտպանությանն առնչվող պարտավորություններ։ Երկրորդ, չէի ղեկավարները ցանկանում էին օրենքը ներդաշնակեցնել Եվրամիության օրենսդրությանը, այդ թվում՝ անհատական տվյալների պաշտպանությանը վերաբերող եվրոպական հանձնարարականին¹⁶⁸։ Նշված հանձնարարականի ընդգրկումը Չեխիայի ազգային օրենսդրության մեջ ԵԽ-ի անդամության բազմաթիվ պայմաններից մեկն էր։ Եվ երրորդ, Հայաստանի առումով ամենակարևոր գործոնը՝ անհատական տվյալների պաշտպանությունը նախապայման է դարձել տվյալների միջազգային փոխանակում իրականացնելու համար։ Միջազգային միգրացիայի ոլորտում սա առանձնապես կարևոր է ընդհանուր արտոնագրային քաղաքականության հիման վրա տվյալների տրամադրման, անկանոն միգրանտների կամ արտաքսված անձանց դեպքերում։

¹⁶⁶ «Տեղեկատվական համակարգերում տվյալների պաշտպանության մասին» թիվ 256/1992 օրենքը վերջին իրավական ակտերից էր, որն ընդունել էր ժամանակին Չեխոսլովակիայի Դաշնային Հանրապետության Դաշնային Ասամբլեան։

¹⁶⁷ «Անհատական տվյալների պաշտպանության մասին օրենք և որոշ այլ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին» օրենք թիվ 101/2000, 4 ապրիլի, 2000 թ.։

¹⁶⁸ ԵԽ հանձնարարական 95/46, 24 հոկտեմբերի, 1995 թ.։

Վտանգ կա, որ տվյալների պաշտպանության ոլորտում գործող ոչ ադեկվատ իրավական դաշտը կարող է հանգեցնել Հայաստանի՝ այլ պետությունների հետ համընդհանուր տեղեկատվական համակարգերից դուրս մնալուն, ինչն իր հերթին կարող է անկանոն միգրացիայի նվազեցմանն ուղղված ջանքերի խափանման պատճառ դառնալ: ԵՄ-ն (այդ թվում՝ Չեխիայի Հանրապետությունը) և արտերկրի բազմաթիվ այլ պետություններ մեծագույն պատասխանատվությամբ են մոտենում անհատական տվյալների միջազգային փոխանցումների պայմանների կանոնակարգմանը: Ասել է թե՛ Հայաստանը կարող է զրկվել նման պետություններից հայցված տեղեկատվությունը ստանալու հնարավորությունից, եթե համապատասխան մարմիններն այն եզրակացության գան, որ Հայաստանն ի գործու չէ երաշխավորել փոխանցվող տվյալների բավարար պաշտպանվածությունը:

IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անհրաժեշտ է վերանայել իմիգրացիոն և էմիգրացիոն օրենսդրության հետագա կոնսոլիդացիայի հնարավորությունը: Դա կվերացնի օրենքներում և այլ իրավական ակտերում տեղ գտած հակասություններն ու անհամաձայնությունները և կհստակեցնի պետական տարբեր մարմինների երբեմն համընկնող պարտականությունները:
2. Անհրաժեշտ է ստեղծել թափանցիկ վարչական կառույց, որում հստակ սահմանված են միգրացիոն կարգավորման մեջ ներգրավված տարբեր պետական մարմինների և վարչությունների պարտականությունները: Մասնավորապես, անհրաժեշտ է հստակ տարանջատել Տարածքային կառավարման և Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունների գործառնությունները
3. «Օտարերկրացիների մասին» նոր օրենքով Հայաստանում օտարերկրացիների հաշվառման հստակ կարգ սահմանելու իրավունքը վերապահվել է ՀՀ կառավարությանը: Ողջամիտ կլինե՞ր այդ կարգին վերաբերող հիմնական դրույթները սահմանել օրենքով:
4. Ցանկալի է իմիգրացիոն և էմիգրացիոն օրենսդրության մեջ աշխատանքի թույլտվությունների մասին կանոններում հստակեցնել աշխատանքի թույլտվությունների վերահսկողություն իրականացնելու կարգը:
5. Ցանկալի է արագացնել «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի ընդունումը:
6. «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում կամ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել՝ ներառելով օտարերկրացիների մասին տվյալների հավաքմանը և պետական տարբեր մարմինների, ինչպես նաև այլ երկրների հետ տվյալների փոխանակմանն առնչվող լրացուցիչ դրույթներ:
7. Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է քննության առնի «Անհատական տվյալների ավտոմատացված մշակման հարցում անհատների պաշտպանության մասին» 1981 թ.-ի Եվրոպական կոնվենցիայի ստորագրման հարցը:

Միջազգային կոնվենցիաներ, դաշնագրեր և համաձայնագրեր

1. «Աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիա: Ընդունվել է 1990 թ.-ի դեկտեմբերի 18, ուժի մեջ է մտել 2003 թ.-ի հուլիսի 1-ին:
2. «Աշխատանքային միգրանտների իրավական կարգավիճակի մասին» եվրոպական կոնվենցիա: Ընդունվել է 1977 թ.-ի նոյեմբերի 24-ին, ուժի մեջ է մտել 1983 թ.-ի մայիսի 5-ին:
3. Աշխատանքի միջազգային կազմակերպության «Աշխատանքի նպատակով միգրացիայի մասին» կոնվենցիա: Ընդունվել է 1949 թ.-ի հուլիսի 1-ին:
4. Աշխատանքի միջազգային կազմակերպության «Աշխատանքային միգրանտների մասին կոնվենցիա. լրացուցիչ դրույթներ»: Ընդունվել է 1975 թ.-ի հունիսի 26-ին:
5. «Աշխատանքային միգրացիայի և աշխատանքային միգրանտների սոցիալական պաշտպանության ոլորտներում համագործակցության մասին» ԱՊՀ համաձայնագիր: Ընդունվել է 1994 թ.-ի ապրիլի 15-ին:
6. «Ապօրինի միգրացիայի դեմ պայքարում ԱՊՀ երկրների միջև համագործակցության մասին» համաձայնագիր: Ընդունվել է 1998 թ.-ի մարտի 6-ին:
7. «Վիզաների փոխադարձ ճանաչման մասին» ԱՊՀ համաձայնագիր: Ստորագրվել է 1992 թ.-ի հոկտեմբերի 9-ին:
8. «ՀՀ տարածքում ՌԴ սահմանապահ զորքերի կարգավիճակի և գործունեության պայմանների մասին» Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև համաձայնագիր: Ստորագրվել է ուժի մեջ է մտել 1992 թ.-ի սեպտեմբերի 30-ին:
9. «Համաձայնագիր Հայաստանի կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև իրենց պետությունների սահմաններից դուրս աշխատող Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին», ստորագրվել է 1995 թ.-ի հունիսի 17-ին: Ուժի մեջ է մտել 1997 թ.-ի մարտի 12-ին:
10. «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև իրենց պետությունների սահմաններից դուրս աշխատող քաղաքացիների ժամանակավոր աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին»: Ստորագրվել է 2000 թ.-ի հուլիսի 19-ին: Ուժի մեջ է մտել 2001 թ.-ի մայիսի 24-ին:
11. «ՀՀ և Բուլղարիայի Հանրապետության միջև հանձնման մասին» պայմանագիր: Ստորագրվել է 1995 թ.-ի ապրիլի 10-ին: Ուժի մեջ է մտել 1997 թ.-ի դեկտեմբերի 7-ին:
12. «ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև կամավոր վերաբնակեցման գործընթացի կարգավորման մասին» համաձայնագիր: Ստորագրվել է 1997 թ.-ի օգոստոսի 29-ին: Ուժի մեջ է մտել 1999 թ.-ի մարտի 4-ին:
13. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր», Նյու Յորք, 16 դեկտեմբերի, 1966 թ.: Ուժի մեջ է մտել 1976 թ.-ի մարտի 23-ին:
14. «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր», Նյու Յորք, 19 դեկտեմբերի, 1966 թ.: Ուժի մեջ է մտել 1976 թ.-ի հունվարի 3-ին:
15. «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա», 21 դեկտեմբերի, 1965 թ.: Ուժի մեջ է մտել 1969 թ.-ի հունվարի 4-ին:
16. «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա», 18 դեկտեմբերի, 1979 թ.: Ուժի մեջ է մտել 1981 թ.-ի սեպտեմբերի 3-ին:

17. «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա», 10 դեկտեմբերի, 1984 թ.: Ուժի մեջ է մտել 1987 թ.-ի հունիսի 26-ին:
18. «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա», 20 նոյեմբերի, 1989 թ.: Ուժի մեջ է մտել 1990 թ.-ի սեպտեմբերի 2-ին:
19. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա», Եվրոպական պայմանագիր 005, Հռոմ, 4 նոյեմբերի, 1950 թ.:
20. «Հանձնման մասին եվրոպական կոնվենցիա», Եվրոպական պայմանագիր 024, Փարիզ, 13 դեկտեմբերի, 1957 թ.:
21. «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիա», 1 փետրվարի, 1995 թ.: Ուժի մեջ է մտել 1998 թ.-ի փետրվարի 1-ին:
22. «Աշխատանքային միգրացիայի և աշխատանքային միգրանտների սոցիալական պաշտպանության ոլորտներում համագործակցության մասին» մոսկովյան համաձայնագիր, Մոսկվա, 15 ապրիլի 1994:
23. «Ապօրինի միգրացիայի դեմ պայքարում ԱՊՀ երկրների միջև համագործակցության մասին» համաձայնագիր, Մոսկվա, 6 մարտի, 1998 թ.:
24. «Աշխատանքի նպատակով միգրացիայի մասին» կոնվենցիա, 1949 թ.:
25. «Աշխատանքային միգրանտների մասին կոնվենցիա. Լրացուցիչ դրույթներ», 1975 թ.:
26. «Համաձայնագիր Հայաստանի կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև իրենց պետությունների սահմաններից դուրս աշխատող Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին», 17 հունիսի, 1995 թ.:
27. «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև իրենց պետությունների սահմաններից դուրս աշխատող քաղաքացիների ժամանակավոր աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին», 19 հուլիսի, 2000 թ.:

Հայաստանի Հանրապետության իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
2. "Օտարերկրացիների մասին" ՀՀ օրենք: Ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 25-ին:
3. «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» 1994 թ օրենք: Ուժը կորցրել է 2007 թվականի փետրվարի 3-ից:
4. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենք: Ընդունվել է 1995 թ.-ի նոյեմբերի 6-ին:
5. «Փախստականների մասին» օրենք: Ընդունվել է 1999 թ.-ի մարտի 3-ին:
6. «Քաղաքական ասպատանի մասին» օրենք: Ընդունվել է 2001 թ.-ի սեպտեմբերի 26-ին:
7. «ՀՀ Քրեական օրենսգիրք»: Ընդունվել է 2003 թ.-ի ապրիլի 18-ին:
8. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք»: Ընդունվել է 1985 թ.-ի դեկտեմբերի 6-ին:
9. «Քրեական դատավարության օրենսգիրք»: Ընդունվել է 1998 թ.-ի հուլիսի 1-ին:
10. «Լեզվի մասին» օրենք: Ընդունվել է 1993 թ.-ի ապրիլի 17-ին:
11. «Պետական տուրքի մասին» օրենք: Ընդունվել է 1997 թ.-ի դեկտեմբերի 27-ին:
12. «Պետական սահմանի մասին» օրենք: Ընդունվել է 2001 թ.-ի նոյեմբերի 20-ին:
13. «Սահմանապահ գորքերի մասին» օրենք: Ընդունվել է 2001 թ.-ի նոյեմբերի 10-ին:
14. «Լիցենզավորման մասին» օրենք: Ընդունվել է 2001 թ.-ի մայիսի 30-ին:
15. «ՄԻԱՎ-ից առաջացած հիվանդությունների կանխարգելման մասին» օրենք: Ընդունվել է 1997 թ.-ի փետրվարի 3-ին:
16. «Անհատական տվյալների մասին օրենք»: Ընդունվել է 2002 թ.-ի հոկտեմբերի 8-ին:
17. «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենք: Ընդունվել է 1994 թ.-ի հուլիսի 31-ին:
18. «Աշխատանքային օրենսգիրք»: Ընդունվել է 2004 թ.-ի նոյեմբերի 9-ին:

19. «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» օրենք: Ընդունվել է 1996 թ.-ի դեկտեմբերի 26-ին:
20. «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» օրենք: Ընդունվել է 1993 թ.-ի սեպտեմբերի 2-ին:
21. «Հողային օրենսգիրք»: Ընդունվել է 2001 թ.-ի մայիսի 2-ին:
22. «Հյուպատոսական ծառայության մասին» օրենք: Ընդունվել է 1996 թ.-ի մայիսի 29-ին:
23. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում ««Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» օրենքի պահանջների կիրառման միջոցառումների մասին», թիվ 459, 23 սեպտեմբերի, 1994 թ.:
24. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում «Անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության անձնագրի նմուշը հաստատելու մասին», թիվ 821, 25 դեկտեմբերի, 1998 թ.:
25. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում ««Քաղաքացիության մասին» օրենքի պահանջների կատարման միջոցառումների մասին», թիվ 192, 25 հունիսի 1996 թ.:
26. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում «Հայաստանի Հանրապետության տարածքում փախստականների ազատ տեղաշարժի և բնակություն հաստատելու կարգի մասին», թիվ 524, 4 փետրվարի, 2000 թ.:
27. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում «Փախստականի վկայական տրամադրելու կարգի մասին», թիվ 594, 4 հուլիսի, 2001 թ.:
28. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում «Միգրացիոն գործակալության կանոնակարգը հաստատելու մասին», թիվ 1898, 28 նոյեմբերի, 2002 թ.:
29. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում ««ՄԻԱՎ-ից առաջացած հիվանդությունների կանխարգելման մասին» օրենքի պահանջների կատարման միջոցառումների մասին», թիվ 301, 24 հուլիսի, 1997 թ.:
30. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում «ՄԻԱՎ-ի դեմ բուժում ստանալու նպատակով օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու կարգը հաստատելու մասին», թիվ 284, 12 ապրիլի, 2001 թ.:
31. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի կանոնակարգ «Արժույթային կարգավորման մասին», կանոնակարգ թիվ 8, 2 ապրիլի, 2002 թ.:
32. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում թիվ 821, 25 դեկտեմբերի, 1998 թ.:
33. «Անհատական տվյալների ավտոմատացված մշակման հարցում անհատների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա թիվ 108, 1981 թ.:

Չեխիայի Հանրապետության իրավական ակտեր

1. Օրենք թիվ 326/1999 Coll. «Օտարերկրացիների կացության մասին» և փոփոխություններ այլ օրենքներում:
2. Օրենք թիվ 455/1991 Coll. «Առևտրային լիցենզավորման մասին»:
3. Օրենք թիվ 274/2003 «Հանրային առողջության պաշտպանության մասին»:
4. Կանոնակարգ թիվ 274/2004 «Հանրային առողջությանը սպառնացող հիվանդությունների մասին»:
5. Օրենք թիվ 435/2004 Coll. «Զբաղվածության մասին»:
6. Օրենք թիվ 65/1965 «Աշխատանքային օրենսգիրք»:
7. Օրենք թիվ 589/1992 «Ընդհանուր սոցիալական ապահովության մասին»:
8. Օրենք թիվ 219/1995 Coll. «Արտարժույթի փոխանակման մասին», 26 սեպտեմբերի, 1995 թ.:
9. Որոշում թիվ 434/2002 Coll. «Արտարժույթի փոխանակման արտոնագրի մասին»:
10. Օրենք թիվ 61/1996 «Քրեական գործունեությունից ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի որոշ միջոցների մասին», 15 փետրվարի, 1996 թ.:
11. Օրենք թիվ 101/2000 «Անհատական տվյալների պաշտպանության մասին», 4 ապրիլի, 2000 թ.:

ՀՀ օրենքների նախագծեր

1. «Բմիգրացիայի մասին» օրենքի նախագիծ:
2. «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագիծ:
3. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի մասին» օրենքի նախագիծ:

Հայեցակարգեր, ուսումնասիրություններ և գրքեր

1. «Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգ»: Ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, 2004 թ.-ի հունիսի 25-ին:
2. «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում սահմանային վերահսկողությունը առաջնային և երկրորդային հսկողության (ինսպեկցիա) համակարգի միջոցով իրականացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման հայեցակարգ:
3. «ՀՀ քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի մասին» ՀՀ օրենքի հայեցակարգ:
4. «Բմիգրացիայի մասին» ՀՀ օրենքի հայեցակարգ:
5. «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» ՀՀ օրենքի հայեցակարգ:
6. «Միգրացիոն օրենսդրության և պրակտիկայի միջազգային համեմատական ուսումնասիրություն (Բոլանդիայի օրինակը)», Միգրացիայի միջազգային կազմակերպություն:
7. «Անկանոն միգրացիան և Հայաստանից միգրանտների անօրինական սահմանափակումները», Միգրացիայի միջազգային կազմակերպություն, Երևան, 2001 թ.:
8. «Սահմաններն ու խտրականությունը Եվրամիությունում», Ռիչարդ Խոլինսկի, Բմիգրացիոն իրավաբանների ընկերակցություն, Միգրացիոն քաղաքականության խումբ, 2002 թ.:
9. Աշխատանքային միգրացիայի ոլորտի քաղաքականություն մշակողների գիտաժողովի նյութեր, 86-րդ նիստ, MC/INF/267, Միգրացիայի միջազգային կազմակերպություն, 6 նոյեմբերի, 2003 թ.:
12. «Միջազգային միգրացիոն միտումներ», Համաշխարհային տնտեսական և սոցիալական ուսումնասիրություն (E/2002/75/Rev.1/Add.1, ST/ESA/291/Add.1), Միավորված ազգերի կազմակերպություն, 2004 թ.:
13. «Ռեէմիգրացիա. Քաղաքականությունն ու պրակտիկան Եվրոպայում», Միգրացիայի միջազգային կազմակերպություն, Ժնև, հունվար 2004 թ.:
14. «Միգրանտների կողմից ուղարկված դրամական փոխանցումներ. ազդեցությունը զարգացման վրա, ֆինանսական սեկտորի հնարավորությունները և հեռանկարները» թեմայով միջազգային գիտաժողով, Միջազգային զարգացման դեպարտամենտ (DFID) և Համաշխարհային Բանկ, Լոնդոն, հոկտեմբեր 2003 թ.:

Հարցազրույցների ցանկ

1. Անդրեա Բարսովա, Չեխիայի կառավարության Մարդու իրավունքների հանձնաժողով, 18 հունվարի, 2005 թ.:
2. Պավլա Բուկովա, Չեխիայի քաղաքացիության, քաղաքացիական և մարդու իրավունքների խորհուրդ, 28 փետրվարի, 2005 թ.:
3. Պետրա Բուսկովա, Օտարերկրացիների զբաղվածության վարչություն, Չեխիայի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 2 դեկտեմբերի, 2004 թ.:
4. Պավել Չիզինսկի, Չեխիայի քաղաքացիության, քաղաքացիական և մարդու իրավունքների խորհուրդ, 28 փետրվարի, 2005 թ.:
5. Եվա Դանիսովա, Չեխիայի կառավարության Միգրացիոն տվյալների հավաքման և մշակման բաժին, 18 փետրվարի, 2005 թ.:
6. Իրինա Դավլյան, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալության միգրացիոն քաղաքականության վարչության պետ, դեկտեմբեր 2004թ.:
7. Գագիկ Գևորգյան, ՀՀ Վիճակագրության պետական խորհուրդ, 7 դեկտեմբերի, 2004 թ.:
8. Յարոսլավ Յիրիկ, Չեխիայի Հանրապետության Օտարերկրացիների գրանցման վարչություն, 20 հունվարի, 2005 թ.:
9. Յան Կուցերա, Չեխիայի Հանրապետության օտարերկրացիների և սահմանապահ ոստիկանության բաժնի պետ, 3 մարտի, 2005 թ.:
10. Քրիստին Ռումա, Բելգիայի ազգային ռեգիստրի ղեկավար, 26 հունվարի, 2005 թ.:
11. Լիլիթ Սարգյան, Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության Հյուպատոսական վարչության միգրացիայի բաժնի վարիչ, 15 դեկտեմբերի, 2004 թ.:
12. Լիլիթ Շաքարյան, ՀՀ Արտաքին գործերի նախարարության մարդու իրավունքների բաժին, 15 դեկտեմբերի, 2004 թ.:
13. Յոնգվի Շիբել, Ծրագրերի ղեկավար, միգրացիոն քաղաքականության խումբ, 27 փետրվարի, 2005 թ.:
14. Լյուսի Մլադկովա, Չեխիայի Հանրապետությունում Միգրացիայի միջազգային կազմակերպության առաքելության ղեկավար, 14 հունվարի, 2005 թ.:
15. Միլոսլավ Սմետանա, Չեխիայի Հանրապետության Օտարերկրացիների և սահմանապահ ոստիկանության արտաքին հարաբերությունների բաժնի պետ, 4 մարտի, 2005 թ.:
16. Գերթ դե Վուլդեր, Բելգիայի ներգաղթի վարչության կենտրոնական, 27 հունվարի, 2005 թ.:
17. Գագիկ Եգանյան, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալության պետ, 9 դեկտեմբերի, 2004 թ.:

Քաղվածք

Տարածքային կառավարման նախարարության կանոնադրությունից

Կառավարության որոշում N 633, 19 մայիսի 2005. Հավելված 1. Տարածքային կառավարման նախարարության կանոնադրություն, կետ 7,

Նախարարության նպատակներն ու խնդիրներն են.

ժգ) միգրացիոն գործընթացների պետական կարգավորման քաղաքականության մշակումն ու դրա իրականացման աշխատանքների համակարգումը.

ժդ) 1988-1992 թվականների Ադրբեջանից բռնագաղթված փախստականների և տեղահանված այլ անձանց հասարակության մեջ ինտեգրման քաղաքականության մշակումն ու իրականացումը.

ժե) օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ապաստանի տրամադրման հարցերով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված լիազոր մարմնին վերապահված իրավասությունների իրականացումը, այդ բնագավառի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումը.

ժզ) Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև արտերկրներում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության պետական կարգավորմանն ուղղված քաղաքականության մշակումը և դրա իրականացման կազմակերպումը.

ժկ) միգրացիայի բնագավառում միջազգային, օտարերկրյա կառավարական ու ոչ կառավարական կազմակերպությունների հետ համագործակցության իրականացումը.

ժլ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ներգաղթը խրախուսող պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.

ժթ) անլեգալ միգրացիայի կանխարգելման նպատակով Հայաստանի Հանրապետության համապատասխան նախարարությունների դիվանագիտական ներկայացուցչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ համապատասխան ծրագրերի մշակումն ու իրականացումը :

Քաղվածք

Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն

գործակալության կանոնադրությունից

Կառավարության որոշում N 633, 19 մայիսի 2005. Հավելված 3. Մաս III, Գործակալության գործառույթները:

82

Սույն փաստաթղթում արտահայտված կարծիքները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են, և պարտադիր չէ, որ դրանք համընկնեն ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ-ի երեսնյան գրասենյակի կարծիքներին:

8. Գործակալությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) իր իրավասությունների սահմաններում բնակչության տեղաշարժերի կարգավորման իրականացմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում.

բ) 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված փախստականներին մշտական կացարանով ապահովելու նպատակով ծրագրերի իրականացում.

գ) 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված փախստականներին ՀՀ քաղաքացիության ձեռք բերման, կրթական, առողջապահական, իրավական օգնության և այլ հարցերում աջակցության ապահովում.

դ) փախստականների և բռնի տեղահանվածների խիտ բնակության վայրերում սոցիալական նշանակության տարբեր օբյեկտների շինարարության և զբաղվածության օժանդակությանն ուղղված ծրագրերի իրականացում.

ե) օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ապաստանի տրամադրման դիմումների քննարկում, այդպիսի կատեգորիայի անձանց օրենսդրությամբ սահմանված իրավական, սոցիալական և այլ բնույթի օժանդակության տրամադրում.

զ) պետական կառավարման հանրապետական և տարածքային, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ սահմանամերձ, բարձր լեռնային և աղետի գոտու բնակավայրերի ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված բնակչության վերաբնակեցման ծրագրերի մշակում և իրականացում.

է) միգրացիոն հարցերով բնակչությանը իրավական բնույթի տեղեկատվության տրամադրում.

ը) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններից միգրացիոն գործընթացների վերաբերյալ տեղեկությունների ստացում, դրա համակարգում և տեղեկատվական բանկի ստեղծում.

թ) փախստականների և տեղաշարժված այլ անձանց վերաբերյալ տեղեկատվական բանկի վարում, դրանց վերաբերյալ այլ մարմիններին և կազմակերպություններին սահմանված կարգով տեղեկությունների տրամադրում.

Քաղվածք

ՀՀ կառավարության 2002 թվականի
նոյեմբերի 14-ի N 1823-Ն որոշման N 1 Հավելվածից

Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության Կանոնադրություն

III. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Գործակալությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

ա) գործատուներից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարերկրյա պետությունների համապատասխան մարմիններից տեղեկություններ ստանալը թափուր աշխատատեղերի, ինչպես նաև սպասվելիք կառուցվածքային փոփոխությունների և այլ միջոցառումների մասին, որոնց հետևանքով կարող են լինել աշխատանքից ազատումներ:

բ) աշխատանք փնտրող անձանց ուղեգրելը՝ գործատուների մոտ համապատասխան թափուր աշխատատեղերի առկայության դեպքում:

գ) զբաղվածության ամենամյա պետական ծրագրերի իրականացման համար հատկացված միջոցների՝ ըստ ծրագրերի ուղղվածության օգտագործում:

դ) անձանց ներկայացրած փաստաթղթերի հավաստիությունը պարզելու նպատակով իրավասու մարմիններից նրանց զբաղվածության, կենսաթոշակ ստանալու և պարտադիր սոցիալական ապահովագրական վճարումներ կատարած լինելու մասին տեղեկություններ ստանալը:

ե) վերլուծական հետազոտությունների կատարում, աշխատուժի առաջարկի ու պահանջարկի կանխատեսում:

զ) աշխատաշուկայի վերլուծության և կանխատեսման արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում անվճար ուսուցանվող մասնագիտությունների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:

է) աշխատուժի արտաքին և ներքին տեղաշարժի կարգավորման ուղղված ծրագրերի իրականացում, աշխատանք փնտրող անձանց օժանդակելը՝ ընտրելու հարմար աշխատանք, իսկ գործատուներին անհրաժեշտ մասնագիտություն և որակավորում ունեցող մասնագետներով ապահովելը:

ը) աշխատանք փնտրող անձանց մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ խորհրդատվությամբ ապահովելը:

թ) աշխատանք փնտրող անձանց հաշվառման իրականացում:

ժ) գործազուրկի կարգավիճակ տալը և գործազրկության նպաստ նշանակելը:

ժա) գործազուրկի կարգավիճակի, գործազրկության նպաստի վճարման կասեցում կամ դադարեցում, օրենքով սահմանված դեպքերում հաշվառումից հանելը:

ծբ) անձի կասեցված գործազուրկի կարգավիճակի վերականգնում և գործազրկության նպաստի վճարում.

ծգ) նշանակված, սակայն գործազրկության նպաստ նշանակող մարմնի մեղքով չվճարված, կալանավորված անձի՝ մինչև կալանավորման կամ դատապարտման օրը չստացած, ինչպես նաև նպաստառու գործազուրկի մահվան դեպքում չստացված գործազրկության նպաստի միանվագ վճարման ապահովում.

ծդ) զբաղվածության ամենամյա պետական ծրագրերի նախագծերի մշակում և հաստատվելուց հետո դրանց իրականացման ապահովում.

ծե) գործազուրկների, երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող ու աշխատաշուկայում անմրցունակ աշխատանք փնտրող՝ չզբաղված անձանց մասնագիտական ուսուցման, ինչպես նաև հաշմանդամների աշխատանքային ունակությունների վերականգնման աշխատանքների կազմակերպում.

ծզ) հանրապետական և տարածքային համաձայնեցման կոմիտեների ձևավորման աշխատանքների նախաձեռնում.

ծէ) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման աջակցության նպատակով աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագրերի մշակում և իրականացում՝ հանրապետական ու տարածքային համաձայնեցման կոմիտեների հետ համատեղ.

ծը) այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցում.

ծթ) ձեռնարկատիրական գործունեության պետական գրանցման համար գործազուրկներին և հաշմանդամներին ֆինանսական աջակցության տրամադրում.

ի) վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպմանն աջակցել՝ ապահովելով անհրաժեշտ աշխատուժով.

իա) 12 ամիս գործազրկության նպաստ ստանալու իրավունք և առնվազն 35 տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկներին, որոնց տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալուն մնացել է մինչև 5 տարի, լրացուցիչ սոցիալական երաշխիքների տրամադրման վերաբերյալ առաջարկություն ներկայացնել.

իբ) 12 ամիս գործազրկության նպաստ ստանալու իրավունք և առնվազն 35 տարվա ապահովագրական ստաժ ունեցող այն գործազուրկների, որոնց տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքի լրանալուն մնացել է մինչև մեկ տարի, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետից շուտ կենսաթոշակի անցնելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնել.

իգ) առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկի մահվան դեպքում հուղարկավորությունը կատարած անձին թաղման նպաստի վճարում.

իդ) հանրապետական և տարածքային համաձայնեցման կոմիտեների ներկայացուցիչներին, գրավոր հարցման հիման վրա, զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերի իրականացման մասին տեղեկատվության տրամադրում.

իե) օտարերկրյա պետություններում աշխատանքային գործունեության ծավալման, մասնագիտական ուսուցման ցանկություն ունեցող անձանց իր իրավասության սահմաններում տեղեկատվության տրամադրում և խորհրդատվության իրականացում, ինչպես նաև նրանց և օտարերկրյա պետությունների գործատուների միջև միջնորդության իրականացում.

իզ) տեղեկատվական բազայի ստեղծում և վարում՝ զբաղվածության ոլորտի նպատակային կառավարման, բնակչության զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերի հասցեականության ապահովման, աշխատաշուկայի վերլուծության և կանխատեսման արդյունավետ իրականացման նպատակով.

իէ) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին բնակչության զբաղվածության բնագավառին վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել.

իը) պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների ու հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանակելով համապատասխան տեղեկատվություն.

իթ) նախարարի կամ նախարարի տեղակալի հանձնարարությամբ՝ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի շրջանակներում աշխատաշուկայի կարգավորման համատեղ ծրագրերի իրականացում.

լ) քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկում, դրանց պատասխանելը և ընթացք տալը.

լա) իր իրավասության սահմաններում՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով զբաղվածության ամենամյա պետական ծրագրերի և պահպանման ծախսերի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման գործընթացի իրականացման ապահովում.

լբ) գործակալության բյուջետային և արտաբյուջետային պլանավորման և ֆինանսավորման գործընթացին մասնակցություն.

լգ) գործակալության հաշվապահական հաշվառման վարում.

լդ) զբաղվածության պետական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայտի կազմում և այն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին, իսկ պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի մասով՝ Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ ներկայացնելը.

լե) տարածքային մարմիններից ստացված զբաղվածության ամենամյա պետական ծրագրերի իրականացման համար ծախսված ֆինանսական միջոցների մասին հաշվետվությունների ամփոփում և դրանք Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին, իսկ պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի մասով՝ նաև Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ ներկայացնելը.

լզ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) կազմում, ներդնում և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարում.

լէ) տարածքային մարմիններից ստացված զբաղվածության մասին վիճակագրական հաշվետվությունների ամփոփում և դրանք սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին ու Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն ներկայացնելը.

լը) իր իրավասության սահմաններում՝ զբաղվածության ամենամյա պետական ծրագրերի կատարման նկատմամբ մոնիթորինգի իրականացում.

լթ) աշխատուժի շուկայի վիճակի, զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերի համար ծախսված ֆինանսական միջոցների (տարեկան առնվազն 2 անգամ) մասին տեղեկությունների պարբերաբար հրապարակում՝ զանգվածային լրատվության միջոցներով.

խ) յուրաքանչյուր եռամսյակ նախարարին՝ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության, զբաղվածության ամենամյա պետական և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով իրականացվող ծրագրերի կատարման ընթացքի և մոնիթորինգի մասին հաշվետվություն ներկայացնելը.

խա) մարզկենտրոնում գտնվող տարածքային մարմինների կողմից, որպես մարզային տարածքային կենտրոններ, նաև հետևյալ գործառնությունների իրականացում՝

տվյալ մարզի տարածքային մարմինների կողմից հավաքված՝ աշխատաշուկայի մասին տվյալների ամփոփում և դրանց հիման վրա՝ մարզի աշխատաշուկայի վերլուծության և կանխատեսման կատարում,

տվյալ մարզի տարածքային մարմինների կողմից կազմված զբաղվածության տարածքային ծրագրերի նախագծերի ամփոփում, դրանց հիման վրա զբաղվածության մարզային տարեկան ծրագրերի նախագծերի կազմում և դրանք գործակալության համապատասխան բաժին ներկայացնելը,

տարածքային մարմիններից ստացվող վիճակագրական հաշվետվությունների ամփոփում և դրանք գործակալության համապատասխան բաժին ներկայացնելը:

(8-րդ կետը խմբ. 09.03.06 N 301-Ն)